ՊՕԼԻ-ԹԷՔ

(ՔԵՕՌ-ՕՂԼՈՒ ՀԷՔԵԱԹՆԵՐԻՑ ՄԷԿԸ)

Տաճկերէնից փոխադրեց

ԵՐԳԻՉ ԽԱՅԱԹԸ

(ՍՈՒՔԻԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՋԱՀՐԻԵԱՆՑ)

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ

Տպարան Գ. Ս. Սանոյեանցի.

Типографія К. С. Саноянца, въ Александрополѣ.

1900

ՊՕՂԻ-ԲԷԳ

(ՔԵՕՌ-ՕՂԼՈՒ ՀԷՔԵԱԹՆԵՐԻՑ ՄԷԿԸ)

Տաճկերէնից փոխադրեց

ԵՐԳԻՉ ԽԱՅԱԹԸ

(ՍՈՒՔԻԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՋԱՀՐԻԵԱՆՑ)

10812
109

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Գ. Ս. Սանոյեանցի.

Типографія К. С. Саноянца, въ Александрополѣ.

1900

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Сентября 1899 г.

ԳՐԱԿԱՆ

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐ

ԱՌԱՔԵԼ ԱՂԱՅ ԾԱՏՈՒՐԵԱՆԻՆ

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏՈՎ

ՆՈՒԻՐԷ

ՓՈԽԱԴՐՈՂԸ

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Մոլութիւնն ու հիւանդութիւնը մարդկային խոշոր ախտեր են. ով որ այդ ախտերից մէկի կամ միւսի ձեռքն ընկաւ՝ զօր ու գիշեր հանապազ չարաչար կտանջուի։

Ընթերցասիրութիւնը գրասէր մարդի համար մի մեծ մոլութիւն է, որին մի անգամ անձնատուր լինելով՝ այնուհետև այլ ևս որքան էլ կամենայ, չի կարող օձիքը թօթափել նրա ձեռքից։

Ահա այսպէս է ընթերցասէրների դրութիւնը, որոնք անդադար ձգտում, աշխատում են մի կերպ բաւականութիւն տալ իրանց մտքին և ուղեղին։ Բայց թէ՝ ինչ տեսակ և ինչ ճանապարհով, այս է ահա գլխաւոր հարցն ու խնդիրը։

Բնագէտի համար համարեա այնքան էլ պէտք չէ վէպը, իսկ վիպասանի համար բնագիտութիւնն ու փիլիսոփայութիւնը։ Եւ այսպէս, նոյնը պէտք է հասկանալ գիտութեանց միւս ճիւղերի համար։

Ամենը մի կողմ թողած, վեր առնենք ժողովրդի հասարակ և ստորին դասակարգը, որոնք միջնակարգ և բաւականաչափ ուսում ու կրթութիւն չեն ստացած, կամ բոլորովին անգրագէտ են։ Ուրեմն այդ դասակարգի համար ինչպիսի ընթերցանութեան գրքեր են պէտք բաւականութիւն տալու համար։

Կարծեմ, բոլորը միակերպ և միաձայն պէտք է վըկայեն թէ՝ պարզ և դիւրահասկանալի բարոյական պատ-

մուլթիւններ, վէպեր ու վէպիկներ, որոնք համապատասխան լինեն հասարակ դասակարգի զարգացման ու կրթութեան աստիճանին։

Մենք ևս այդպէս համոզուած լինելով, ժողովրդի ընթերցանութեան համար ընտրեցինք տաճկերէնից հայերէն փոխադրել Քեօռ-օղլու հեքեաթի մի մասը, որ աշխարհահռչակ համբաւ է ստացել, համարեայ՝ ամեն ազգի մէջ։

Քեօռ-օղլին, ըստ Առաքել պատմագրի, ոչ թէ առասպելական անձնաւորութիւն է կամ երևակայութեան ծնունդ, այլ՝ իրական մի բան։ Որովհետև, ըստ նոյն պագմագրի, թէ Քեօռ-օղլին և թէ Մուստաֆայ-բէգը, մօտաւորապէս մեզանից 300 տարի առաջ, այն է՝ ՌԾԴ. կամ 1605 թուին, տաճկաց ու պարսից միապետների դէմ ապստամբող այն «Ջալալիներից» էին, որոնք իրանց հրոսակային խմբերով սարսափ էին տարածել այդ երկու պետութեանց սահմաններում, որոնց քաջագործութեանը ժողովուրդը դիւցազնական կերպարանք տալով՝ իւր ժամանակին ստեղծագործեց, հիւսեց ու նուագեց «Քեօռ-օղլու հեքեաթ» կոչուած երգախառն բանահիւսութիւնը, որը բաժանվում է եօթը ճիւղի կամ մասի, և որը աւանդաբար տարիների ընթացքում եկել մեզ է հասել։

Բայց թէ՝ ո՞վ է այդ հեքեաթի հեղինակը, ե՞րբ կամ ո՞ւր է գրել, մեզ ոչինչ յայտնի չէ։ Միայն այսքանը գիտենք, որ մեր շրջիկ աշուղներից շատերը, մէկը միւսից սովորելով, գիտեն այդ հեքեաթների այս և այն ճիւղը, որոնք ձմեռները գիւղական գոմի օդաներում ասելով, զբաղեցնում են ժողովրդին։

Կամենալով ըստ մեր ոյժերին՝ ժողովրդին մի բարիք ա-

նել, որպէս զի՝ մի ընթերցանութեան վէպ ունենայ ձեռին, և այն՝ սիրային ափեղցփեղ և վայր ի վերոյ տարփանքներից ազատ, որոնցով լիքն է մեր աշուղների պատմածները, հարկ համարեցինք առ այժմ տպագրել տալ սոյն մասը և աշխատել հետզհետէ շարունակաբար լոյս ընծայել և միւս մասերը, սրանցից՝ մի երկուսը նոյնպէս առ ձեռն պատրաստ են։

Խրայամ։

ՊՕՂԻ-ԲԷԳ

(ՔԷՕՌՕՂԼՈՒ ՀԷՔԵԱԹՆԵՐԻՑ ՄԷԿԸ։)

Զարտախլի-Զամլիբէլում բնակուելիս է եղել իր ժամանակին, մօտաւորապէս 300 տարի առաջ, յայտնի քաջահամբաւ մի մարդ, ազգով մահմետական, Ռուշան-Ալի անունով, որ յետոյ մականուամբ կոչվում էր Քէօռ-օղլի։ Երբ ամեն տեղ հռչակվում ու տարածվում է նրա քաջութեան համբաւը՝ մի և նոյն ժամանակ ամեն կողմից սկսում են հաւաքուել նրա մօտ նաև իր նման դիւցազն անձնուրաց 7000 քաջ տղամարդիք։

Քէօռ-օղլին երկար ու ձիգ տարիներ թափառական կեանք վարելուց յետոյ՝ իր հաստատուն բնակավայրը երկրի մէջ ընտրում է Զամլիբէլ հոյակապ անառիկ ամրոցը *)։ Այդ ամրոցի արտաքին տեսքը նմանելիս է ե-

*) Ծանօթ.—Զանազան գաւառներում Քէօռ-օղլուն յատկացրած տեղեր շատ կան։ Մինչև օրս էլ ժողովուրդն ասում է „Քէօռ-օղլու սարը“—„Քէօռ-օղլու բերդը“—„Քէօռ-օղլու մաղարէքը“ և այլն։ Գուցէ ճշմարտութիւնից հեռու չէ, որ Քէօռ-օղլին իւր արշաւանքների ժամանակ երբեմնապէս պատսպարուելիս է եղել այդ անառիկ ու անմատչելի տեղերում։ Բայց թէ՝ Զամլիբէլը Քէօռ-օղլու միակ հաստատուն բնակավայրն է եղել՝ բնաւ տարակոյս չ՚կայ, որովհետև՝ աւանդաբար հաստատվում է, որ Քէօռ-օղլին իւր քաջերով մշտապէս բնակուելիս է եղել այդտեղ։ Միայն խնդիրը նրանում է թէ, Զամլիբէլը ուր է գտնվում։ Ոմանք կարծում են որ Զամ-

դել մի ահռելի վիշապի, որ իւր սուր ժանիքները դուրս ցցած, կոկորդիլոսի նման բերանը բաց արած, կարծես պատրաստւում էր կլանել ամեն անցուդարձ անող ճանապարհորդին։ Ո՞ր մահկանացուն կարող էր յանդգնել անցնելու նրա տակով, առանց որ և է երկիւղ ու սարսուռ զգալու։—Իսկ ներքուստ՝ կարելի էր նմանացնել նրան մի շքեղատեսիլ իշխանական պալատի. որովհետև Քեօռ-օղլին այդտեղ էր զետեղել իւր կանանոցը (հարէմը)։

Ամրոցը բաժանել էր երկու մասի, որի մէկ մասում ընտանիքն էր բնակւում, իսկ միւսում իւր քաջարի ըստուար խումբը։

Քեօռ-օղլին ոչ միայն ցանկանում էր իւր ամրոցը զարդարել ժամանակի փայլուն արդուզարդով, կամ ոսկով ու արծաթով, այլ՝ նրա գլխաւոր բաղձանքն էր ամրոցը լցնել ու ճոխացնել զանազան կողմերից կամաւոր կամ բռնի փախցրած գեղեցկուհիներով։—Թէպէտև՝ նրա ամրոցը ներքուստ զարդարուած էր աւար առած, կամ այլ և այլ միջոցներով ձեռք բերած թանկագին իրեղէններով ու զարդերով, բայց այնու ամենայնիւ՝ նրա պակասորդը լրացնում էին գեղեցկուհեաց նազաճեմ գնացքը ու նրանց քաղցրահնչիւն ծիծաղկոտ խօսակցութիւնները։

Գառնանային Մայիս ամսոյ զով ու պայծառ առաւօտներից մէկն էր։ Փայլուն արևը դեռ նոր էր սփռել

Աւերը գտնւում է Պարսկաստանում Ատրբէջան նահանգում Սալմաստի մօտերքը, իսկ ոմանք գտնում են Տաճկաստան—Սեբաստիայի գաւառում..., բայց թէ ինչպէս ուր էլ և լինէր, այնու ամենայնիւ նրա գոյութիւնը անուրանալի է։

Թարգմանիչ.

իւր ոսկեշող ճառագայթները գեղազարդելու լերանց կատարները։ Բնութիւնը զարթել էր իւր խոր քնից ու առատութիւն տարածել ամեն կողմ։ Երկնակամարի տակ գտնուած բոլոր արարածները, մանաւանդ՝ թռչունները այդ օրը կարծես բնազդմամբ խմբովին դիմում էին դէպի ամրոցը իրանց քաղցրահնչիւն դայլայլիկներով ու ճռուողիւններով, մասնակցելու այն ուրախութեանը, որը կատարուելու էր այն օրը, որովհետև՝ այդ օրը Քեօռօղլու քաջագործութեանց 35 ամեայ տարեդարձն էին տօնելու։

Քեօռ-օղլին իր քաջերի մէջ աչքի առաջ ունենալով Այվազի խելահասութիւնը և նրա վարչական հմտութիւնը, կանչեց իւր մօտ, տալով նրան այդ օրուայ բոլոր անելիքների իրաւունքը ու կառավարութիւնը ասելով.—«Ես այսօր հրաւիրուած եմ հարեմում իմ դեղձանիկների հետ ճաշելու, իսկ՝ դու քաջերիս կը կառավարես ինչպէս հարկն է, իւրաքանչիւրին ըստ իւր արժանաւորութեան ընծաներ պարգևելով»։

Այվազը իր հրամանատարի պատուէրը լսելով, իրանց սովորութեան համեմատ գլուխ խոնարհացրեց և աջ ձեռքը դէպի գետին տանելով ու հանդերձի քղանցքը համբուրելով «Ինշալլահ» արեց և ուրախ տրամադրութեամբ դուրս եկաւ սենեակից։ Այնուհետև՝ նա այլ ևս ժամանակ չը կորցրուց, սկսեց իր ստանձնած պաշտօնը կատարել։

Այդ օրը արտակարգ գեղեցկութիւն էր ստացել ամրոցը։ Ներսի շինութեան պատերը զարդարուած էին թանկագին գորգերով։ Քեօռ-օղլու առանձնասենեակի դռնից—զառճոլթի հետ միասին—կարմիր մահուտ էր

փռուած դէպի հարէմը տանող գծի վերայ։ Ամեն մի քաջ իր տէգը (մզրախը) ցցել էր պարսպի վերայ, որոնց ծայրերին իբրև դրօշակ կապուած էին գոյն գզոյն մետաքսեայ թաշկինակներ, որոնք փողփողում ու ծածանւում էին օդի ծանր ու մեղմ շարժումից։ Այվազն այդ օրը քաջերին խմբով հրաւիրել էր ճաշի. բացատրելով նրանց Քեօռ-օղլու տուած պատուէրը և այդ օրուան նշանակութիւնը։

Արդէն կէս օր էր. Ճաշարանում կարգով նստել էին քաջերը, բոլորը զուգուած ու զարդարուած։ Հազար ու մի տեսակ թռչունների մսերից պատրաստած համեղ խորտիկները վայելում էին և շարունակ ըմպում քաղցր օշարակը։ Մի միայն այդ ուրախութիւնից բացակայ էր Դէլի-Մէօհթարը, որովհետև, Այվազի հրաւէր կարդալիս, Դէլի-Մէօհթարը Քեօռ-օղլու յայտնի արաբական նժոյգի —Ղռաթի մօտ քնած է լինում։ Յանկարծ՝ նա զարթնում է ամբոխի ուրախութեան խլացուցիչ ձայներից, իսկոյն վեր է թռչում տեղից՝ և աչքերը տրորելով դիմում է դէպի սեղանատուն։ Տեսնելով որ Այվազն է սեղանի կառավարիչը, մի արհամարհական հայեացք ձգելով նրա վերայ՝ ասում է.—«Ո՛վ ապերախտ ղասապի որդի Այվազ, երևում է, որ իմ բացակայութիւնը քեզ աւելի մխիթարական էր, որ այդպէս ուրախութիւն ես անում առանց իմ անունը յիշելու»։

Այվազը սաստիկ չարանում է նրա յանդգնօրէն արտասանած խօսքերի վերայ, որ նրան անուանել էր «ղասապի որդի»։ Կիրքը շարժվում է, արիւնը պղտորուած գլուխը խփում, անմիջապէս վեր է թռչում տեղից և մի այնպիսի ապտակ է հասցնում Դէլի-Մէօհթարի երե-

սին, որ արտասուքը ցայտում է նրա աչքերից։ Գիշատիչ վագրի նման աչքերը արիւնով լցուած ու խոժոռուած բացականչում է.—«Քսան ու հինգ տարի է լրիւ, որ Քեօռ-օղլին ինձ բերել է այստեղ, բայց՝ նա մի օր դեռ չէ համարձակուել ինձ «ղասապի որդի» անուանել. այն ինչ՝ դու, անպիտան լղպոր ձիապան, ի՞նչպէս ես վստահանում այդպէս արհամարհական խօսք ասել ինձ»։

Դէլի-Մէօհթարը մնաց շուարած.—ինչ անելիքը չը գիտէր, թէպէտ՝ կարող էր նրա տմարդի վարմունքի փոխարէնը հատուցանել՝ բայց Քեօռ-օղլու երկիւղից մի խօսք անգամ չը կարողացաւ ասել, գիտենալով որ հետևանքը վատ կլինի։ Թշուառը անճարացած՝ երեսը շուռ տուեց, վրէժխնդիր հոգւով մի ինչ որ բան քթի տակին փրնթփնթալով վերադարձաւ իր նախկին տեղը։ Նա միայնակ նստած, ձեռը ճակտին մտածում էր ինքն իրան.—«չը լինէ՞ Այվազի այդ տեսակ համարձակ վարմունքը ինձ հետ, Քեօռ-օղլու ծածուկ դրդմամբ լինի»—և ենթադրում էր.—«դիցուք թէ այդպէս է, ես մենակ ի՞նչ կարող եմ անել, ինչպէ՞ս կարող եմ իմ վրէժը լուծել այդ երկու ամեհի գազաններից. լաւ է հեռանալ այստեղից, գնալ մի ուրիշի մօտ, որ գոնէ նրանց միջոցաւ կարողանամ վրէժխնդիր լինել և իմ պատիւը վերականգնել»։ Երկար մտածելուց յետոյ, դրականապէս վճռեց գնալ և իր հետ տանել Քեօռ-օղլու օդասլաց Ղռաթին։ Իսկոյն և եթ՝ թևերը վեր է քշտում, սկսում է նժոյգի աչքերը տրորել, գլուխը շոյել, բաշը ձգձգել, երեսը համբուրել, մազերը սանտրել, միով բանիւ ամբողջ իրանը ոտից ցգլուխ խոզանակով սրբել—մաքրել, այնպէս որ՝ դարձնում է մի մաքուր և պարզ հայելի. Թամքում է

ու սանձում, պոչը կապում է ճանապարհի յարմար ձեւով, հագնում է իր ճամբորդական թեթև հագուստներից, մէջքն է կապում Դամասկոսի պողովատիկ կեռթուրը ու այլ և այլ զէնքերով զրահաւորւում։ Հուսկ յետոյ՝ կռանում է և Նժոյգի սմբակները համբուրելով՝ ասում. «Ո՜հ, չնաշխարհիկդ Նժոյգ, ես այսքան տարի է որ քեզ ծառայել եմ... այո՛, թէ քեզ և թէ քո տիրոջը հաւատարիմ մնալով, իսկ՝ այսօր իմ բոլոր յոյսը քեզ վերայ է, դու միայն փրկիչ ու ազատիչ պէտք է դառնաս ինձ և այս անիրաւների ձեռքից թօթափես իմ օձիքը»։

Նժոյգը կարծես բնազդմամբ հասկացաւ նրա աղերսալի խնդիրը. պատրաստուեց ու մէջքը կռացրեց և նա մի ակնթարթում թռչելով Նժոյգի քամակը, տէքը ձեռքըն առած, աչքերը վեր բարձրացուց դէպի երկնակամարը ու մտքումը մրմնջաց.—«Ո՛վ երկինք, պահպանէ անտէրունջ ծառայիդ ու մի՛ մատնիր թշնամու ձեռքը»։ այս ասելով այնպէս ուժգին ոտնահարեց Նժոյգին, որ օխտը տարուան կերածը քթից եկաւ և ասպանդակները համարեայ քիչ էր մնում թաղուէին կողերի մէջ։

Խեղճ Նժոյգը սոսկալի հարուածից ստիպուած՝ փրռնչալով ծիծեռնակի արագութեամբ սկսեց սուրալ։

Դէլի-Մէօհթարը մտադիր էր ուղղակի գնալ Թէհրան Արապի մօտ, որ այն ժամանակուայ յայտնի աւազակապետներից մէկն էր. կամ՝ Պօլիս, սուլթանի մօտ, որ գոնէ՝ նրանց մէկն ու մէկի միջոցաւ, որ և է կերպով կարողանար իր վրէժը հակառակորդներից լուծել։ Բայց՝ երկար մտածելուց յետոյ, մտադրութիւնը փոխում է և վճռում գնալ Հնդկաստան Գզիր—օղլի Մուստաֆայ բէ-

գի մօտ, որ Սուլթանի յայտնի հակառակորդ ապստամբներից մէկն էր և աւելի կամքի տէր ու անվեհեր և զօրեղ մարդ էր։

Իւր մէջ որոշումը կայացնելուց յետոյ, ճանապարհը ուղղում է դէպի այն կողմը և կայծակի արագութեամբ՝ Ղռաթի շնորհիւ հասնում է Հնդկաստան։ Մի քանի մղոն հազիւ էր մնացել, որ նա հասնի Մուստաֆայ բէգի բնակարանին, Նժոյգը մի այնպիսի խրխինջ յարձակեց, որ մօտակայ սարերն ու ձորերը արձագանք տուին։ Մինչև անգամ Մուստաֆայ բէգը իւր կացարանում լսում է այդ որոտալի ձայնը, և իսկոյն բացականչում.—«տղէրք, Քեօռ-օղլու Ղռաթի ձայնն էր այդ խըրխնջոցը, դո՛ւրս թռէք, տեսէք ինչ բան է դա»։

Քաջերից մէկը իսկոյն դուրս է թռչում. յանկարծ՝ նրա առջևը կանգնում է մի սպառազինուած յաղթանդամ ձիաւոր։ Քրտնաթաթախ ձին դադար չի առնում, կարծես ուզում է երկինք թռչել ու աստղերի հետ խաղալ։ Ոտքերի դոփիւնը ականջ է խլացնում, առաջի ոտքերի սմբակներով գետինը այնպէս է քանդում, որ փոշին մինչև երկինք է բարձրանում։

Երբ Նժոյգը փոքր ինչ հանդարտանում—դադար է է առնում, եկուորը եղէգնեայ ճկուն նիզակի մէջ տեղից բռնած բութ ծայրը գետնին խրելով՝ դուրս եկող ծառային հարցնում է.—«Գզիր—օղլի Մուստաֆայ բէգը տա՞նն է»։

Ծառան համեստօրէն գլուխ խոնարհեցնելով պատասխանում է.—«Այո՛, տանն է»։

«Ուրեմն՝ շուտով ասացէք, որ դռանը մի մարդ կանգնած քեզ է սպասում»։

Ծառան կրկին գլուխ խոնարհեցնելով՝ անմիջապէս մըտնում է տուն և իւր տիրոջը հաղորդում եկուորի առաջարկութիւնն ու խնդիրը։

Մուսաաֆայ բէգը դուրս գալով, նախ՝ բարևում է անծանօթին և ապա՝ առաջարկում ձիուց վեր գալ և հիւր լինել իւր մօտ։

Անծանօթ եկուորը քաղաքավարի մերժելով նրա առաջարկութիւնը՝ ասում է.—«Ես ձեր մօտ մի խնդիր ունիմ, եթէ խոստանում էք կատարել, այն է՝ որ վեր կգամ ու ձեզ կընծայեմ այս թանկագին նժոյգը. իսկ եթէ ոչ՝ կը վերադառնամ առանց մի պատառ հաց ուտելու, կամ մի կաթիլ ջուր անգամ խմելու։» Մուստաֆայ բէգը երբ լսեց Ղաթի իրան ընծայելու անսպասելի լուրը, խելացնորի նման, առանց մտածելու նրա առաջարկած դժուարութիւնների մասին, երդվում է ղուռանի և Հազրաթի Աբբասի անուններով, որ նրա բոլոր առաջարկութիւնները անթերի կը կատարէ։

Եկուորը համոզուած լինելով, որ երդմնազանցը յաւիտենական կորստի է մատնւում և նրա տուած երդումը անժխտելի կը մնայ, իսկոյն՝ ձիուց վայր է իջնում և Մուստաֆայ բէգի հետ ձեռք ձեռքի տուած տուն են մտնում, միանգամայն նժոյգի բոլոր հոգսն ու խնամածութիւնը թողնելով երկու ծառաների հոգացողութեանը։

Նրանք մութ Լաբիւրինթոսի նման նեղ ու երկար բակով անցնելուց յետոյ՝ մտնում են Մուստաֆայ բէգի շքեղազարդ առանձնասենեակը, որի յատակը պարսկական ճաշակով ծածկուած էր Խորասանի թանկագին խատուտիկ գորգերով ու բարձերով, իսկ պատերից կախ արած արծաթապատ և ոսկեզօծ թանկագին զէնքերը և առա-

ւել շքեղութիւն էին տալիս սենեակին։

Նստելով փափուկ օթոցների վերայ, սովորական հարց ու բարևից յետոյ, դառնում են իրանց նպատակ դրած հարցին։

Դէլի-Մէօհթարը մի առ մի պատմում է իր գլխին եկած անցքը և այդտեղ գալու բուն պատճառը ու աւելացնում է.—«Ես համոզուած եմ, որ բացի ձեզանից, մի ուրիշ ոչ ոք Քեօռ-օղլու հախիցը չի կարող գալ, միայն դուք կարող էք այդ քաջութիւնն անել։ Ուրեմն՝ խընդրում եմ և աղաչում որ չը մերժէք իմ խնդիրը, ինչպէս որ երդուել էք սրբագործուած Ղուռանի ու Հազրաթի Աբբասի մեծ անուան վերայ։ Որովհետև՝ աներկբայ համոզուած եմ, որ միայն ձեր հզօր բազուկը և հաստատուն կամքը կարող են նրա յամառ գլուխը ջախջախել և ապա թէ՝ այնուհետև ես նոր նպատակի հասած կլինեմ և իմ վրէժը լուծած լիրբ ու մեծախօս Այվազից, որովհետև՝ մինչև առիւծին չսպանես, կորիւնին որսալը խիստ դժուար է»։

Բոլոր անցքը լսելուց յետ, Մուստաֆայ բէգը մըտնում է տարակուսած։ Երկար մտածելուց յետոյ, համարեայ յակամայից հազիւ թէ կամաւորվում է, բայց մի և նոյն ժամանակ աւելացնում է.—«Թէպէտ և շատ դըժուար է ձեր առաջարկութեանը ձեռնամուխ լինել, որովհետև՝ Քեօռ-օղլին ինձ հետ աղուհացկեր ընկեր է եղել, բայց այնու ամենայնիւ՝ մի անգամ երդուել եմ, ուրեմն և չեմ կարող երդմնազանց գտնուել»։ Վերջ ամենայնի, յակամայից և հարկից ստիպուած յանձնառու է լինում խոստումը կատարել և այդ խօսակցութեանը վերջ տալով, սկսվում է հացկերութիւնը։

Մուստաֆայ բէգի հիւրասիրութիւնը աննկարագրելի էր։ Սեղանը հաւաքելուց յետոյ՝ իրանց նամազը կատարում են և ուզում են փոքր ինչ հանգստանալ, աչքի առաջ ունենալով նորէն հիւրի յօգնածութիւնը, միմիայն այն պայմանով, որ առաւօտեան վաղ արշալոյսին դուրս գալով այդտեղից՝ գնան Զարդախլի-Չամլիբէլ իրանց մտադրուած նպատակին հասնելու համար։

Առաւօտը վաղ զարթնելով փոքր ինչ նախաճաշիկ են անում և պատրաստւում են գնալու։ Մուստաֆայ բէգը նստում է իր Ալաբաշի վերայ (այսպէս էր նրա ձիու անունը). իսկ Դէլի-Մէհմէթը Քեօռ-օղլու Ղռաթին։ Երկուսն էլ միասին աչքերը ուղղած դէպ երկինք՝ «Ո՜վ վերին տեսչութիւն, Քո ամենազօր աջը մեզ հովանի լինի» ասելով մեկնում են այդտեղից, ուղևորուելով ուղղակի Չամլիբէլ, ուր հսկայ վիշապի նման կանգնած էր Քեօռ-օղլու անառիկ ամրոցը։ Իսկ ուղևորները այնպիսի անձնաւորութիւններ էին, որ երբէք նշանակութիւն չէին տալիս նրա տարածած համբաւին ու սարսափին։ Թէ Ղռաթը և թէ Ալաբաշէն զուգընթաց ու հաւասար քայլերով այնպէս արագ սլանում էին, որ կարճ միջոցում հասան Քեօռ-օղլու ամրոցին։

Մոռացանք ասել որ Քեօռ-օղլին մասնաւորապէս կախարդական արհեստին տեղեակ էր։ Երբ Դէլի-Մէհմէթը Այվազից ու Քեօռ-օղլուց վշտացած փախել էր, իր հետ տանելով Քեօռ-օղլու սիրելի Ղռաթը, Քեօռ-օղլին ամ է գցում և հաստատ գուշակում է, որ Դէլի-Մէհմէթը Ղռաթը տարել է Մուստաֆայ բէգի մօտ։ Մի և նոյն ժամանակ իմանում է նրանց մէջ կազմած չար խորհուրդն ու նրանց գալը իրան ու Այվազին սպանելու

նպատակը։

Վերջապէս, դաւաճանները արագութեամբ ձիաններից վեր են գալիս. Դէլի-Մէհմէթը մնում է ձիաների մօտ պահապան, իսկ Մուստաֆայ բէգը գաղտագողի մըտնում է ամրոցը։ Մօտենալով հարէմի լուսամուտներին՝ մի կողմից լրտեսում է նրա մէջ կատարուած իրողութիւնները, իսկ միւս կողմից՝ լսում նրանց խօսակցութիւնը։

Այդ միջոցին Քեօռ-օղլին նստած է լինում Նիկեար խանումի մօտ, որի մարմարեայ կուրծքը չաստուածուհու նման կիսով չափ բաց էր արած և ինքը ընկողմնել էր փափուկ բարձերի վերայ ու իւր սևորակ աչքերը դէս ու դէն շուռ տալով՝ մի առանձին տպաւորութիւն էր թողնում նայողի վերայ։

Հէնց այդ միջոցին՝ Քեօռ-օղլին խնդրում է Նիկեար խանումից թէ «Նիկեա՛ր, իմ հոգեակ, իմ սրտանեակ, քո չարը տանեմ, քո գլխին արևին մատաղ, կարծեմ բաւական ժամանակ է, որ քեզ մի առանձին բաւականութիւն և ուրախութիւն չեմ պատճառել կամ ցոյց տուել. և իմ սազը—իմ միայնութեան ու տխրութեան այդ միակ ընկերը—այսքան երկար ժամանակ պատից կախ ընկած չէր մնացե՞լ. ուրեմն վեր կա՛ց բէ՛ր, որտեղ այս մելամաղձոտ ժամանակը մի քիչ նուագեմ ու երգեմ, թէ դուք կուրախանաք և թէ ես իմ սրտի վշտերին մի քիչ սփոփանք կտամ։

Նիկեար խանումը վաղուց այդ ցանկանում էր, որովհետև՝ երկար ժամանակ չէր լսել իւր դիւցազնի սիրտ պարարող ու հոգի գրաւող մեղեդիները։ Ուրախ ժպիտը երեսին, իսկոյն ցատկում է տեղից ու վեր բերելով

սազը՝ յանձնում է նրան։

Քեօռ-օղլին ըստ երգիչների սովորութեան նախ և առաջ սազի ականջները լաւ քօքում է ու սմերի ձայները ներդաշնակելով սկսում է նուագել։ Բայց՝ տեսնենք դիւցազն բանաստեղծը ինչ է երգում և մենք ինչ կիմանանք նրա խօսքերից։—

Մէկ ծառաս փախել է՝ գնացել Հնդստան,
Գնացէք, իմ քաջեր, շուտ գտէք, բերէք,
Զարդեցէք շլինքը, կապէք թևերը,
Ձիերիդ առջևը խառնեցէք, բերէք։

Նախ և առաջ երկու աչքը փորեցէք,
Լեզուն տեղից հանէք, քիթը կտրեցէք,
Զանէն կտրէք, ատամները փշրեցէք,
Գլուխը ջախջախէք՝ վեր առէք, բերէք։

Քեօռ-օղլու նենգ դաւաճանին մորթեցէք,
Ոտիցը մինչ գլուխ կաշին քերթեցէք,
Մաս մաս կտրատեցէք ու մի խնայէք,
Մեծ կտորն ականջը թողեցէք, բերէք։

Ինչպէս ասացինք, Քեօռ-օղլին արդէն գուշակել էր իւր մասին եղած դաւաճանութիւնը և գիտէր որ ծածուկ լրտեսում են. ուստի այս երգով կամենում էր փոքր ինչ երկիւղ տալ գաղտագողի եկող լրտեսին. բայց մի և նոյն ժամանակ նրա սիրտը գրաւելու ու չը գրգռելու համար՝ երգում է նաև հետևեալ սրտաշահ գովասանական երգը։—

Հիմա այստեղից կանցանի
Գզիրեան Մուստաֆայ բէգը,
Շատ գովեստի է արժանի
Գզիրեան Մուստաֆայ բէգը։

Նրա խելքը բնական է,
Քաջութիւնը ցեղական է,
Անտեղի վատ բան չի անէ
Գզիրեան Մուստաֆայ բէգը։

Մի նժոյգ ունի խատուտիկ,
Բանց իմ նժոյգը գեղեցիկ,
Կտրիճ է և քաջամարտիկ
Գզիրեան Մուստաֆայ բէգը։

Ես Քեօռ-օղլին եմ կամքի տէր,
Նա ինձանից է անվեհեր,
Երանի եղբայրս լինէր
Գզիրեան Մուստաֆայ բէգը։

Երգը դեռ հազիւ վերջացրած, Նիկեար խանումը մի քաղցր ժպիտով հետևեալ նկատողութիւնն արաւ.— Ես բոլորովին զարմանում եմ, նստած քո հարէմի մէջ՝ փոխանակ քեզ գովաբանելու և քո արած քաջագործութիւնները մի առ մի թուելու կամ պատմելու, դուք գովաբանում էք Գզիրեան Մուստաֆայ բէգին, որ բնաւ կապ չունի մեր այսօրուան ուրախութեան հետ։

«Ոհ, չնաշխարհիկդ իմ Նիկեար, նկատեց Քեօռ-օղլին, Մի՞թէ դուք մոռացել էք այն օրը, երբ ես ձեզ փախցնում էի, ահագին բազմութիւն էր ընկել մեր յե-

ուեից, որոնք ուզում էին խլել քեզ իմ ձեռքից. այո, և կը խլէին ու թէ ինձ և թէ քեզ սրախողող էլ կանէին, եթէ մեզ օգնութեան չը հասնէր այն վառվռուն երիտասարդը, որը նստել էր իւր Ալափաչայ նժոյգին և մեր հակառակորդների մեծամասնութեանը մեծ ջարդ տալով, անվտանգ ազատեց մեզ նրանց ձեռքից։ Այո, այս րոպէիս քո երեսին մոիկ տալով, յանկարծ՝ միտս եկաւ այն քաջ երիտասարդի մեզ համար արած բարիքներն ու քաջութիւնները, նրա համար եմ գովաբանում, որովհետև՝ իմ կեանքով պարտական եմ նրան։ Այո, նրա սրտի և քաջութեան շնորհին է, որ այս րոպէիս քեզ պէս աննման թութակը նստած է իմ հանդէպ։ Ես այդ բնաւ չեմ կարող մոռանալ։ Նիկեա՛ր, թէկուզ որ իմ գլխին քար էլ աղան, ես դարձեալ երախտապարտ կ'զգամ ինձ այն դիւցազնի մօտ»։

Մուստաֆայ բէգը լուսամուտի տակից լսելով Քէօռօղլու այդ երախտագիտական և գովասանական խօսքերը, որոնք բոլորը միայն իրան էին վերաբերում, իսկոյն և եթ՝ զղջում է իր մտածմունքից ու չար դիտաւորութիւնից և ինքն իրան խաբուած ու միանգամայն սխալուած համարելով՝ սուրը մէջքից արձակում է ու մեղապարտի նման շլնքից քաշ արած՝ դռնից ներս է մտնում և ողջոյն տալով կանգնում է դրան մօտ։

Նրա այդպիսի անակնկալ յայտնուելուց, կանայք իսկոյն անցնում են առագաստի յետևը և ըստ սովորութեան թաքնվում անծանօթ օտարականից։

Քէօռ-օղլին ճանաչելով նորեկին, րոպէաբար տեղից վեր է թռչում, մօտենում է Մուստաֆայ բէգին ու բռնելով ձեռքից, բարևում է և ուրախ ակնածու-

թեամբ հրաւիրում նստելու այն փափուկ բարձերի վերայ, որ մի քանի րոպէ առաջ այնտեղ նստած էր Քէօռօղլու սրտին ուրախութիւն բերող Նիկեար խանումը։

Անկոչ հիւրը սկզբում չի համաձայնում նստելու և աւելացնում է — «Ես մի քանի կերպ մեղանչել եմ ձեր դէմ, քաջդ Քէօռ-օղլի։ Ահա տեսէք. նախ՝ որ ըստ մեր սովորութեան, առանց նախապէս իմաց տալու, յանդգնել եմ քո հարէմում ոտք կոխել, որ բոլորովին անվայել էր թէ ինձ և թէ մահմետական օրէնքին և երկրորդ՝ խաբուած եմ եղել քո անարժան հակառակորդի մի քանի խօսքերից. այո, խոստովանում եմ որ խաբուել եմ անգիտակցաբար, իսկապէս չը հետաքրքրուելով և չը գիտենալով թէ ինչ դաւաճանութիւն և ինչ դարան լարուած կայ ձեր դէմ։ Ուրեմն՝ եթէ վեհաբար կը ներէք թէ իմ այս միամիտ սխալմունքները և թէ քո անմիտ ու անհաւատարիմ ծառայի — Դէլի-Մէօհթարի արած յանդգնութիւնը՝ այն ժամանակ գուցէ կը համաձայնեմ ձեր առաջարկութիւնն ընդունելու և կը նստեմ։ Ահաւասիկ իմ պարզ խոստովանութեան առհաւատչեան այս սուրն է, որ շլնքիցս քաշ արած եկել եմ իմ հպատակութիւնը ցոյց տալու և այսուհետև ուխտազանց չը գտնուելու ձեր դէմ»։

Քէօռ-օղլու մէրը չը մեռնի, նրա մտն եկած էլ հէնց այդ էր, որ ժամ առաջ այնքան գովասանութիւն շռայլեց. և այդ բոլորը խօմ աննպատակ չէր։ Նա լաւ էր իմանում գործի էութիւնը և իւր տնելիքը։ Վերջ ամենայնի՝ Մուստաֆայ-բէգի այս տեսակ վարմունքից օգտուելով, սկսում է իր սովորական կախարդիչ ու հրապուրիչ շողոքորթութիւնն ու շաղակրատանքը (լաֆազա-

նութիւն) գործ դնել և երբեմնապէս խօսքի միջոցա- յայտնում իր մեծահոգութիւնն ու ներողամտութիւնը։

Այնուհետև վեր է առնում նրա շլնքից քարշ ընկած թուրը և կեղծելով՝ աւելացնում.—«Մեր եղբայրութեան մէջ այդպիսի բաները ամօթանք պէտք է համարել. մշտապէս դու իմ մեծ եղբայրն ես եղել և այսուհետև էլ կը լինես։ Ես բնաւ չեմ ցանկայ, որ ստրուկի նման ներկայանաս ինձ. վեր ա՛ռ սուրդ և քաջի նման կապէ մէջքիդ ու նստի՛ր մօտս»։ Այս ասելով միմեանց համբուրում են և նստում։

Մի և նոյն ժամանակ բերել են տալիս Դէլի-Մէօհթարին, որը ինչպէս գիտենք ամրոցից փոքր ինչ հեռու պահապան էր մնացել ձիանների մօտ և անհամբեր սպասում էր Մուստաֆայ բէգի վերադարձին։

Դէլի-Մէօհթարին ներկայացնում են Քեօռ-օղլուն և նա տեսնելով գործի այլ կերպարանք ստանալը՝ անմիջապէս իր տիրոջ առջև երեսի վերայ է ընկնում և ծընկաչոք ոտքերը համբուրելով՝ իր գործած յանցանքի համար ներողութիւն խնդրում, որ հայրաբար անյիշաչար գտնուի։

Քեօռ-օղլին ներում է նրան, միանգամայն հաշտեցնելով Այվազի հետ, հրամայում է կրկին կանգնել իր նախկին տեղը ու պաշտօնին։

Ուրախութիւնը կրկնապատկվում է, սէրը դարձեալ թագաւորում է այդտեղ։ Քեօռ-օղլու ներքին ուրախութեանը խօմ էլ չափ ու սահման չկար, որովհետև՝ մէկ որ Մուստաֆայ բէգի չար դիտաւորութիւնը փոխվում է բարեկամութեան, մէկ էլ որ՝ կրկին իր ձեռքն էր անցնում օդաչու Ղռաթը։

Այդ գիշեր մինչև լոյս ուրախութիւն են անում, միմեանց հաւատարիմ մնալու ուխտ ու եղբայրական դաշինք դնում երդմնական պինդ պայմաններով։

Այդ ուրախութեան միջոցին, երբ Քեօռ-օղլու գըլուխը տաքանում է, վեր է առնում սազը և խօսքը ուղղելով Մուստաֆայ բէգին՝ ասում է.—«սիրելի Մուստաֆայ բէգ, քեզ շատ սիրելուս համար ուզում եմ մի քանի րոպէ աշուղ դառնալ»։

Բայց Մուստաֆայ բէգը համեստաբար հրաժարվում է մրցման մէջ մտնելուց և խնդրում է որ այդ բանը թողնեն ուրիշ ժամանակի։

Քեօռ-օղլին զիջանելով Մուստաֆայ բէգի խնդրանաց՝ թողնում է իւր մտադրութիւնը. իսկ հետևեալ օրը իր բոլոր քաջերի հետ միասին՝ սպառազինուած ու մեծ շքով և թանկագին ընծաներով Մուստաֆայ-բէգին ճանապարհ է ձգում մինչև իրանց սահմանագլուխը։

Ամրոցը վերադառնալուց յետոյ անցնում են դարձեալ մի քանի օրեր։ Քեօռ-օղլին պատուիրում է իւր քաջերին, որ պատրաստուին խմբով որսի գնալու։ Պատերազմական զինուորների նման բոլորաբար պատրաստվում են։

Քեօռ-օղլին նստելով իր սիրելի Ղռաթին՝ դուրս է գալիս ամրոցից և բոլոր սպառազէն խումբը հետեւում են իրանց հրամանատարին։

Մի քանի խմբակների բաժանուած՝ բաւական ման գալով յոգնում են և ոչինչ չեն ճարում որսալու։

Բարձրանալով մերձակայ լեռնաբլուրներից մէկի վերայ՝ Քեօռ-օղլին յանկարծ տեսնում է, որ լերան ստորոտում — թփուտների մէջ մի մեծ կարաւան է իջևա-

նել հանգիստ առնելու համար։

Մի և նոյն ժամանակ վաճառականն էլ հեռուից նշմարում է, մի ինչ որ բան լերան գագաթին—հազիւ նշմարելի կերպով շքին է տալիս, բայց որոշակի ոչինչ չի տեսնում։—«Տղէրք, ասում է վաճառականը, հեռադիտակը տուեցէք ինձ, տեսնեմ այդ ինչ առարկայ էր, որ երևաց լերան գագաթին»։

Դիտակը դնելով աչքերին նայում է և ոչինչ չի տեսնում։ Կարծելով թէ՝ թռչուն էր կամ այլ կենդանի, որ իսկոյն անյայտացաւ, կրկին նստում է հանգստանալու։

Բայց Քեօռ-օղլին արդէն իր քաջերով թագնուել էր քարերի տակ, որ վաճառականը ոչինչ չը նշմարէ։

Խորամանկ Քեօռ-օղլին իր քաջերից մէկին ուղարկում է վաճառականի մօտ, որ տասանորդ պահանջէ։

Յամառ և ինքնահաւան վաճառականը ձեռք ձեռքի խփելով ծիծաղում է և ասում.—«Ես ինքս եմ Քեօռ-օղլի, բացի ինձանից ես այլ ևս մի ուրիշ Քեօռ-օղլի չեմ ճանաչում աշխարհումս»։ Այսու հանդերձ, մի քանի արհամարհական խօսքերով ունայն ու դատարկաձեռն վերադարձնում է եկւորին։

Քեօռ-օղլին վաճառականի այսպիսի վարմունքից սաստիկ վրդովուած, նիզակ ճօճացնելով դուրս է գալիս նրա դէմ։

Պէտք է ասել որ վաճառականն էլ պակաս քաջ չէր նրանից. բայց օգնողների թիւը փոքր էր։

Քեօռ-օղլին նկատելով վաճառականի համարձակ ու անվախ կերպով իր դէմ դուրս գալը՝ ինքն իրան մտածում է հեռուից մի քանի ազդու և երկիւղ պատճառող խօսքերով մի կերպ ընկճել ախոյեանի սիրտը և երկիւղի մէջ դնել նրան։

Թէպէտ՝ այդ միջոցին սազ չունէր ձեռին, բայց Ղարաբաղի երգիչների նման, գլխարկը թեք դրած, աջ ձեռը ականջին, հրապարակում ձին խաղացնելով՝ երգում է։—

Հալին, անհետանան ձիւներդ հաստատալ,
Երևին աչքերիս ամեն բան, սարեր.
Իմ երկսայրի սուրս լողայ արեան մէջ,
Դուրս գամ թշնամեաց դէմ ախոյեան, սարեր։

Դիւցազների հետ կռուելս քաջաբար,
Պիտի լսէ ու զարմանայ ողջ աշխարհ,
Կոտորելով զօրքը մի քանի հազար,
Սար ու ձոր դարձընեմ գերեզման, սարեր։

Քեօռ-օղլին եմ, մի հատ աշխարհ եմ եկել,
Մէկ գլուխս, մէկ ձիս, մէկ սուրս եմ սիրել,
Ես իմ մօրից ծնած օրից եմ մեռել,
Մահն ինձ հետ ման կուգայ անբաժան, սարեր։

Երգը վերջացնելուն պէս, վաճառականը սուլթանի անունով մի խոշոր սպառնալիք տուաւ Քեօռ-օղլուն։

Բայց Քեօռ-օղլին իւր մեծամիտ սովորութեան համաձայն, նորից սպառնաց և պատասխանեց վաճառականին հետևեալ երգով։—

Ստամբօլից եկած մեծ կարաւանով
Մեզ մօտ իջևանեց վաճառականը,

Քաջերիս հասոյթը երբ պահանջեցի,
Ծափ տուեց, ծիծաղեց վաճառականը։

Երբ նա իմ դէմ դուրս գայ թրով, դանակով,
Սար ու ձոր պիտ լցնեմ մեռեալ դիակով.
Մետաքսեայ նուրբ կտորները նիզակով
Ջափել տալս հեգնեց վաճառականը։

Իմ սիրելի՛ քաջեր, մի տեղ գումարուէք,
Սոված գայլերի պէս նրանց մէջ թափուէք,
Միջոց մի՛ տաք, զէնքը ձեռիցը խլէք,
Մեզ ոչինչ չհաշուեց վաճառականը։

Քեօռ-օղլիս չէ յաղթուել ո՛չ մի ժամանակ,
Նոյնպէս՝ այստեղ էլ կը տանի յաղթանակ.
Վաթսուն հազար թուման առձեռն ստակ
Անմիջապէս համրեց վաճառականը։

Երգը հազիւ թէ վերջացրեց, Քեօռ-օղլու աննկուն խումբը միահամուռ յարձակուեց կարաւանի վերայ։ Բոլոր դիմադրող ծառաներին սպանեցին, իսկ վաճառականին դիտմամբ կենդանի բռնեցին և պարծանքի համար հետ-ներն առած աւարների հետ միասին տարան Ջամլիբէլ և մի առանձին սենեակի մէջ բանտարկեցին։ Հետևեալ օրը նրան ևս պէտքէ սպանէին, որ գլուխը նիզակի ծայրը անցկացրած ամրոցի պարսպին ցցէին 'ի նշան իրանց տարած յաղթանակին։ Բայց Նիկեար խանումը շատ խղճահարուեց, երբ լսեց նրա աղէկտուր լացն ու կոծը, ողբն ու աղաղակը և խնդրեց Քեօռ-օղլուն, որ այդ ողորմելու կեանքը խնայէ իրան, գուցէ ընտանիքի

ու զաւակների տէր է։

Քեօռ-օղլին ոչ միայն չմերժեց Նիկեարի խնդիրը, այլ հրամայեց քաջերին ախոռից մի ձի դուրս քաշել վաճառականի համար և մի աննշան գումար էլ ճանապարհածախք տուեց ու այնպէս ճանապարհ ձգեց։

Վաճառականն երբ հասաւ իր հայրենիքը—Պօլիս, անձամբ աճապարեց ներկայանալ սուլթանին և արտասուաթոր աչքերով նրա ողորմածութիւնը հրաւիրել իւր վերայ, մի առ մի պատմելով Քեօռ-օղլու արած աւարառութիւնն, անգթութիւնն ու անիրաւութիւնը և իրանից յափշտակած գումարի չափն ու քանակութիւնը։

Սուլթանը խղճահարուելով կողոպտուած վաճառականի վերայ, մանաւանդ՝ մեծ ամօթանք համարելով մի այդպիսի աւազակի գոյութիւնը իւր տիրապետած երկրի մէջ՝ հետևեալ օրը մունետիկ կանչել տուեց ու յայտարարեց թէ՝ «Ողորմած սուլթանի բարձրագոյն հրամանն է, ով որ կարող է Քեօռ-օղլի աւազակապետին իւր Ղռաթի հետ միասին կենդանի բռնել բերել իւր մօտ, իր մինուճար աղջիկը նրան կը հարսնացնէ և իր մահուանից յետոյ իւր թագաւորական գահը նա կը ժառանգէ ամբողջ կարողութեան ու պատուի հետ միասին»։

Մունետիկը ամբողջ քաղաքը ման է գալիս և ամեն փողոցի գլխին կանգնած բարձրագոյն յայտարարում։

Քաղաքում գտնուած սրճարաններից մէկի միջից դուրս է գալիս մի երիտասարդ Պօլի անունով, որը ծառայում էր սրճարանում և ուշադրութեամբ ականջ է դնում մունետիկի յայտարարութեանը։ Լսելուց յետոյ մօտենում է վաճառականին, որ մունետիկի յետևից ման էր գալիս և յայտնում, թէ ես այդ բանը կը կատարեմ,

եթէ սուլթանը համաձայնի իմ բոլոր պահանջները կատարել։

Վաճառականը նայելով երիտասարդի երեսին, որ թէպէտ՝ քուրձերի մէջ էր փաթաթուած, սակայն կայտառ, առոյգ ու մի վառվռուն երիտասարդ էր, նրան պատասխանում է.—«Եթէ դուք ձեզ վերայ վստահ էք, որ սուլթանի բանձրագոյն հրամանը ճշտիւ կարող էք կատարել, ես այսօր և եթ ձեզ կներկայացնեմ սուլթանին»։

Երիտասարդը հաւատացնելով, որ այդ բանը ինքը իսկապէս կարող է կատարել՝ նոյն րոպէին վաճառականի հետ միասին, անձամբ ներկայանում են սուլթանին։

Պօլին սուլթանի դիւանատան դռնից ներս մտնելուն պէս՝ ըստ սովորութեան չոքէ չոք գնալով համբուրում է սուլթանի ոտքն ու հանդերձների փէշերքը։

Վաճառականը սուլթանին համառօտակի պատմում է երիտասարդի միտքն ու նպատակը։

Սուլթանը մի հայացքով զննելով երիտասարդին, հաւանութիւն է տալիս և գովաբանում է նրա քաջասրտութիւնն ու անվեհերութիւնը և աւելացնում է ասելով, եթէ իմ հրամանը ճշտիւ կատարես ու իմ յոյսը արդարացնես, այն ժամանակ իմ խոստումը անքակտելի կը մնայ. իսկ եթէ ոչ՝ քեզ չարաչար կը պատժեմ։

Երիտասարդը կրկին համբուրելով սուլթանի ոտքը՝ հաւատացնում է, որ աներկբայ լինի և արքայական ֆէրման է խնդրում։

Սուլթանը անմիջապէս հրամայում է ֆէրման պատրաստել Պօլիի անունով և արքունական ոսկէ մեծ կնիքով կնքել ու իբրև առանձնաշնորհութիւն և արքայա-

կան ողորմած բարեհաճութիւն «Պօլի-բէգ» անուանել նրան ֆէրմանում։

Պօլի-բէգը ֆէրմանը ստանալով՝ սուլթանից երկու հմուտ առաջնորդ, մի փորձառու օգնական և հինգ հազարի չափ զօրք է խնդրում։

Բարձրագոյն հրամանով՝ այդ բոլոր պահանջները իսկոյն կատարվում են։

Պօլի-բէգը սուլթանական ֆէրմանը համբուրելով ծոցն է դնում և խոնարհ գլուխ տալով՝ վաճառականի հետ միասին դուրս են գալիս պալատից։

Հետևեալ առաւօտը Ղաճար-Ալու հետ, որ իրեն օգնական է նշանակած՝ զօրքի առաջն ընկած երկու ուղեցոյցների առաջնորդութեամբ գնում են Ջամլիբէլ—Քեօռ-օղլու բնակարանը։

Մի քանի օր շարունակ ճանապարհորդելուց յետոյ, հասնում են Քեօռ-օղլու սահմանը, որտեղից երևում էր ահռելի ամրոցը։

Իրանց խոնջացած անդամներին հանգստութիւն տալու համար, Քեօռ-օղլու սահմանի վերայ ընտրում են մի գեղեցիկ մարգագետին ու բանակ դնում։

Կանոնաւոր զօրքի հետ եկել էին նաև բաւականին կամաւորներ։ Երբ վրանները կանգնում են, ահագին տարածութիւնը ծածկվում է մարդկանց ու անասունների բազմութեամբ։

Բանակի մէջ ամեն տեղ սկսվում է քէֆ—ուրախութիւն, երգ ու զուարճութիւն։ Թմբուկների, շեփորների և մարդկերանց աղմկալի ձայնը հասնում է մինչև ամրոցը։

Քեօռ-օղլին դուրս գալով ամրոցից, տեսնում է որ

Թշնամին անթիւ ու անհամար զօրքով բանակ է դրել իւր սահմանի վերայ և անասունների ոտքի բարձրացած փոշին երկինք է բարձրանում։

Կանչում է իւր մտերիմ Այվազին ու հարցնում.— «Այդ ի՞նչ բազմութիւն է, ի՞նչ զօրք, կամ ո՞վ է դրել այդ բանակը մեր պարիսպների մօտ ու մեր քթի տակ։ Շուտով ինձ մի ստոյգ տեղեկութիւն բերէք»։

Ներկայ եղողներից ոչ ոք չի համարձակվում գնալ բանակը և այնտեղից մասնաւոր տեղեկութիւն բերել։

Քեօռ-օղլին նկատելով որ ոչ ոքից յոյս չկայ՝ սաստիկ տխրում է և մի և նոյն ժամանակ սրտնեղութիւնից նրա բանաստեղծական կայծով հրդեհուած սիրտն ու հոգին սկսում է սաստիկ բաբախել։ Հէնց այդ յուզուած դրութեան մէջ և տխուր տրամադրութեան տակ, վեր է առնում իր տխուր և ուրախ րոպէների ընկեր սազը, մի քանի ելևէջներ անելուց իւր սովորութեան համաձայն սկսում է երգել։

Հաւաքուէք, ով քաջեր, տեսէք,
Թէ ի՛նչ փոշի է այդ փոշին,
Ինձ լաւ տեղեկութիւն տուէք,
Թէ ի՛նչ փոշի է այդ փոշին։

Ամբողջ դաշտը միգապատ է,
Հեռուից աչքս չի որոշէ,
Ո՞ւմ հարցանեմ որ ինձ ասէ,
Թէ ի՛նչ փոշի է այդ փոշին։

Լաւ է որ անձամբ ես գնամ,
Քեօռ-օղլիս երգիչ ձևանամ,

Գուցէ այնտեղ տեղեկանամ՝
Թէ ի՛նչ փոշի է այդ փոշին։

Երգը աւարտելուց յետոյ դարձեալ տեսաւ, որ քաջերից ոչ ոք տեղից չի շարժվում. հէնց այն է ինքը անձամբ էր ուզում վեր կենալ, որ ահա Բաբա-Քեանհանըն, որ այդ օրը ճանապարհները լրտեսող պահապանն էր, յանկարծ շնչասպառ ներս մտնելով՝ յայտնեց.—Քաջըդ Քեօռ-օղլի, գլխիդ ճարը տես և ինչ որ անելու ես՝ արա, որովհետև Պօլի-բէգն ու Ղաճար-Ալին բազմաթիւ զօրքերով եկել են, որ քեզ բռնեն, տանեն սուլթանի մօտ։

Երբ այս տեղեկութիւնն իմացաւ Քեօռ-օղլին, անմիջապէս քաջերին կանչեց իւր մօտ ու սազը ձեռքն առնելով՝ այսպէս սկսեց երգել։—

Այսօր մի վատ լուր լսեցի,
Որ մեզ վերայ յարձակւում կայ,
Պօլի-բէգն ու Ղաճար-Ալին
Գալիս են, գաղտնի դրդում կայ։

Դեռ չեն լսել իմ քաջերի
Պատերազմը, անվախ, արի,
Ամեն մի քաջս հազարի
Գլուխ կտրելուց, սոսկում կայ։

Դամուրչօղլին պատերազմի
Մէջ որ ընկաւ կը փրփրի,
Զօրավարաց առնել գերի
Իր կողմից այսպէս խոստում կայ։

Քեօռ-օղլի, կանչէ Եհովան,
Որ թշնամիքդ թուլանան,
Հէնց գիտեն հարամիք կուգան,
Դեռ չը գիտեն կոտորում կայ։

Սրանից յետոյ հագի հանդերձները հանելով մի կողմ է շպրտում ու հագնում այն դաւրիշական հագուստը, որ այդպիսի շատ դէպքերում գործադրելիս է եղել։

Մի և նոյն ժամանակ չի մոռանում վեր առնել նաև իր սրտի թարգման սազը և ուսից քաշ անելով՝ ուղղակի դիմում է դէպի թշնամու բանակը։

Առաջին անգամ նրան պատահում է մի ծերունի զինուոր, որ ջրամանը ձեռքին լուացողական արարողութիւնը վերջացրած, իր սովորական նամազը (աղօթել) պէտք է կատարէր։

Ծպտեալ դաւրիշը կանգնելով նրա առջև, սովորական ողջոյնից յետոյ՝ հարցնում է ծերունուց.—«այս ի՞նչ բանակ է այստեղ, կամ ո՞վքեր են սրանք»։

Ծերունին զարմացած մտիկ տալով երեսին, պատասխանում է.—Մի՞թէ դուք ոչինչ չէք լսել»։

«Ոչ», պատասխանում է միամիտ դաւրիշը։

Նոյնչափ միամիտ ծերունին, առանց քաշուելու, իրողութիւնը պատմում է հետևեալ կերպով.—«սուլթանը խոստացել է իր մի հատիկ աղջիկը տալ Պօլի-բէգին, եթէ նա Քեօռ-օղլուն ու Ղռաթին կենդանի բռնած սուլթանին կը ներկայացնէ. իսկ այսօր այստեղ փոքր ինչ հանգիստ ենք առնում, որ վաղը անպայման յարձակուինք Քեօռ-օղլու ամրոցի վերայ։

Այս խօսքերի ազդեցութեան տակ թէև մի թեթև սարսուռ անցկացաւ Քեօռ-օղլու ոսկորներով, բայց նա այն աստիճան անվեհեր սիրտ ունէր, որ ոչնչի տեղ չդրեց՝ և միւս անգամ մեղմօրէն հարցրեց.—«ո՞ր մէկն է Պօլի-բէգի վրանը»։

Ծերունին աջ ձեռքի ցուցամատով ցոյց տուեց բանակի մէջտեղում գտնուած կանաչ մեծ վրանը։

Դաւրիշը խորին շնորհակալութիւն յայտնելով ծերուկին և իսկոյն բաժանուելով, ուղղակի դիմեց դէպի Պօլի-բէգի վրանը։

Այդ ժամանակ Պօլի-բէգը մի քանի իշխանների ու բարձրաստիճան զինուորականների հետ ճաշում էր։

Դռնապան սպասաւորը հաղորդեց Պօլի-բէգին որ մի անծանօթ դաւրիշ է եկել և ցանկանում է ձեզ ներկայանալ։

Պօլի-բէգը հրամայեց ներս հրաւիրել։

Դաւրիշը սազը ուսից քաշ արած ներս մտաւ վրանը և քաղաքավարի գլուխ տալով լուռ կանգնեց։

Իսկոյն տեղ մատնացոյց արին և հրաւիրեցին նստելու։

Դաւրիշը մի աննշմարելի քննական հայեացք ձգելով Պօլի-բէգի վերայ նստում է։

Պօլի-բէգը սեղանակիցների խօսակցութիւնը ընդհատելով հարցնում է.—«այդ ի՞նչ սազ է, դաւրիշ բաբա»։

—Իմ սազն է, համեստօրէն պատասխանում է դաւրիշը։

—Մի՞թէ սազ ածել գիտէք, նորից հարցնում է Պօլի-բէգը։

—Ի՞նչպէս չէ. ինքս Քեօռ-օղլու մօտ երկար ժա-

մանակ երգչի պաշտօն էի կատարում. բայց ..

—Ուրեմն անշուշտ Քեօռ-օղլու երգերից կիմանաք։

—Այո՛, համեստութեամբ պատասխանում է, մի քանի հատ գիտեմ։

—Եթէ այդպէս է՝ մեզ մի քիչ ուրախացրու նրա ասած երգերով, որ տեսնենք թէ խեղքին ինչ զօռ է տուել։

Գուսանը րոպէաբար շակահան է անում սազը և կրծքին սեղմելով նուագում է։—

Ինչպէս եկար, դարձիր գնայ,
Պօլի, ափսոս ես, ափսոս ես,
Զօրքիդ մէկը ողջ չի մնայ,
Պօլի, ափսոս ես, ափսոս ես։

Վազը ու տուխծ իմ երկխուղէն
Այս սահմանից հեռացել են,
Ողջ աշխարհը զարմացել են,
Պօլի, ափսոս ես, ափսոս ես։

Ես Քեօռ-օղլին եմ ինքնակամ,
Ոչ գութ ունիմ և ոչ խնամ,
Քեզ կենդանի թաղել կտամ,
Պօլի, ափսոս ես, ափսոս ես։

Երգի վերջին երկու տողը դեռ չը կրկնած, Պօլիբէգը սաստիկ վրդովուեց ու զայրացած բացականչեց. ձայնդ կտրէ, անպիտան դուրիշ. այդին չէ՞ր ես ասում. ինչ բառեր ես արտասանում... խօմ չէ՞ս զժուել կամ գլխդ ձեռք վերցրել.. ճանաչո՞ւմ ես ում դէմ ես խօ-

սում, կամ գիտե՞ս ով է նստել քո հանդէպ թէ ոչ։

Երգիչը մեղմօրէն և իբր անվստահ պատասխանում է. «Ձերդ գերազանցութիւն, ինձ վերայ ինչո՞ւ էք չարանում, ես խօմ ինձանից չէ՛մ ասում այս խօսքերը, այլ Քեօռ-օղլու վաղուց ասածներն են։»

Պօլի բէգը մի քիչ մեղմանալով, ասում է.—դրանք մի կողմ թող. եթէ գիտես նրա արած քաջագործութիւններից, կամ երիտասարդական օրերի մէջ անցկացրած նշանաւոր ու աչքի ընկնող պատմական կէտերից ու կտորներից, որոնք առասպելական արկածներով լիքն են, նրանցից ասա՛ ու պատմի՛ր։

Երգիչը այս անգամ իւր վարժ մատները խաղացնելով թրթռուն լարերի վերայ՝ սկսեց բարձրաձայն երգել։—

Պօլի-բէգ, շատ մի բարձրանայ,
Փոշիդ մինչ երկինք կը հանեմ,
Հազար ու մի տանջանքներով
Կաշիդ մսից կը բաժանեմ։

Պատերազմի դաշտում կանգնած,
Երկար բեխերս ոլորած,
Ատամներս իրար սեղմած,
Կեանքդ սրիս մատաղ կանեմ։

Ողջ աշխարհը ման եմ եկել,
Սուլթաններից հարկ եմ առել,
Քեօռ-օղլիս դեռ չեմ ծերացել,
Դարձեալ անյաղթ ախոյեան եմ։

Դռնապաններից մէկը լսելով երգչի թէ ձայնը և թէ երգած ազատ ու համարձակ երգերը, իսկոյն ճանաչում է՝ որ դա իսկապէս Քեօռ-օղլին է, որովհետև ինքը մի ժամանակ ծառայելիս է եղել նրա մօտ հասարակ սպասաւորի պաշտօնով. և այդ գաղտնիքը մի կերպ նա ծածուկ հաղորդում է Պօլի-բէգին։

Բայց Պօլի-բէգը անպայման չի հաւատում դռնապանի ասածներին և աւելացնում է.—«այդպիսի բան երբէք չի կարող լինել, որովհետև Քեօռ-օղլին դուցէ հիմայ փախել մի տեղ թագնուել է, կամ երկիւղից սը-ռօշներն է պատռուել...»։ Բայց մի և նոյն ժամանակ Պօլին նկատելով որ նրա աչքերը արիւնարբու վագրի նման ընի մէջ խաղում են, և պատկերին նայողը մի տեսակ սարսափ է զգում, ինքն ևս սկսում է կասկածել և տարակուսած հարցնում է.—«ինչո՞վ պէտք է ստուգել և ո՞ւմնից կարելի է հաստատապէս իմանալ, որ դա իսկապէս Քեօռ-օղլին է»։

Մատնիչը իբրև ապացոյց իւր ասածների, պատմում է նրա բնաւորութիւնից մի քանի աչքի ընկնող գծեր և ապա աւելացնում է հետևեալ երկու խօսքը.—«Նախ և առաջ, տէր իմ, Քեօռ-օղլին սարսափելի շատակեր է, այնպէս որ հինգ հոգու բաժին կերակուրը մենակ ինքը կուտէ, և երկրորդ՝ այն աստիճան վեհանձն բնաւորութիւն ունի, որ անպատմելի և տարօրինակ է թւում շատերին։ Օրինակի համար, Քեօռ-օղլին եթէ մի տեղ նստած լինի և այնտեղ դիցուք ներս մտնի ինքը սուլթանը, անկարելի է որ նա տեղից շարժուի»։

Այս տեղեկութիւնները քու ծառայից լսելով Պօլի-բէգը՝ անմիջապէս հրամայում է երգչին ճաշ տալ և ա-

ռանձնապէս հսկել՝ թէ որքան ճշմարիտ են ծառայի հաղորդածները։

Ճարպիկ խոհարարը պատուէրն ստանալուց յետոյ՝ մի մեծ ափսէով դրեց նրա առջև Գիլանի գոված բրնձից իւղալի փլաւ մի քանի հացի հետ։

Ծպտեալ երգիչը բանուկ աշխատաւորի նման թեւերը վեր քշտելով սկսեց փառաւորապէս մի քանի րոպէում խփշտել. այնպէս մաքուր սրբեց ափսէն, որ կլէկչու ձեռքից էլ այնքան մաքուր չէր դուրս գալ։

Աչքի տակով նայողները ափշում են նրա այդքան ախորժակով անյագ շատակերութեան վերայ։

Այնուհետև Պօլի-բէգը դիմում է երկրորդ փորձին։ Նա իր օգնականի հետ դուրս է գալիս վրանից և մի պտոյտ անելով վրանի շուրջը՝ կրկին ներս է մտնում։ Այնտեղ գտնուող մարդիքը, բոլորը ոտքի են կանգնում, իսկ գոռոզ երգիչը անտարբեր կերպով մնում է իր տեղը անշարժ նստած, բոլորովին բանի տեղ չը դնելով նրանց ներս ու դուրս գնալ գալը։

Պօլի-բէգը տեսնելով, որ իր ձեռք առած միջոցները ճշտութեամբ կատարվում են, կանգնում է երգչի առջև և լաւ զննելով՝ ասում.—«ինչպէս երևում է թէ երեսիդ գծագրութիւնից և թէ քո երգած երգերից՝ դուք իսկապէս Քեօռ-օղլին պէտք է լինիք»։

Երգիչը սառնութեամբ և քմծիծաղ դէմքով պատասխանում է.—«ո՛չ, ձերդ գերազանցութիւն, ձեր կարծիքը սխալ է իմ մասին. ես ո՞վ, Քեօռ-օղլին ո՞վ. Նա ինձ նման հազարաւոր ծառաներ ունի։ Նրա դէմքը տեսնողը սարսում է. մինչև անգամ նրա ահռելի և որոտալի ձայնից կենդանիներն անգամ սարսափում են և

դողում ու թաքչում մութ ծերպերում ու խորշերում. իսկ մարդիք երկչոտ նապաստակի նման տափ են կենում անկիւններում»։

Պօլի-բէգը չը հաւատալով երգչի խօսքերին՝ աւելացնում է.—«ես հաստատ աղբիւրից տեղեկացել եմ ձեր ով լինելը, ուրեմն այլ ևս չէք կարող ծածկուել ինձանից... Բայց դուք չէ՞ք լսել, որ ես այսքան զօրքով ձեզ համար եմ եկել, որ կենդանի բռնեմ և ներկայացնեմ սուլթանին։ Իսկ այժմ ես ինձ բաղդաւոր եմ համարում, որ դուք ձեր ոտքով էք եկել· ինչպէս ասում է ժողովրդական առածը, գիտուն աղուէսը ջուխտ ոտքով է թալաք ընկնում»։

Այս խօսքերը վերջացնելուց յետոյ՝ աչքի մի նշանացի շարժումով, իսկոյն և եթ՝ ձերբակալում են Քեօռ-օղլուն ու թևերը յետևից պինդ կապած, կանգնացնում են վրանի մի անկիւնում։

Ամբողջ բանակի մէջ կայծակի արագութեամբ տարածվում է Քեօռ-օղլու ձերբակալուելու լուրը· ամեն տեղ կրկին սկսվում է քէֆ և ուրախութիւն։

Բանակի հեծելազօր գունդը երկու մասի բաժանուած, մէկ մասը բանակի շուրջը ձիարշաւ էր անում, իսկ միւսը մականախաղով զուարճանում։ Իսկ ողորմելի Քեօռ-օղլին, այն անյաղթ առիւծը, հանդամանքի ձեռքը խաղալիք դարձած, տխրալի դէմքով, թախիծը երեսին, այլագունած, ձեռքերը պարանով ամրապնդած, կոբագլուխ կանգնել էր Պօլ-բէգի հանդէպ։

Երկար մտածելուց յետոյ, խնդրում է Պօլի-բէգից· ձերդ գերազանցութիւն, ասում է, եթէ կարելի է, հրամայէք արձակել իմ թևերը, ես էլ մասնակցեմ ձեր ու-

րախութեանը, պատմելով ձեզ թէ մի քանի հերոսական քաջութիւններ և թէ իմ սրտի խորքերում թաքնուած մի քանի առեղծուածներս։

Պօլի-բէգը որքան էլ նախանձախնդիր էր իր պատուին, այնու ամենայնիւ մեծահոգութեամբ հրամայում է բանալ Քեօռ-օղլու թևերը։

Մտայոյզ երգիչը այդ անյաջող պայմանների մէջ, դարձեալ չի կորցնում իւր բնական ընդունակութիւնն ու վեհութիւնը· կրկին կուրծքին սեղմելով իւր մխիթարիչ սազը և իրան ազատելու նպատակով այդ անսպասելի որոգայթից, սկսում է երգել հետևեալ գթաշարժ երգը։ —

Իզուր մի չարչարիլ, ինձ ազատ արա,
Պօլի՛, Աստուած վկայ, ես Քեօռ-օղլին չեմ.
Դաւաճանի խօսքին դու մի՛ հաւատայ,
Պօլի՛, Աստուած վկայ, ես Քեօռ-օղլին չեմ։

Ամենայն մարդ թէպէտ սխալական է,
Բայց խեղճ երգչին տանջանք մի՛թէ արժան է,
Երդվում եմ, անունս իսկ Ուրուշան է,
Պօլի՛, Աստուած վկայ, ես Քեօռ-օղլին չեմ։

Յիսուն հազար զօրքով դրուած բանակը,
Նա կը ցրուէ, երբ ձեռքն առնի նիզակը,
Այսպէս է Քեօռ-օղլու ճիշդ օրինակը,
Պօլի՛, Աստուած վկայ, ես Քեօռ-օղլին չեմ։

Պօլի-բէգը երբ լսում է երգչի այս աղերսալի և երգմնական խօսքերը, խղճահարվում է և ինքն իրան սը-

խալուած համարելով ու ծառայի տուած տեղեկութիւնը անճիշդ կարծելով, անմիջապէս ազատութիւն է շնորհում երգչին, միայն այն պայմանով, որ բանակից դուրս չգայ, մինչև իրա բանակի Քեօռ-օղլու ամրոցի վերայ արշաւելը և նրան ձերբակալելը։

Երգիչը իւր շնորհակալութիւնը յայտնելով Պօլի-բէգին, դուրս է գալիս վրանից և սկսում պտտել բանակի մէջ, մի և նոյն ժամանակ մի առ մի քննելով թէ կանոնաւոր զօրքի և թէ կամաւորների թիւն ու քանակութիւնը։

Քեօռ-օղլին իրան կապանքներից ազատ գտնելով, մանաւանդ գիտենալով որ Չամլիբէլից հեռու չէ, հիմա ուր որ է իր առիւծասիրտ քաջերը վրայ կտան, մի անսակ ուրախութիւն և հրճուանք վերան գալով՝ նորից երիւզ ապրելու համար սկսեց երգել։—

Մեր ամրոցի գիժ քաջերն են
Անպարտելի, կռուի դաշտում,
Առանց որս չեն վերադառնայ,
Ինչպէս գայլեր արիւնախում։

Երբոր մի սուր լինի կորուկ,
Նա կը կտրէ չոր, թէ փափուկ,
Գայլի ձագը՝ գայլ է յատուկ,
Բզուէսը գայլ չի փոխարկվում։

Միշտ եղել եմ քաջ, անվեհեր,
Կոտորել եմ անթիւ զօրքեր,
Աշխարհում պատերազմասէր,
Քեօռ-օղլուս նման չի ճարվում։

Այդ ժամանակ արեգակը արդէն պատրաստուել էր իւր վերջին հրաժեշտը տալ աշխարհին և մութը իւր սև քօղը պատել տիեզերքի վերայ. միմիայն մերձակայ լեռների բարձր գագաթները տեղ տեղ ոսկեզօծուած էին նրա վերջին ճառագայթներով։

Զը նայելով որ գիշերը արդէն պատրաստուել էր իւր սևաթոյր մռայլ թևերը տարածել ընդհանուր աշխարհի վերայ և ամեն առարկայ ծածկել մթութեան մէջ՝ այնու ամենայնիւ Քեօռ-օղլու սիրտը սաստիկ բաբախում էր և անվերջ սպասում յաղթանակին։

Կարճ միջոցում ընդհանրապէս խաւարը պատեց աշխարհին։ Այնուհետև այլ ևս բանակից ոչ ոք դուրս 'չը մնաց, ամեն մարդ քաշուեց իւր վրանը, նոյն օրուայ անդադար խաղերից յոգնած ոսկորներին փոքր ինչ հանգստութիւն տալու։

Ամեն տեղ տիրեց խորին լռութիւն. Քեօռ-օղլին օգտուելով այդ ամայութիւնից և ամպամած մռայլ գիշերից, մի կերպ դուրս գալով բանակից՝ անյայտացաւ մթութեան մէջ։

Կէս գիշեր էր արդէն, երբ Քեօռ-օղլին յոգնած ու շնչասպառ հասաւ իւր ամրոցը։

Նա դարձեալ մի և նոյն Քեօռ-օղլին էր և մի և նոյն իրաւունքների տէրը, 7000 քաջերի հրամանատարը։

Ժամանակ չը կորցնելու համար, փոքր ինչ հանգիստ առնելուց յետոյ, անմիջապէս կանչում է իւր մօտ երկարամեայ փորձուած անվեհեր Այվազին և մի առ մի պատմելով նրան, թէ իւր գլխին եկած անցքը և թէ թշնամու չար դիտաւորութիւնը։

Ինքը չափազանց յոգնածութիւնից ստիպուած, այդ

օրուայ անելիքների բոլոր իրաւունքը յանձնեց նրան, միանգամայն ենթադրելով, որ սրանից յարմար միջոց չի լինի թշնամուն խորտակելու և նրա անբարտաւանութեան եղջիւրը փշրելու. որովհետև նրանք մեզ և մեր ոյժերը բոլորովին բանի տեղ չը դնելով, մեծ ու փոքր առհասարակ բոլորը անհոգ քնած են։ — «Ահա քեզ խստիւ պատուիրում եմ, որ առանց ժամանակ կորցնելու, ձայն տաս մեր քաջերին և առաջնորդես նրանց. որովհետև ժամանակը թանգ է և առանց սպասելու շուտափոյթ պէտք է յարձակուել թշնամու բանակի վերայ և անգթաբար ցրուել ու կոտորել նրանց. միայն որքան կարելի է ամեն ճիգ ու ջանք գործ դնել—աշխատել Պօլի-բէգին ու Ղաճար-Ալուն կենդանի բռնել և անվնաս բերել ինձ մօտ։

Այվազը իւր մեծաւորի հրամանը մտաւութեամբ լսելուց յետոյ՝ խոնարհ գլուխ տալով հեռանում է և շտապում անթերի կատարելու։

Անմիջապէս հաւաքում է գլխին Քեօռ-օղլու արիւնարբու սպառազինած գունդը և արշաւում թշնամու բանակի վերայ։

Բանակում միամիտ զօրքը այդ օրուայ ուրախութիւնից բէզարած, հանգիստ մրափում էր խոր թմրութեան մէջ, երբ Քեօռ-օղլու կատաղի հրոսակը, Այվազի առաջնորդութեամբ շրջապատել ու պաշարել էր բանակը, մի կողմից անասելի ու անողոք ջարդ տալով և միւս կողմից շարունակվում էր աւարառութիւնը, այնպէս որ ոչ ոք չէր կարող դիմադրել յանկարծ յարձակուող քաջազէն մարտնչողներին. և մինչև անգամ զէնքի ձեռք մեկնելու միջոց չը գտնելով, Պօլի-բէգի զօրքը մոլորեալ

ոչխարների նման թափառում էին աստ և անդ։

Այվազի հրէշային խմբի վայրենի աղաղակը այնպէս էր մոլորեցրել նրանց, որ հազարից մէկը հազիւ թէ փախած ու ազատած լինէր։

Պօլին տեսնելով որ իր զօրքը բոլորովին սրի ճարակ է դարձել՝ երկիւղից վրանի մի անկիւնում, իր օգնականի հետ միասին, կուչ եկած դողում էին, և ամէն յոյս ու ակնկալութիւն գրեթէ նրանց համար վերջացած էր, որովհետև ոչ մի տեղից օգնութիւն ու օժանդակութիւն չէին սպասում։

Այդ խառնաշփոթ միջոցին, Այվազը կանգնած Պօլի-բէգի վրանի առջև՝ երգիծաբար առաջարկում էր դուրս գալ վրանից. նախապէս զգուշացնելով որ ձեր անձի համար ոչ մի վտանգ չկայ։ — «Դիտցէք, ասում էր, ես Քեօռ-օղլին չեմ, այլ նրա մի յետին ստորեադրեալը. բայց միայն ինձ խստիւ պատուիրած է՝ ձեզ և ձեր օգնականին կենդանի բռնել ու զգուշութեամբ ներկայացնել իմ հրամանատարին—Քեօռ-օղլուն, որը անհամբեր ձեզ է սպասում»։

Դալկացած Պօլի-բէգը անճարացած զինաթափ է լինում և դողդոջուն ոտքերով ներկայանում Այվազին իր օգնականի հետ միասին։

Այվազը դարձեալ կրկնում է իւր նախկին խօսքը՝ թէ բնաւ մի վախենաք, որովհետև անձնապէս ձեզ ոչ մի վնաս չկայ։

Պօլի բէգը բոլորովին լուռ էր և ոչ մի բառ չէր դուրս գալիս նրա բերանից։ Նրան նստացրին իր սեփհական ձիու վերայ, իսկ օգնականին մի ուրիշի։

Նրանց տանում էին ոչ իբրև գերիներ, այլ իբրև

յայտնի ու երևելի՞անձինք, ներկայացնելու Քեօռ-օղլուն, որ նրանց էր սպասում։

Այվազը յաղթանակը տարաւ՝ ոչ մի կորուստ չունեցած և մեծ աւարով վերադարձաւ ամրոցը։ Աւետաբերը արդէն ժամ առաջ աջողութեան լուրը հաղորդել էր Քեօռ-օղլուն։

Այդ ժամանակ Քեօռ-օղլին իր առանձնասենեակում, երկար բեխերը ոլորած, ծխափողը ձեռքին, ծալապատիկ նստած էր փափուկ օթոցների վերայ, երբ յանկարծ դուռը ճռնչալով յետ բացուեց ու ներս մտաւ Այվազը, իր հետ բերելով Պօլի բէգին ու նրա օգնականին։

Քեօռ-օղլին տեսնելով իր նպատակի ճիշդ իրագործումը և Այվազի արած քաջագործութիւնը, տեղից վեր թռչելով գրկեց Այվազին, ճակատը համբուրեց և իբրև վարձատրութիւն նրա արած քաջութեան, չը խնայեց հակառակորդների ներկայութեամբ «աֆէրին» բառը մի քանի անգամ կրկնել, և աւելի քաջալերելու ու սրտապնդելու համար մի ոսկէպատ սուր ընծայեց, որ ուրիշ անգամներ ևս առաւել լաւ յաղթանակ տանի։

Այդ րոպէին մի տեսակ ուրախութիւն զգալով՝ վեր առաւ սազը և տեղից ուղղուելով՝ Պօլի-բէգի ու Դառաւ-Ալու ներկայութեամբ՝ սկսեց աշխուժով երգել։—

Օդում մոլորուած թռչունը,
Ճանապարհէ յարգն ինչ գիտէ.
Իրայ յարգը չիմացողը,
Ուրիշների յարգն ինչ գիտէ։

Սարկութեան մէջ ծնուողը,

Աղքատութեամբ մեծացողը,
Յանկարծ բաղդի տիրացողը,
Բարերարի յարգն ինչ գիտէ։

Բաղէն ինչ գիտէ ծաղիկը,
Ծաղկանց միջի գեղեցիկը,
Մեղրի համ չառնող ռամիկը,
Մեղւարարի յարգն ինչ գիտէ։

Ոտքէդ մայլէց շատ եղանակ,
Խմբով նուագեն ներդաշնակ,
Անուշ մարդը այդ ժամանակ,
Անուշ քնարի յարգն ինչ գիտէ։

Քեօռ-օղլի, պարտիզում փոքրիկ,
Ուր կայ բուսած գոյն-գոյն ծաղիկ,
Ագռաւն ընկնի գերթ բլբուլիկ,
Լիլիֆարի յարգն ինչ գիտէ։

Մի և նոյն ժամանակ աչքի առաջ ունենալով, նախընթաց օրուայ իւր ձերբակալուելը Պօլի-բէգի ձեռքով, իսկ այսօր նրա (սուլթանի ներկայացուցչի) գերի ընկնելը իւր ձեռքում և Պօլի-բէգի ձեռքերը ծոցը գլխակոր կանգնելը իւր հանդէպ՝ մի տեսակ ուրախութիւն ու զուարճութիւն էր պատճառում ինքնապաստան Քեօռ-օղլուն։

Քեօռ-օղլին թէպէտ սաստիկ վրդոված, բայց անպատճառ ցանկանում էր մի երկու խօսքով հասկացնել Պօլի-բէգին, իւր դէմ արած յանդգնութիւնը։ Ուստի վեր է առնում իւր սրտի խորքերու թաքնուած ծած-

կագիրը բացատրող բազմաբարբառ անկենդան լեզու ունեցող սազը և խելացնոր սիրահարի նման կրծքին սեղմելով, բորբոքուած ու եռանդագին երգում է.

Պօլի, յիշում ես քո ուխտը խիկական,
Քաջագունը ձերբակալելն ուր մնաց,
Հիմա տեսնենք ով կգայ քեզ օգնութեա՛,
Քաջագունը ձերբակալելն ուր մնաց:

Ոչինչ մի օգնութիւն չը տուած գործին,
Այդքան անմեղ արիւն թափուեց քո մասին,
Ձեր գերութեան լուրը հասաւ սուլթանին,
Քաջագունը ձերբակալելն ուր մնաց:

Քեօռ-օղլու քաջ անունն ամեն մի երկիր,
Ինչպէս տեսար՝ այնպէս գնա ու պատմիր,
Պօլի, քեզ կազատեմ, միայն մտածիր,
Քաջագունը ձերբակալելն ուր մնաց.

Քեօռ-օղլին երգը վերջացնելուց յետոյ, տեսաւ որ Պօլի-բէգը բոլորովին ձեռքից գնաց և մերձ ի մահ հիւանդի նման տատանվում է ու հազիւ կարողանում ուղիղ ոտքի վերայ կանգնել՝ յենուելով այս ու այն կողմ: Սաստիկ խղճահարվում է, երբ Պօլին ուժերը հաւաքած սիրտ է անում փռուել նրա առջև. համարեայ իւր արտասուքով լուանում է ոտքերը, միանգամայն աղերսելով, որ խնայէ կեանքին և ներէ իւր արածը, իբրև մի անփորձ երիտասարդի արած յանցնութիւն:

Քեօռ-օղլին զգածուելով այս արարողութիւնից՝ իսկոյն հրամայում է Պօլի-բէգին վեր կենալ ընկած տե-

ղից ու կանգնել:

Թշուառ Պօլին լսելով այդ խրոխտ հրամայական ձայնը, վեր է կենում և գոլկացած դէմքով կանգնում հսկայ Քեօռ-օղլու առաջ:

Ինչպէս տեսնում ենք՝ Պօլի-բէգի աղերսանքը անհետեւանք չը մնաց. անյիշաչար Քեօռ-օղլին վեհաբար ներումն է շնորհում նրան և երդուելով ամենաբարձրեալ Ալլահի անունով, թևերը արձակելով, նստացնում է իւր հանդէպ և բարեկամական սիրալիր ընդունելութեան ցոյցեր տալիս:

Քեօռ-օղլու հրամանով հացի սեղան է բացվում և ախական կերակուրները մաքուր ափսէներով մէկը միւսի յետևից շարվում են սեղանի վերայ և սկսվում է հացկերոյթը:

Քեօռ-օղլին իւր սովորական աշխուժով ախորժանօք անյագաբար ուտում էր: Ոչ պակաս ուտում էին նաև նրա սեղանակիցները, բայց Պօլի-բէգից ու իւր օգնականից, որոնց ախորժակը կարծես բոլորովին փակուել էր, օրուայ անաջող դէպքից և սոխպուած խորասուզուել էին մտքի անեզր ովկիանում:

Թէպէտ նրանք մասնակցում էին սեղանին, այնուամենայնիւ նրանց վերցրած պատառների թիւը մատով կարելի էր հաշուել:

Միով բանիւ աննախանձելի էր նրանց դրութիւնը, որտում էր սրտերը և տխուր հոգիքը. երբեմնապէս ապուշի նման նայում էին միմեանց երեսի, անցեալն ու ներկայն մտաբերելով և մերթ ընդ մերթ սրտի խոր-
քերից խուլ հառաչանքներ ու հոգոց քաշելով:

Բազմափորձ Քեօռ-օղլին շատ լաւ էր իմանում այդ

թշուառների որ աստիճան տխուր դրութեան մէջ լինե-
լը․ որովհետև հէնց նախընթաց օրը ինքն էլ մատնուած
էր մի և նոյն միճակին, նոյն անաջողութեանը։ Եւ այդ
իսկ պատճառով, նա լաւ գիտէր, թէ անաջող դէպքերը
մարդկանց որ աստիճան ընկճում ու յուսահատեցնում են։
Վերջ ամենայնի նրանց ճիշդ հաւատացնելու հա-
մար, որ ինքը Քեօռ-օղլին ոչ միայն ցանկանում է նրանց
որ և է պատժի ենթարկել, այլ մինչև անգամ դեռ մը-
տադիր է մի նոր ու նշանաւոր լաւութիւն անել Պօլի-
բէգին, կրկին իւր նպատակին հասցնելու համար։
Ահա այս էր Քեօռ-օղլու միտքը, որ սեղանի վերայ Պօ-
լի-բէգին առաջարկեց․—«Պօլի-բէգ, ասում է, ինչո՞ւ էք
այդքան տխրել, կամ ինչո՞ւ չէք ուրախանում, մի՞թէ
չէք ցանկանում մասնակցել մեր այս ուրախութեանը․
գուր է ձեր այդքան մտածմունքն ու վհատութիւնը․ Ես
ձեզ հաւատացնում եմ Հազրաթի Ալբբասի անունով, որ
երբ և իցէ ձեզ ձեր վերջին նպատակին պիտի հասցնեմ․
այս, ես չեմ ուզում, որ դուք զրկուիք ձեր դէմ ժպտա-
ցող բաղդից, որը ձեզ յայտնապէս բարեգուշակ ապագայ
է խոստանում։ Հաւատացէք, որ ես ինքս ցանկանում եմ
անձամբ տանել ձեզ Պօլիս, ձեր նպատակին հասցնելու հա-
մար․ բայց միայն մի մի միտք ինձ շատ է կաշկանդում,
որ մարդիկ ապերախտ են և անազնիւ։ Ուրեմն դուք
եկէք այստեղ, ձեռք դրէք Ղուրանի վերայ և երդուէք
նրա ու նրա սուրբ մարգարէի անունով, որ և է վտանգ
չի պատահի․ ես այն ժամանակ ըստ իմ խոստման ան-
ձամբ կըգամ ձեզ հետ մինչև Պօլիս։ Իսկ դուք այն ժա-
մանակ ինձ ներկայացրէք սուլթանին, որպէս մի բռնա-
ւոր, այն պայմանով միայն, որ մինչև դուք ձեր նպա-

տակին հասնէք, այնուհետև ի հարկէ յոյս ունիմ, որ հէնց ձեր միջոցաւ մի կերպ կարող կը լինեմ ազատուել այդ կամաւոր բանտարկութիւնից ու սուլթանի նախապատրաստած բորբոքս տանջանքից։

Այդ միջոցին Պօլի-բէգը բոլորովին ապշած նայում էր Քեօռ-օղլու երեսին և այն աստիճան երկմտութեան ու կասկածի մէջ էր, որ ոչ նրա տուած յոյսերին, ոչ իւր աչքերի տեսողութեանն ու ականջի լսածին էր հաւատում․ այնպէս որ ինքն իրան հարց էր տալիս «արդեօք սա իրողութիւն է՝ թէ երազ։ Իսկ նրա մռայլ օգնականը խոժ, ինչպէս ասում են, ջուրն էր քաշուել․ մահամերձ հիւանդի նման գոյնը իսպառ թռցրել էր, թախիծը երեսից չէր հեռանում, նոթերը կիտած, քիթը կախ, ժայռի գագաթին կամ քարափի ծէրին նստած ծերունի արծուի նման մտախոհ նայում էր դէպի անդունդը, մտաբերելով անցեալն ու աչքի առաջ ունենալով ներկան ու ապագան, ծածուկ ողբում էր։

Պօլի-բէգն ևս համարեա նոյն դրութեան մէջ էր․ բայց և այնպէս Քեօռ-օղլու տուած յոյսերը կենդանութիւն ներշնչեցին նրա մէջ և րոպէաբար սթափեցրին, որովհետև նրա վառվռուն հոգին ու աշխոյժ սիրտը դեռ այնքան էլ չէին ընկճուել այդ անակնկալ պատուհարից։ Նա լաւ տեղեակ էր, որ Քեօռ-օղլին բնաւ սուտ չէր խօսում և կարիք էլ չկար սուտ խօսելու կամ շողոքորթելու, որովհետև իրանք արդէն գերի էին նրա ձեռքին։ Պօլի-բէգը հազիւ լսելի ձայնով պատասխանեց․—«ինչպէս որ ձեր կամքն է, տէր իմ» ասելով՝ լռեց։

Պօլի-բէգը Քեօռ-օղլու խոստումները աւելի ամրապնդելու համար կրկին ծունկ է չոքում նրա առջև և

խնդրում, որ վեհաքար խնայէ իրանց կեանքը։

Քէօռ-օղլին սաստիկ խղճահարուելով Պօլի-բէգի այսպիսի վարմունքից, թևից բռնած վեր է քաշում և մի Ղուռան բերել տալով՝ կրկին երդուեցնում է Ղուռանի ու Մահմէտի անունով, որ իրան մի փորձանք չի պատահի։

Այդ ժամանակ արդէն սեղանը վերջացած էր և ամեն մարդ առանձնացաւ իւր որոշեալ տեղը փոքր ինչ հանգստանալու։

Հետևեալ առաւօտ նախաճաշից յետոյ մի քանի օրուայ ճանապարհի պաշար հետները վեր առած, Պօլին ու օգնականը, անվեհեր Քէօռ-օղլու հետ միասին, ամրոցից ճանապարհ ընկան դէպի Պօլիս, իբր Քէօռ-օղլուն ձերբակալած և պէտք է ներկայացնէին սուլթանին։

Բայց Քէօռ-օղլին խիստ վստահ էր թէ իւր և թէ Ղռաթի վերայ. վստահ էր նրա համար՝ թէ երբոր ուզենայ, կարող է մի կերպ գլուխը պրծացնել և ազատուել սուլթանի մահ սպառնացող դիտաւորութիւնից, երբէք չը մտաբերելով մարդկանց փոքրոգութիւնն ու ապերախտութիւնը։

Այսպիսի մտադրութեամբ, Քէօռ-օղլին անհոգ կերպով միշտ առաջ էր գնում և երբեմնապէս իւր ունեցած քաջութիւնները փայլեցնում, նստած իւր արագավազ Ղռաթի վերայ։ Նա, տղամարդի պէս թաւ ու երկար բեխերը ոլորած, գլխարկը դէպի աջ ականջի կողմը փոքր ինչ թեք դրած, որի յետևից կիզող արեգակի ջերմ ճառագայթներից շլինքը՝ պաշտպանող մետաքսեայ պարոշը քողքողում էր օդի մէջ. թիրմայի շալգոտին մէջքին փաթաթած մինչև կուրծքը, որի մէջ խրած փոք-

րիկ դաշոյնը, որի փղոսկրեայ դաստակը հազիւ թէ կիսով չափ երևում էր. պղպղատիկ ոսկեհուռ կեռթուրը կապած մէջքին. եղէգնեայ ճկուն նիզակը ձեռքին մերթ ճօճացնում էր և մերթ խաղացնում, առանց ամենևին երկմտելու, թէ իւր մասին մի վտանգ կայ՝ նա անվեհեր առաջ էր գնում։

Իսկ Պօլին ու Ղաճար-Ալին, որ զուգնթացաբար նրա յետևից էին գնում, բոլորովին ապշել էին թէ նրա ձիաւարժութեան և թէ զինավարժութեան վերայ, որովհետև Քէօռ-օղլին ճանապարհին երբեմն զուարճանում էր իւր սիրելի Ղռաթը չափ գցելով ու զինավարժութիւններ անելով։

Արդէն երկու օր էր, որ նրանք ճանապարհ էին ընկել, երբ նրանց աչքին հեռուից երևացին մի խումբ ձիաւորներ, որոնք խառն ի խուռն գնում էին նոյն ճանապարհով։

Քէօռ-օղլին անմիջապէս կանգ առաւ և ուղևորներին ցոյց տալով, հարցրեց Պօլի-Բէգից—«Դրանք ինչ մարդիք են, կամ ու՞ր են գնում արդեօք»։

«Չը գիտեմ, տէր իմ», կարճ պատասխանեց Պօլին։

Քէօռ-օղլին երկմտեց և ինքն իրան մտածելով՝ ասում էր.— «մի գուցէ ինձ համար մի որոգայթ կամ դարան կայ լարած»։ Մի քանի րոպէ լուռ մնալուց յետոյ, առաջարկում է Պօլի-բէգին.— «ինձ շատ հետաքրքիր է իմանալ թէ ովքեր են դրանք և մինչև անգամ, եթէ կարելի է, առաջ անցէք և շուտով մի տեղեկութիւն հասցրէք ինձ»։

«Այս րոպէիս» ասելով՝ Պօլին առաջ է անցնում և իւր սրարշաւ նժոյգի շնորհիւ կարճ միջոցում մօտենում

է խմբին և իսկոյն ճանաչում է նրանց, որ իւր դասա-
լիք եղած գնտի անդամներն են, որոնք փախել և ազա-
տուել էին Քեօռ-օղլու ճանկերից։

Երբ նրանց տեսաւ՝ կարծեց թէ ամեն բան մեռել
էր նրանց սրտի մէջ և հոգիւը կորցրած մոլորեալ ոչ-
խարների նման ցաք ու ցրիւ, դանդաղ քայլերով առաջ
էին գնում։ Զարմանքը պատում է նրան և խելացնորի
նման բացականչում է. —«այս ինչ եմ տեսնում, Աստ-
ուած իմ, իմ խումբը այս դրութեան մէջ»։ Տրտմում է
սիրտը, տխրում է հոգին, թախիծը պատում է նրա ե-
րեսին. բայց ինչ կարող էր անել, եղածն արդէն եղած էր։

Նրանց այդ աստիճան թշուառ դրութիւնը, շատ
վատ տպաւորութիւն թողեց Պօլի-բէգի վերայ՝ բայց և
այնպէս մի կերպ զսպելով իրան, ամօթխածութեամբ
սկսեց պատմել Քեօռ-օղլուն հետևեալը —«դրանք, տէր
իմ, տաաց, ինձ հետ եկող հեծելազօր գնտի փախչող ան-
դամներն են, որոնք մի կերպ միջոց գտնելով, ձեր քա-
ջերի կոտորածից մի կերպ փախել ազատուել են, իսկ
այժմ, իրանց տսելով, ամօթու մինչև անգամ չեն էլ
ուզում Պօլիս մտնել ու մարդկանց երևալ։»

«Եթէ այդպէս է, եթէ վրէժխնդիր չեն իրանց պար-
տութեանը, ասում է Քեօռ-օղլին, թող միանան մեզ հետ
ու այնպէս միասին գնանք»։

«Ո՛չ, Տէր իմ, այդպիսի յանդգնութիւն երբէք մըտ-
քերից չի անցնիլ, որովհետև ես գործի էութիւնը մի
առ մի պատմեցի նրանց. կը մնայ միայն, որ դուք բա-
րեհաճիք մեզ հետ միանալը։ Բայց գիտէք թէ ինչ բա-
րիք արած կը լինիք այդ թշուառներին և ՚ինչ աստի-
ճան ամոքած կը լինիք նրանց վշտացած սրտերը՝ այդ

միայն Աստուած գիտէ»։

Այս խօսքերի վերայ Քեօռ-օղլու սրտի մէջ եղած
բոլոր կասկածը փարատուեց և կրկին անհոգ կերպով
շարունակեց իր ճանապարհը. իսկ սրաթռիչ ծիծեռնակի
նման սլանում էր նրանց յետևից արագաթռիչ Ղռաթը։

Երկար չը տևեց այս արշաւասոյր ընթացքը, երբ
նրանք արդէն մօտեցան խմբին և բարևեցին։

Խումբը պատուի ու յարգանքի համար, երկու մա-
սի բաժանուեց և ճանապարհի երկու կողմը կանգնե-
լով՝ մէջ տեղը լայն ու ընդարձակ ասպարէզ բաց արաւ։

Անվեհեր Քեօռ-օղլին, կանգնելով ասպարէզի մէջ
տեղը, նախ և առաջ մի սուր ակնարկ գցեց այս ու այն
կողմ և քաջ հրամանատարի նման վեհանձնաբար իւր
խրոխտ ձայնով բարևեց ամենքին։ Իսկ նրանք փոխա-
դարձաբէս միաձայն բարևեցին նրան, առանձին յարգան-
քով ու խոնարհութեամբ։

Քեօռ-օղլին մի երկու կողմնակի տեղեկութիւն ստա-
նալով նրանցից՝ ճանապարհը շարունակում է։

Պօլի-բէգի մի ակնարկով խումբը հետևում է իրանց.
բայց բանը նրանումն է, որ Ղաճար-Ալու փորը չի վերց-
նում այդքան բանը։ Նա սաստիկ մտատանջվում է, կիր-
քը խեղդում է նրան, համբերութիւնը հատնում է և
շառագունած մօտենում է Պօլի-բէգին ու նրան բացա-
տրում իւր մտքի չար խորհուրդն ու դիտաւորութիւ-
նը. —«սիրելի՛դ իմ Պօլի, ասում է դաւաճանը, եթէ չեմ
վիրաւորի ձեր ազնիւ սիրտն ու հոգին, խնդրում եմ իմ
այս երկու խօսքին լաւ միտ դարձնէք, որովհետև հէնց
մեր անձնական օգուտը այսպէս է պահանջում, ու ըստ
այնմ շարժուիք։ Դուք չարաչար կը սխալուիք այս գոր-

ծի մէջ և ձեր բոլոր ջանքերը ապարդիւն կանցնին ու
երբէք չէք կարող սուլթանի համակրութիւնը վայելել·
եթէ դուք, դարձեալ կրկնում եմ, այս մեծահռչակ մար-
դին այսպէս ազատ ու սպառազինուած ու արագաթռիչ
նժոյգը տակին ներկայացնէք սուլթանին, ինչ էք կար-
ծում, արդեօք նա ձեզ չը պիտի հարցնէ, թէ սա ինչ
տեսակ բռնաւոր է կամ գերի, որ այսպէս ազատ, համար-
ձակ կանգնել է իմ հանդէպ: Այն ժամանակ նա ինքն
իրան յակամայից պիտի մտածէ, թէ անկարելի է որ այս
պիսի քաջը գերի ընկնի Պօլի-բէգի ձեռքին և այն ժա-
մանակ դուք իրաւամբ կենթարկուիք սուլթանի իրա-
ւացի կասկածանքին ու ձեր բոլոր գաղտնիքը իսկոյն կը
մերկացուի թէ սուլթանի և թէ ընդհանրութեան առջև»:
Պօլի-բէգը փոքր ինչ մտածելուց յետոյ, համոզւում
է, որ ուղիղ են Ղաճար-Ալու ասածները և հարցնում է.
—«ուրեմն ինչպէս անելու ենք, խնդրեմ բացատրէք և
պարզ յայտնէք ձեր մտքի գաղտնիքը, որովհետև կեան-
քի մէջ դուք աւելի փորձուած էք, քան ես»:

Ղաճար-Ալին պատասխանում է.—«Եթէ դու ուզում
ես հասնել քո նպատակին ու գրաւել սուլթանի համակ-
րութիւնը՝ հետևիր իմ այս տուած խորհրդին: Այ, լաւ
մտիկ արա և տես որ նա մեզ բոլորիս համարեա բանի
տեղ չի դնում և խորոխ առիւծի նման աներկիւղ ա-
ռաջ է անցել և ձիավարում է, իսկ մենք, որպէս ստրուկ-
ներ քաշ ենք գալիս նրա յետևից. չէ՞ որ դա մեզ պա-
տիւ չի բերէ: Այդպիսով աւելի մենք մեզ արհամարած
կը լինինք, քան թէ նա: Լաւը, այս է ահա իմ խորհուր-
դը. քանի որ նա դեռ միամիտ է, սրանից աւելի յարմար
միջոց չկայ, որ դու մի լաւ խաղ խաղաս նրա գլխին և

մեր ծրագիրը տեղն առնի: Բարեկամաբար մօտեցիր նր-
րան և ձեռքիդ անեցած այդ երկաթեայ լախտով մի
ուժեղ հարուած տուր ու վայր գլորէ ձիուց, իսկ մենք
իսկոյն և եթ կը ձերբակալենք այդ հրէշին ու այնպէս
կը ներկայացնենք սուլթանին»:

Այս խօսքերի վերայ Պօլին մնում է շուարած ու
մի զարմացական հայեացք ձգելով նրա երեսին՝ պատաս-
խանում է. «ո՞հ, ինչ էք ասում, միթէ կարելի՞ է այդ-
պիսի բան անել. չէ՞ որ ես երդուել եմ նրան չը վնա-
սել, ուրեմն ես ինչպէս կարող եմ երդմնազանց դառնալ:
Երդուել եմ, այն էլ Ղուռանի ու նրա հեղինակի սուրբ
անունով, որ մեզ համար ամենանուիրական բանն է»:

Ղաճար-Ալին քմծիծաղ տալով՝ պատասխանեց.—
«դուք շատ միամիտ ու անփորձ էք, տէր իմ. դուք պի-
տի գիտնաք, որ ձեր արած երդումը մնաց այն տեղ Զամ-
լիբելում, ոչ թէ հետներս բերինք: Նոյնպէս և այս էլ
պիտի գիտնաք, որ աշխարհավարական տեսակէտից նա-
յելով, երդումը՝ ճշմարտութիւնը խեղաթիւրելու մի լոկ
պատրուակ է, ուրիշ ոչինչ»:

Այս դաւաճան խօսքերի վերայ, կարծես Պօլին հա-
մոզուեց նրա տուած խորհրդին ու բոպէաբար փոխուեց:

Նրա աչքերը արիւնով լցուեցին, կիրքը շարժուեց,
սիրտը եռ եկաւ, արիւնը պղտորուեց և ունքերը կախ
արած՝ թեւերը վեր քշտեց, ուղղուեց ձիու վերայ և ու-
ժերը հաւաքած կատաղի վագրի նման գոռալով յարձակ-
ուեց միամիտ որսի վերայ ու նրա յետևի կողմից մի այն-
պիսի ուժգին հարուած տուեց գլխին, որ անմիջապէս
համարեա անշնչացած գետին գլորուեց և հազիւ կարողա-
ցաւ այսքանը նուազ ձայնով միայն արտասանել.—«անի-

րաւ, այս ինչ արիր, երդմամբ ինձ խաբեցիր և իմ արած լաւութեան փոխարէնը՝ այս էր հատուցումը»։

Այդ րոպէին ո՞վ էր լսում նրա հառաչանքը, կամ ո՞վ նրա խօսքերը բանի տեղ դնում։

Խարդախ Ղաճար-Ալին անմիջապէս ձիուց վայր թըռաւ, իսկոյն նրա օրինակին հետևեցին և միւսները, որոնք վրէժխնդրութեամբ՝ մի կողմից քաշքաշում, ծեծում էին և միւս կողմից թևերը ետևից կապոտած, զէնքերը Ղռաթի թամքից քաշ արած, քաջ Քոռ-օղլին տրտում ու դողդոջուն ոտքերով, ձիաների առջևը գցած տանում էին։ Իսկ Ղռաթը կարծես զգայուն և բանական մարդի նման, մերթ ընդ մերթ սրտի խորքից հոգոց էր քաշում և երբեմնապէս արտասուալի աչքերով տիրոջը մտիկ տալիս ու խէթ աչքով նայում դաւաճանների կողմը։

Պոլսի բոլոր ժողովուրդը ոտքի էր կանգնել և ամէքն էլ հետաքրքրվում էին տեսնել այդ մեծահռչակ կտրիճին։ Բայց ամենից աւելի հետաքրքրվում էր Դոնա-խանումը, Պօլի-բէգի խոստացեալ հարսնացուն։ Նա միաժամանակ ցանկանում էր տեսնել թէ մեծահամբաւ Քեօռ-օղլուն և թէ իւր ապագայ փեսացուի արած քաջագործութիւնը։

Նա իսկոյն հրամայեց նաժիշտներին, որ շուտով պատգարակ բերեն իւր համար.—«ես պէտքէ առաջ գընամ, ասում էր, ինձ շատ ցանկալի է տեսնել թէ ինչ տեսակ անձնաւորութիւն է Քեօռ-օղլին, որ այդքան մեծ հռչակ է տարածել աշխարհում»։

Նաժիշտները անմիջապէս կատարում են հրամանը։ Հրաշագեղ Դոնա-խանումը զուգուած ու զարդարուած

նստում է պատգարակը և շրջապատուած իւր գեղեցիկ նաժիշտներով՝ առաջ է գնում։

Դոնա-խանումը, երբ մօտենում է եկւորներին՝ իւր ձիւնափայլ մետաքսեայ սպիտակ քօղը մի կողմ առած՝ ուզում է լաւ տեսնել Քեօռ-օղլուն։ Մի սուր ու զննական հայացք ձգելով նրա այրական դէմքին, յափշտակվում է նրա գեղեցկութիւնով և շատ ափսոսում է նրա այդ վիճակի վերայ։

Քեօռ-օղլին նոյնպէս տեսնում է Դոնա-խանումի ակնախտեղ պատկերը. հիասթափուած բացականչում է. «Պօլի-բէգ, ի սէր Աստուծոյ, բարի եղիր և մի փոքր սպասիր—կանգ առ և հրամայիր թևերս բանալ, որովհետև սիրտս սաստիկ վիրաւորանքից քիչ է մնում տըրաքուի, մանաւանդ այս վիճակի մէջ, մի երկու խօսք ունիմ ասելու, ասեմ ու գնանք»։

Պօլին յարգելով նրա խնդիրը, թևերն արձակում է։ Իսկ Քեօռ-օղլին իւր պարտութեան ցաւերը խառնելով Դոնա-խանումի սիրոյ նշոյլների հետ, սկսում է սրտառուչ կերպով երգել։

Դոնան երբ ցոյց տուեց հեռուից
Իւր նազելի հասակը ինձ,
Յուսով եմ լինի կարեկից,
Այն չքնաղ արեգակը ինձ։

Խաբուած եմ մէկ ուրացածից,
Ազգով—տոհմով նզովուածից,
Անողոք բաղդի հարուածից
Վիճակուեց այս ծուղակը ինձ։

Քեօռ-օղլին եմ մեծահամբաւ,
Մինչ Եգիպտոս առայ գլաւ,
Տես որո՞նց ենթակայ արաւ
Անիրաւ ժամանակը ինձ։

Երգի վերջին երկու տողը դեռ չէր կրկնել, որ Պօլին
սաստիկ զայրացած բացականչեց.—«Ձայնդ կտրի՛ր, անպի-
տան կաւատ, այդ ինչ ակնարկութիւններ ես անում.
ինչ ես ուզում հասկացնել... դարձեալ չե՞ս ուզում կո-
տրուել, չե՞ս ուզում վերջ տալ այդ քո զազրալի պարծեն-
կոտութեանը. ուզո՞ւմ ես որ ատամներդ բերանդ լցնեմ»,
ասելով մի երկու ապտակ հասցրեց երեսին։ Կրկին կա-
պել տուեց թևերը ու այնպէս տարաւ «Եըլդըզ Քեօշկ»
սուլթանի պալատը, ուր սուլթանը իւր պալատականնե-
րով անհամբեր սպասում էր տեսնել Քեօռ-օղլուն։
Պալատը շրջապատել էր ամբոխի խուռն բազմու-
թիւն։ Անզօր մարդիք տրորվում էին հզօրների ոտքի
տակ, որպէս ճրճիներ։ Մի կողմից ամբոխի հարահրոցը՝
միւս կողմից ճմլուածների ողբն ու աղաղակը օդը թըն-
դացնում էին։ Ենիչարի-Աղասիք ու Պալի-բաշիք սրերը
քաշած հազիւ կարողանում էին ճանապարհ բանալ։ Իսկ
Պօլի-բէգն ու Ղաճար-Ալին սրերը մերկացրած, իբր պաշ-
տօնական կերպով ձերբակալուած Քեօռ-օղլուն, իր սի-
րելի Ղռաթի հետ միասին ներկայացրին սուլթանին։
Թէ սուլթանը և թէ պալատականները, երբ տեսան
Քեօռ-օղլու յաղթանդամ կազմուածքը՝ զարմացան։ Նրա
ջլապինդ բազուկները՝ մինչև ծնկներն էին հասնում,
վահանաձև լայն կուրծքն ու թիկունքը հաւասարաչափ
համապատասխանում էին բարձր հասակին. բոլորակ ե-

րեսի վերայ խոշոր սևորակ աչքերը, որպէս մոլորակներ,
փայլում էին թաւ ունքերի տակից. հաստկեկ՝ բայց կա-
նոնաւոր շրթունքների արանքից՝ երևում էին նէգրա-
կան սպիտակ ատամները. ասիական քիթը իշխում էր
երկու կողմի սև բեխերին, որոնք կարծես երկու ան-
հաշտ վիշապների նման գլուխ գլխի տուած, սրածայր
պոչերը հասցրէլ էին մինչի նրա ականջները։
Այս հերոսը բոլորի ուշադրութիւնը գրաւել էր իւր
վերայ, կանգնել էր լուռ ու մունջ և սպասում էր սուլ-
թանի վճռին։
Նա բոլորովին մահից չէր վախենում... ոչ դահճի
սուր դանակը, ոչ անարգ կախաղանը և ոչ էլ՝ սուլթա-
նական բարբարոս տանջանքներն էին սարսափեցնում
նրան։ Միմիայն մի բան էր ճնշում նրա սիրտը, մի հե-
րոսական ինքնասիրութիւն էր հալում մաշում նրան,
որ ինքը իւր անունին վայել հերոսի պէս չը պիտի մեռ-
նի պատերազմի դաշտում։
Սուլթանը երկար ու բարակ հարց ու փորձից յետոյ՝
ասաց.—«Քեօռ-օղլի, դուք ո՞րտեղացի էք»։
«Թագաւորն ապրած կենայ, սիրտս այն ատրճան
վիրաւոր է, որ իմ կցկտուր պատասխանները չը պիտի
կարողանան բաւականութիւն տալ ձեզ», ասաց Քեօռ-օղ-
լին։ Փոքր ինչ լռութիւնից յետոյ նորից շարունակեց.
—«ա՜հ, որքան մեծ բարիք արած կը լինէիք ինձ, մե-
ծափառ թագաւոր, եթէ հրամայէիք տալ ինձ մի նուա-
գարան, որովհետև ես մանկութիւնից ուխտել եմ նրա-
նով յայտնել իմ սրտի թէ ուրախութիւնը և թէ վիշտ,
և այն օրուանից նա է եղել իմ լեզուի բանալին և մի-
այն նրա միջոցաւ կարող եմ բացատրել ձեզ իմ ով՝ կամ

որտեղացի լինելըս»։

Սուլթանի հրամանով՝ իսկոյն տալիս են Քեօռ-օղլուն պալատական աշուղներից մէկի նուագարանը, որը զարդարուած էր զանազան ձևի կտրտուած սատափներով։

Քեօռ-օղլին կարծես բոլորովին մոռացութեան տըւեց իւր ունեցած ցաւերը. միանգամայն յափշտակուելով նուագարանի գեղեցկութեան վերայ։ Կոթի վերայ փաթաթած սիմերի արանքից անմիջապէս հանեց կտընտոցը (Թազանէն), նախ շարունակեց նուագել՝ և ապա, ոգևորուած սկսեց երգել, որը խիստ մեծ տպաւորութիւն թողեց սուլթանի և պալատականների վերայ։

Մեզ տոհմական Խանլի-Մուրատ են ասում,
Մեր մէջ եղել է ձգտում քաջութեան,
Մեր երկիրը քաջ մարդիք է ծնանում,
Թշնամու դէմ մէկը դառնում է քսան։

Քաջութիւնը ժառանգել ենք պապերից,
Սար ու ձոր դղրդում է մեր ահից,
Զենք հեռացել այն ապառաժ լեռներից,
Որ եղել են լաւ դիրք պատերազմական։

Վագր ու առիւծ, մինչ բորենի, ռնգեղջիւր,
Սոսկում էին՝ երբ կառնէի ձեռքս սուր,
Քաջութիւնս գիտէ աշխարհն ընդհանուր,
Քեօռ-օղլին եմ, ներկայիս անօգնական։

Սուլթանը ուշադրութեամբ ականջ դնելով երգի բովանդակութեանը, իսկոյն ճանաչեց նրա տոհմական ծագումը, գիտէր որ նրա քաջութիւնը ցեղական է. նա և

գիտէր, որ նա պատերազմի դաշտումն է ծնուել, ուրեմն և պատերազմի դաշտումն մեռնող անհատներից մէկն է. ապա ուրեմն ինչպէս կարելի էր այսպիսի քաջ կտրիճը գերի ընկնէր Պոլի-բէգի նման մարդի ձեռքում։ Չէ որ, մտածում էր Սուլթանը, այսպիսի մարդիք մահն աւելի են գերադասում գերութեան անարգ վիճակից։ Ո՛չ, ո՛չ, այստեղ մի անթափանցելի գաղտնիք ու խարդախութիւն կայ, որը ծածկուած է մութ ու թանձր վարագուրով, որի բացանելը այժմ դեռ դժուար է։

Այսպէս մի քանի րոպէ տարտամ մտատանջութեան մէջ մնալով սուլթանը, յանկարծ բացականչեց.—«Պոլի-բէգ, արի ճշմարիտն ասա, թէ դու ինչ միջոցաւ, կամ ինչ հնարով կարողացար գերել այս լեռնային իշխանին, այս անպարտելի հերոսին, որը անվախ կերպով կանգնել է իմ հանդէպ, անվախ ու համարձակ խօսում է, ամեն երկիւղ առ ոչինչ համարելով։ Իմ կարծիքով, դիւրին չէ այսպիսի մէկին հեշտութեամբ ձերբակալել կամ գերել, այն էլ Զամլիբէլում, իւր քաջերի մօտ և հրաշալի Ղռաթի վերայ նստած. ո՛չ, չեմ կարող հաւատալ»։

«Թագաւորն ապրած կենայ, կասկածաւոր պատասխանեց Պոլին, թէպէտ և իմ քաջութեան և այս իմ սրի շնորհիւն եմ ձերբակալել ու գերել այդ հերոսին, բայց իրաւ, ես էլ եմ խոստովանում, որ անյաղթ անհատներից մէկն է։ Այս էլ յայտնապէս ու ճշմարտօրէն կը խոստովանեմ, որ ինձ նման մի քանի տասնեակ մահկանացուներ չէ թէ կը յանդգնէին մօտենալ սրա ստուերին, այլ աղ ու համեմ էլ չէին լինի սրա քաջութեան առաջ։ Բայց... Դոնա-խանումի սէրն ու մեծութեանդ աշխարհասաստ և ահարկու հրամանը գործել տուին ինձ այս

քաջութիւնը»:

Այս խօսքերի վերայ սուլթանի կարծիքը մասամբ փարատուեց և մի քանի անգամ «աֆէրիմ» բառը չը խնայեց շռայլել նրան ու ձեռքը Պօլիի ուսին դնելով՝ աւելացրեց՝ «Պօլի-բէգ, այս հերոսի հետ դուք ինքներդ էք եղել պատերազմի դաշտում, այո՛, դուք անձամբ պատերազմել էք սրա հետ ու ներկայ էք եղել սրա արած կատարածին ու բարբարոս անգթութիւններին. սրա ձեռքով է թափուել այնքան անմեղ արիւնները, ուրեմն դուք աւելի լաւ գիտէք թէ սա պատժի, թէ պատուի է արժանի, վերջ ամենայնի ես սրա դատը յանձնում եմ ձեզ, գնացէք ինչպէս որ գիտէք, այնպէս էլ արէք:

Այս խօսքերից յետոյ, Քեօռ-օղլուն իսկոյն դուրս տարան պալատից ու դատը մնաց անիրաւների ձեռքին: Հզօր առիւծը անմեղ ոչխարի նման սպանդանոց էին տանում... կարծես իսպառ մեռել էր նրանց մէջ արդարութեան խղճի ձայնը:

Ողորմելի Քեօ-ռօղլին մնացել էր շուարած, երեսը որ կողմը որ շուռ էր տալիս, իրան թւում էր, թէ չինական պարիսպներով է շրջապատած: Այլ ևս ոչ մի յոյս չկայ ազատութեան... իւր արած լաւութեանց փոխարէն բոլորովին հակառակն էր տեսնում. բաղդը բոլորովին երես էր դարձրել իրանից. ամեն ինչ արդէն վերջացել էր: Չկար մէկը, որ իւր դրութեան մասին լուր տանէր Չամլիբէլ:

Այդ միջոցին մտքի մէջ խորասուզուած, լուռ ու մունջ տանում էին Քեօռ-օղլուն, երբ յանկարծ Պօլի-բէգը մելամաղձոտ ձայնով հարցրեց շրջապատողներին. «սրա դատը ինչպէս պէտք է անել:»

«Շատ հասարակ կերպով», վրայ բերեց Ղաճար-Ալին:

«Ուրեմն ինչպէս անելու է, խնդրեմ շուտով ասացէք»:

«Ահաւասիկ, Գում-Գափու կոչուած արուարձանում, յայտնի մեղապարտների համար 40 կանգուն խորութեամբ մի հոր կայ փորած. որան էլ ի թիւս այլ մեղապարտների կը գցենք այնտեղ, թող գնայ սովից ու ծարաւից տանջուելով մեռնի կորչի, այն ժամանակ ինքն էլ կազատուի, մենք էլ»:

«Կեցցէք, Ղաճար-Ալի, կեցցէք, ուրախութեամբ ձայն տուեց Պօլի-բէգը. ինչ լաւ էք մտածել, է... Համաձայն իմ արած երդման, որ արել էի Չամլիբէլում, որ սրա մի մազին անգամ չը դիպչեմ, երբէք չի խախտվում իմ ուխտն և պայմանը»: Ահա այսպիսի խօսակցութիւնով հասան Գում-Գափու, ուր գտնվում էր սարսափ տարածող ահռելի վիհը, որ իւր հաստաշուրթ ու ատամնագուրկ բերանը բաց արած, սպասում էր թշուառ զոհերին, որ անյագ կոկորդիլոսի նման կուլ տայ նրանց:

Չը մոռանանք ասել, որ Ղռաթն և հետներն էին տանում, այն յայտնի Ղռաթը, որի համբաւը տարածուել էր ամբողջ քաղաքում և ամեն մարդ սրտով փափագում էր տեսնել նրա գեղեցիկ պատկերը: Տաւարավաճառները (ջամբազները) սիրահարուել էին նրա հրաշագեղ տեսքով և խումբ խումբ պտտում էին յետևից ու բնաւ չէին ուզում հեռացնել իրանց աչքերից:

Արդէն թօկը կապել էին Քեօռ-օղլու մէջքին, որ իջեցնեն լայնակոկորդ վիհը՝ երբ մի խումբ տաւարավաճառ մօտեցան Պօլի-բէգին ու խնդրեցին, որ Ղռաթը ծախէ իրանց:

Պօլի-բէգը այդ մասին խորհուրդ հարցուց Ղաճար-Ալուց. նա էլ համաձայնուեց ծախելու, բայց խնդիրը մնաց գնահատութեան վրայ, որ ոչ ոք չը գիտէր, թէ ինչ գին որոշէ Ղուաթին։

Ղաճար-Ալին փոքր ինչ մտածելուց յետոյ, ասաց.— «մենք ինչո՞ւ ենք մոլորուել և ի՞նչ հարկ կայ այդ մասին երկար մտածելու, քանի որ տէրը այստեղ ներկայ է և նա աւելի լաւ կարող է գիտնալ իւր ձիու գինը, քան թէ մենք։ Ուրեմն իրանից պէտքէ տեղեկանալ»։

Այս խորհուրդը խիստ հաճոյ թուեցաւ Պօլի-բէգին, որը անմիջապէս դառնալով Քեօռ-օղլուն՝ հարցրեց.— «ի՞նչպէս պէտքէ գնահատել Ղուաթին, քանի որ նա էլ ձեզ նման գերի է. նրան պահել չի կարելի, որովհետև դժուար է, ուրեմն պէտքէ անպայման վաճառել, ըստ որում այս անյագ՞ կենդանուն պահելը մեզ ձեռնտու չէ»։

Խղճալի Քեօռ-օղլին, երբ լսեց այս անակնկալ լուրը, աչքերից արցունքը հեղեղի նման թափեց ու աւելի ծանրացան նրա ցաւերը, չնայելով՝ որ նա արդէն մահուան էր դատապարտուած, բայց կարծես գիլարանով պրկում ու սեղմում էին սիրտն ու հոգին։

Քեօռ-օղլին իւր դատապարտութեան մասին այնքան չէր մտածում, որքան Ղուաթի ծախելու մասին։ Ո՜հ, ի՞նչ անտանելի ցաւ, ի՞նչ անողոք վիճակ, ի՞նչ անել դրութիւն։

Երևակայեցէք, Քեօռ-օղլու Ղուաթը, այն ամենհի Ղուաթը հրապարակաւ ծախվում է, այն էլ իւր ներկայութեամբ։

Այդ բանը թէ որքան ցաւ էր և դառն վիշտ տիրոջ համար, մենք իբրև մարդ կարող ենք քննել ու

դատել։

Բայց Քեօռ-օղլին որքան չալասիրտ ու անհամբեր էր, այնքան էլ արկածներին ու դէպքերին դիմացող ու համբերատար էր. Հէնց այդ էր պատճառը, որ երբ այս խօսքերը լսեց, վստահ ու աներկիւղ պատասխանեց.— «ի՞նչ էք ասում Պօլի-բէգ, դուք ինձ ձեռք էք առել, չէ՞ որ ես Քեօռ-օղլին իմ, իսկ դուք դարձեալ նոյն Պօլին. քեզ նման երկչոտ նապաստակները միայն կարող են մահուան դատապարտութիւնից սարսել ու դողալ. իսկ ես՝ բնաւ. ինքս լաւ գիտեմ ինչ ասել է աշխարհ։ Մահը մի և նոյնն է ինձ համար.. այսպէս թէ այնպէս, մի օր ծնուել եմ, մի օր էլ պիտի մեռնեմ... բայց այնու ամենայնիւ մի անգամ էլ տուեցէք ինձ իմ սազը, որ կարողանամ ասել ձեզ Ղուաթի արժէքը»։

Նոյն րոպէին կատարում են Քեօռ-օղլու պահանջը։ Իսկ նա վեր առնելով սազը՝ հողմայոյզ ու ալէկոծեալ ծովի ալիքների նման մռնչելով, սրտառուչ երգում է։

Ղըռաթը մատչելի գնով չի ծախուի,
Հարիւր հազար լիրայ ստակով չեմ տայ,
Հարիւր հազար վահան, հարիւր հազար սուր,
Հարիւր հազար ճօճուն նիզակով չեմ տայ։

Հարիւր հազար մզկիթ, հարիւր հազար գիրք,
Հարիւր հազար կանոն, հարիւր հազար դիրք,
Հարիւր հազար նուխսայ, հարիւր հազար գիրկ,
Հարիւր հազար անսուտ վիճակով չեմ տայ,

Հարիւր հազար կապերտ, հարիւր հազար գորգ,
Հարիւր հազար հսկայ, հարիւր հազար Տորք,

Հարիւր հազար վրան, հարիւր հազար զօրք,
Հարիւր հազար բերդ ու դղեակով չեմ տայ։

Քեօռ-օղլին եմ, թէ տաք հարիւր հազար ալտ,
Հարիւր հազար ոսխակ, հարիւր հազար վարդ,
Հարիւր հազար պչրանք, հարիւր հազար զարդ,
Հարիւր հազար ոսկէ բաժակով չեմ տայ։

Լսելով այսպիսի անհեթեթ ու ծայրայեղ գնահատութիւնը, տաւարավաճառները ծաղր անելով կամաց կամաց հեռացան։

Երբ երգը վերջացրեց՝ վերջացաւ և ամեն բան։

Այնուհետև Պօլի-բէգի մի նշանացի ակնարկով, անմիջապէս Քեօռ-օղլուն կախեցին հօրը։

Հանդիսատես հետաքրքիր ժողովրդից ոմանք տխուր և ոմանք ուրախ տրամադրութեան տակ ցրուեցան, այլ և ոչ ձայն կար՝ ոչ ծպտուն. իսկ մռայլ հօրը ծածկուեց գերեզմանական խոր լռութեան տակ։

Կէսօրին, խաբեբայ Պօլի-բէգն ու Ղաճար-Ալին յաղթանակած մօտիկ ապագայի փայլուն յոյսերով, վերադառնան պալատ և ներկայանալով սուլթանին, ամեն ինչ վեճադրելով հաղորդեցին նրան։

Թէ սուլթանը և թէ պալատականները հաւանեցին Պօլի-բէգի արածներին և վարձատրեցին թէ շքանշաններով և թէ խալաթներով։

Սուլթանը մի քանի գովասանական խօսքերից յետոյ, աւելացրեց թէ՝—«Պօլի-բէգ, իմ խոստումը՝ խոստում է, ուրեմն գնացէք և ձեր պատրաստութիւնը տեսէք, որ շուտով կայանալու է ձեր ամուսնութեան դաշինքը, իմ հարազատ դստեր Դոնա-խանումի հետ, ուրեմն այլ և ս ժամանակ մի կորցնէք»։

Պօլի-բէգը այս խօսքերից, համարեա կտակածանքից դուրս եկաւ. Ղաճար-Ալու խօժ սրտի ծաղիկները բացուել էին ապագայի յոյսերով շլացած։

Սրանք իրանց շնորհակալութիւնը յայտնեցին մեղկ ու սառը՝ թամաննայով և միասին դուրս գալով պալատից, ուղևորուեցին դէպի Ղաճար-Ալու բնակարանը, ուր հաւաքուել էին իրանց բարեկամները, ուրախութեան համբոյրներ մատուցանելու պատերազմի դաշտից վերադարձող քաջերին։

Գնալիս՝ յանկարծ Պօլի-բէգը կանգնեց ճանապարհի մէջ տեղը ու ապշութեամբ՝ ասաց.—«մտերիմ բարեկամ, խնդրեմ ասէք, սա իրողութի՞ւն էր՝ թէ երևակայական ցնորք»։

«Իրողութիւն է, սիրելիդ իմ, ճշգրիտ իրողութիւն, պատասխանեց խարդախ տաճիկը, փաթաթուելով Պօլի-բէգի շլնքին։

Երկուսն էլ այն աստիճան յափշտակուած էին ներկայի ու ապագայի վերայ երկար ու ձիգ խօսելով, որ չը գիտէին թէ արդէն հասել են իրանց տեղը-Ղաճար-Ալու բնակարանի դրան մօտ, ուր կանգնած էին մի խումբ ողամարդիք, որոնք մօտենալով նրանց միաձայն գոչեցին. «դուք բարով, հազար բարի էք եկել», ասացին ու միմեանց փաթաթուելով՝ համբուրուեցան։

Գրկախառնութիւնը մի քանի անգամ կրկնուեց և ուրախութիւնը լիապէս թագաւորում էր Ղաճար-Ալու տանը՝ ու մի առանձին կենդանութիւն տալիս նրան։

Թող գրանք մի քիչ ժամանակ անցկացնեն այդտեղ,

իսկ մենք դառնանք Դոնա-խանումի մօտ ու տեսնենք թէ՝ նա ի՞նչ է հոգում ու մտածում անմխիթար Քեօռ-օղլու մասին։

Ամառնային արևադարձի մութ ու խաւար երեկոներից մէկն էր, կապոյտ երկնակամարի վերայ փայլում էին բիւրաւոր աստղեր։ Այգիների դալարագեղ ճեմելիքները և ծովեզերեայ թաւշապատ զբօսավայրերը համարեայ բոլորովին դատարկուել էին։ Ամեն մարդ քաշուել էր իր բնակարանը, ամեն տեղ տիրել էր խորին լռութիւն։ Այդ միջոցին միմիայն գիշերապահների խռպոտ ու աններդաշնակ ձայները մերթ ընդ մերթ խանգարում էին գիշերային խաղաղ լռութիւնը։

Հէնց այդ միջոցին օրիորդների մի թեթև խումբ, երկու ներքինիների առաջնորդութեամբ, լուսատու լապտերները ձեռներին, արագընթաց քայլերով անցնում էին հին Պոլսի նեղ ու լայն փողոցներով։

Երկար չը տևեց յիշեալ խմբի գիշերային ճանապարհորդութիւնը, յանկարծ ներքինիները կանգնեցին, տեղեկութիւն տալով խմբապետին, որ արդէն հասել են իրանց որոշեալ նպատակատեղին—Դում-գափու, ուր գտնվում էր Քեօռ-օղլու նոր վիրապը։

Հասկանալի է, որ այդ խմբապետը Դոնա-խանումն էր—Պոլի-բէգի հարսնացուն, որը նախընթաց օրը տեսել և քննել էր հսկայ Քեօռ-օղլուն ու հիացել նրա այրական կազմուածքի վերայ։

Նա խղճահարուելով նրա վիճակին, դրականապէս որոշել ու վճռել էր, որ, որքան կարելի է, պէտք է օգնել այդպիսի տղամարդկանց... Մանաւանդ որ գաղտնի սէրն էլ իւր դերն էր խաղում այս գործում, որովհետև

Դոնա-խանումը, ինչպէս որ գեղեցիկ էր, նոյնպէս սիրում էր և գեղեցիկ ու քաջ տղամարդկանց։

Ոչ պակաս գեղեցիկ էին նաև իրան շրջապատող նաժիշտները, որոնք բոլորը հագնուած էին նոյնանման հագուստներ, ինչ որ հագել էր հէնց իրանց տիրուհին։ Այնպէս որ անծանօթ մարդի համար դժուար էր որոշել միանգամից, թէ որն է տիրուհին և որը աղախինը։

Բացի այդ՝ նրանք թէ հասակով և թէ գեղեցկութեամբ նոյնպէս նմանում էին միմեանց։ Միմիայն Դոնա-խանումը մասամբ որոշվում էր նրանցից իւր մարմարեայ կրծքի վերայ կրած ակնախտեղ խոշոր գոհարեղէն ոսկի գնդասեղով, որը գիշերային մթութեան մէջ էլ փայլում էր պայծառ աստղի նման և չորս կողմը լոյս արձակում։

Խմբապետը իւր ստորադրեալներին կարգադրեց ինչպէս հարկն էր։ Նրանք շուրջանակի կանգնեցին և մէջ տեղը կանգնած մնաց միայն Դոնա-խանումը, ինչպէս թագուհի լուսինը շրջապատուած անթիւ մեծ ու փոքր աստղերով։

Դոնա-խանումի մի ակնարկով, ներքինիները րոպէաբար բաց արին հորի տախտակամած բերանը ու նրա ափին փռեցին մի փոքր թանկագին գորգ։

Դոնա-խանումը նազաճեմ գնացքով առաջ անցաւ և հորի մօտ կամգնեց գորգի վերայ ու իւր անոյշ ձայնով կանչեց,-Քեօռ-օղլի՜։

Քեօռ-օղլին կարծես բնազդմամբ ճանաչեց նրա հրեշտակային ձայնը և իսկոյն պատասխանեց.—«Ջա՜ն, Դոնա-խանում ջան, այդ դո՞ւք էք արդեօք, թէ երևակայութիւնս է ինձ խաբում»։

«Ես եմ, Քեօռ-օղլի, ընաւ խաբուած չէք», ասաց Դոնա-խանումը։

«Ո՛հ, չքնաղ տիրուհի, արդեօք այլ ևս ինչ էք ուզում ինձանից, որ չէք թողնում, թէ այս վիրապումն էլ մի քիչ խաղաղ մնամ ու իմ սև օրը լաց լինեմ»։

«Քեօռ-օղլի, քեզ վիրաւորելու կամ անհանգստացնելու ոչինչ չունիմ, ես եկել եմ միայն քեզ տեսնելու և քո դրութեան մասին տեղեկութիւն առնելու։»

«Ա՜հ, երկնային հրեշտակ Դոնա-խանում, խնդրում, աղաչում եմ, որ ինձ համար ձեր կեանքը վտանգի չենթարկէք, մի վրդովէք իմ ցաւերը... կրկին ու կրկին խնդրում եմ, գոնէ թողէք ինձ այստեղ հանգիստ փչել իմ վերջին շունչը, որ այսուհետև այլևս չը տեսնեմ ապերախտ մարդկանց անամօթ երեսները»։

«Ի՜նչ շատ ես վրդովուել ու վիրաւորուել, Քեօռ-օղլի, մի՞թէ առաջին անգամն է կեանքի մէջ ոտք դնելդ, որ այդքան յուսահատուել ես. կարծեօք ձեզ նման քաջերը միշտ աչքի առաջ պէտք է ունենան աշխարհի փորձանքներն ու դառն պատահարները։ Հերոսները անաջող դէպքերում էլ չեն վհատուիլ, բայց դուք, ինչպէս երևում է, կարճ միջոցում ձեզ յուսահատութեան էք մատնել, որ կարծեմ բոլորովին անվայել է ձեր մեծահռչակ անուանը։ Թէպէտ ցաւ է, որ ձեր նման կտրիճը մատնուել է անիրաւների ձեռքը և ենթարկուել այսպիսի անողոք տանջանքների, այնու ամենայնիւ՝ դարձեալ պէտք է յուսալ, որ ամենաբարձրեալ Ալլահի շնորհիւ որ և է մէկը խղճահարուելով ձեզ վրայ, ծածկաբար կարող է մի կերպ օգնութեան ձեռք կարկառել և ազատել ձեզ այս անել դրութիւնից, եթէ միայն դուք

փոքր ինչ տակուն ու համբերող լինիք։ Վերջ ամենայնի, քաջդ Քեօռ-օղլի, ես ուրիշներին կասկածի տեղիք չը տալու համար՝ այստեղ երկար չեմ կարող մնալ, բայց և այնպէս ինձ քաջ յայտնի է, որ դուք սոված կը լինիք, ասացէք խնդրեմ, ինչ կերակուր էք սիրում, որ ես ուղարկեմ ձեզ համար»։

«Ազնիւ տիրուհիս, ինչ ասեմ, ես էլ չը գիտեմ... չը գիտեմ մինչև անգամ, երազի մէջ եմ, թէ իրականութեան։ Թէ և ես էլ իմ հերթում մարդ էի, իմ սեղանն էլ երբեմն լի էր հազար ու մի տեսակ անուշ կերակուրներով ու խորտիկներով, բայց այսօր ճակատագրի ձեռքը խաղալիք եմ դարձած։ Է՜հ, էլ ինչ ասեմ, իմ սովորական նախաճաշիկը միշտ եղել է մի խորոված ոչխար, 22 զոյգ հաց, 1 փութ Մարանտի լու պանիր, 5 փունտ կարագ, 2 ջամզայ սուրճ ու մի քանի տեսակ այլ և այլ քաղցրաւենիք։ Բայց այդ օրերը արդէն անցել են. անցել է նա և իմ սրտով սիրածի ժամանակը. ուրեմն անցել է և իմ կամքի խստիւ պահանջները։ Այսուհետև ես այլ ևս չեմ կարող առաջ տանել իմ ահեղ հրամանները... Միով բանիւ. էլ ինչ ասեմ, եթէ դուք կամենում էք մի բարիք կամ մեծահոգութիւն անել ինձ, այդ էլ դուք գիտէք. ես ձեր բոլոր քմահաճութիւնները սիրով ու յօժարութեամբ կը տանեմ»։

Այս ասելով, սրտնեղութիւնից սկսեց երեխայի նման հեկեկալով լաց լինել։

Դոնա-խանումը տեսնելով նրա վերջին հեծեծանքը՝ ինքն ևս տխրեց, այլ ևս սիրտը չը դիմանալով, աչքերը արտասուքով լցուեցին և յայտնի սիրուհու նման՝ սրտի խորքից խոր հոգոց քաշելով՝ տեղից բարձրացաւ,

մի քանի քայլ յետ գնալով՝ հրամայեց հօրի բերանը խնամքով, իւր նախկին տախտակեայ կափարիչով՝ ծածկել և թշուառ Քեօռ-օղլուն համբերութիւն և ազատութիւն մաղթելով, իւր նազելի խմբի հետ տխուր ու տրտում վերադարձաւ դէպի տուն։

Ճանապարհին, ուր որ Քեօռ-օղլուն գցած վիրապն էր գտնվում, մի շարք խանութներ կային, որոնցից մէկի առաջ վեհութեամբ կանգնեց և ծերունի խոհարարին հրամայեց, որ իւրաքանչիւր օր երեք անգամ ընտիր կերակուրներից մատակարարէ Քեօռ-օղլուն և հաշիւը իրանից ստանայ։ Բայց խստիւ պատուիրեց. «չլինիմ չիմանամ այս իմ գաղտնի պատուէրը ուրիշին ասես, եթէ ոչ գլխովդ կը տուժես, որ մեծ անբաղդութիւն կլինի աղքատիկ ընտանիքիդ համար»։ Այս ասելով, մի քանի ոսկի դրեց ծերունու բուռը և՝ պատկառելի քայլուածքով հեռացաւ՝ կրկին պատուիրելով, որ ուրբաթէ ուրբաթ կգաք ինձ և կստանաք ձեզ հասանելի վարձը։

Ուրեմն՝ թող Քեօռ-օղլին այստեղ հանգիստ իւր նախաճաշիկն անէ, մինչև մենք կրկին դառնանք Զամլիբէլ և տեսնենք ինչ է անում չքնաղ Նիկեար խանումը։

Ինչպէս Քեօռ-օղլին հեռացել էր Զամլիբէլից, ոչ մի տեղեկութիւն չկար նրա մասին, թէ նրա ստորադրեալ քաջերը և թէ նրա ընտանիքը, բոլորն էլ կասկածանքի մէջ էին և տխուր։ Նիկեար խանումը խոմ մըտատանջութեան մէջ հալուել—մաշուել էր և ոսկոր ու մորթ դարձել։ Ինչե՞ր չէին անցնում նրա մտքով և ինչե՞ր չէին պատկերանում նրա աչքի առաջ։

Ահա այդպիսի վարանման մէջ, մի գիշեր Նիկեար խանումը երազում տեսնում է, որ ծովի խաղաղ մակե-

րևոյթի վերայ մի մեծ նաւ է լողում և յանկարծ ջրից երկու փղեր դուրս գալով, յարձակվում են նաւի վերայ և խորտակում ու խորասուզում նրան, իսկ իրանք իսկոյն անհետանում։

Այդ սարսափելի րոպէին, քրտնաթոր Նիկեար խանումը, յանկարծ քնից վեր թռչելով, համոզվում է, որ անպատճառ Քեօռ-օղլին վտանգաւոր նեղութեան մէջ է։ Անմիջապէս կանչում է Այվազին, պատմում նրան իւր երազը և հրամայում, առանց րոպէ կորցնելու ձայն տալ քաջերին, որ ուր էլ և լինի, շուտափոյթ օգնութիւն հասցնեն Քեօռ-օղլուն։

Առանց ժամավաճառ լինելու, Այվազը քաջերին հաւաքում է Նիկեար խանումի սենեկի դրան մօտ, ուր անհամբեր սպասում են։

Նիկեար խանումը, դուրս գալով սենեակից, Քեօռ-օղլու սազը կուրծքին սեղմած, արտասուաթոր աչքերով սկսում է երգել հետևեալ սրտաշարժ երգը.—

Ասացէք դուք, ո՜վ իմ քաջեր,
Ի՞նչ եղաւ մեր գլխաւորը.
Տեսել եմ խիստ վատ երազներ,
Ի՞նչ եղաւ մեր գլխաւորը։

Ինչպէս որ նա հեռացել է,
Քունն աչքիցս չքացել է,
Սիրտս անվերջ մտածել է,
Ի՞նչ եղաւ մեր գլխաւորը։

Խաւարեց արևս չքնաղ,
Լացի փոխարկուեց իմ ծիծաղ,

Նիկեար խանումը ձեզ մատաղ,
Ի՞նչ եղաւ մեր գլխաւորը։

Այս երգով բոլորի ուշադրութիւնը գրաւեց, ամենքը զգաստացան և համոզուեցին, որ անպատճառ Քեօռ-օղլուն մի փորձանք պատահել է. բոլորը տխրեցին և մինչև անգամ շատերն էլ արտասուեցին։

Նիկեար խանումը, տեսնելով որ իւր սազնդերը քաջերի վերայ ուրիշ տպաւորութիւն թողեց, սազի փոխարէն վեր առաւ Քեօռ-օղլու մշտապէս գործածած ոսկէ բաժակը և լցնելով նաւան անուշահամ գինին, առաջարկեց խմելու.—«Ով որ Քեօռ-օղլուն սիրում է, ասաց, ու ճանաչում նրա երախտիքը ու յարգում նրան, թող վեր առնի այս բաժակը և խմէ ու խնկոյն առաջարկէ նրան շուտափոյթ օգնութեան հասնելու։»

Այս յորդորական խօսքերը լսելով քաջերից մէկը — Իսապալին, ձեռքը մեկնեց, վեր առաւ բաժակը և մի քանի պատշաճաւոր խօսքեր ու բարեմաղթութիւններ անելով Քեօռ-օղլու համար՝ քամեց մինչև վերջին կաթիլը։ Բայց տեսնելով, որ ոչ ոք իրան ընկերանալու մտադրութիւն չունի, այս անգամ ինքը վեր առաւ սազն ու երգեց։—

Այսօր մի կտրիճ եմ ուզում,
Ուր որ գնամ, նա գայ ինձ հետ.
Թէ ես մեռնեմ օտար երկրում,
Նա էլ մեռնի, մնայ ինձ հետ։

Բերդ, թէ ամրոց, զօրք ահագին,
Երբ հակառակ մեզ դէմ դրին,

Իւր սուրը թշնամեաց գլխին,
Շողացնէ անխնայ ինձ հետ։

Մատաղ լինի Իսապալին,
Անկեղծ—հարազատ ընկերին,
Քեօռ-օղլու նման քաջերին,
Ջերմ սիրով սիրէ նա ինձ հետ։

Երբ Իսապալին նկատեց, որ երգն էս չազդեց ոչ ոքի վերայ և ամենևին պատրաստականութիւն ցոյց տուող չեղաւ իւր հետ ընկերանալու, այնուհետև յուսակտուր վճռեց, որ ինքը միայնակ գնայ իր ուխտը կատարելու ու իւր տիրոջը գտնելու։

Այլևս մտածելու ոչինչ չկար, նա, վիրաւորուած ընկերների այսպիսի սառն վարմունքից, ուղղակի դուրս եկաւ, սկսեց իւր պատրաստութիւնը տեսնել։

Հագաւ իւր ճանապարհորդական թեթև զգեստները, զինուեց ընտիր զէնքերով և բոլորովին կազմ ու պատրաստ, սպասում էր ճանապարհ ընկնելու։

Բայց մինչև նրա պատրաստուելը, ախոռապանն էլ նրա ձին պատրաստեց ու սանձը ձեռին բռնած սպասում էր դրանը։

Այդ միջոցին անձնուրաց Իսապալին զբաղուած էր իւր ընկերներով, որոնց ուրոյն ուրոյն ձեռք տալով ու համբուրուելով՝ մնաք բարով ասաց։

Այդ արարողութիւնից յետոյ՝ դարձաւ դէպի իւր նժոյգը, համբուրեց աչքերը, շոյեց ճակատը, ուղղեց խնամքով հիւսած բաշը և ոտ դնելով ասպանդակին, ծտի նման թռաւ Արապաթի (այս էր ձիու անու-

նը) քամակը ու եղեգնեայ նիզակը ճօճացնելով և ձին չափ գցելով, մեկնեց Զամլիբէլից։

Նրա այդ յուզուած միջոցին, քաջերից շատերը ձի նստան նրան ճանապարհ դնելու։

Թէ և այդ ժամանակ նրան ոչ ոք չէր նմանում. նա մի ուրիշ տիպ էր ներկայանում բոլորի մէջ և ամեն կերպով տարբերվում էր նրանցից։

Վերջին մնաս բարովի րոպէից (որովհետև նրա սիրտը խիստ յուզուած էր), աչքերից արտասուք էր կաթկաթում և ռունգներից համարեայ մուխ ու ծուխ արտավիժում։ Իսկ Արապաթը, այն խելօք կենդանին, կարծես բնազդմամբ հասկանում էր տիրոջ անձնուրացութիւնն ու նրա բարի նպատակը, ինքն ևս ուրախ էր։

Նրա արագաքայլ ոտքերի տրոփիւնը, խառնուելով ուրախ խրխինջի հետ, սար ու ձոր արձագանք էին տալիս։

Բաւականին հեռանալով Զամլիբէլից՝ ընկերները բարի ճանապարհ մաղթելով, վերադարձան տուն, իսկ ինքը միայնակ շարունակեց իւր ճանապարհը։

Շատ էր գնացել թէ քիչ, Աստուած գիտէ, յանկարծ նրա առջև բացուեց մի գեղեցիկ ծաղկաւէտ մարգագետին, որի միջից դուրս էր բխում մի փոքրիկ, բայց վճիտ ու սառնորակ աղբիւր։

Այդ միջոցին արդէն ճաշը կոտրուել էր և արեգակը իւր գլուխը թեքել դէպի արևմուտք՝ մայր մտնելու։ Նրա վերջին ճառագայթները ծիրանի շառաւիղներով հագիւ հազ ոսկեզօծում էին հեռաւոր լեռների գագաթները։ Միով բանիւ հրաշալի էր ընդհանուր տեսարանը և աչք պարարող։

Գրաւված այդ սքանչելագեղ տեսարանով, մի ինչ

որ բան մրմնջաց ինքն իրան մեր ճանապարհորդը և վայր իջնելով ձիուց՝ նստեց աղբիւրի մօտ և ձին թողեց փոքր ինչ արածելու, որովհետև թէ ինքը և թէ ձին յոգնած էին։ Մանաւանդ քաղցն ու ծարաւը աւելի և աւելի էին ազդում նրանց վերայ։

Արագաթռիչ Արապաթը, որ շատ էր ճնշուել քաղցից ու ծարաւից, սկսեց կամաց, կամաց արածել և հետևապէս կազդուրվում էին նրա թուլացած ջղերը։ Իսկ ինքը Իսապալին՝ բաց արաւ իւր հետ վերցրած պաշարէղէնի բղչէն, որի մէջ գտնվում էր իւր ճանապարհորդական աղքատիկ պաշարը և հանելով փռեց թաւշապատ կանաչ մարգագետնի վերայ ու սկսեց ախորժակով ուտել և ըմպել աղբիւրի զովացուցիչ ու կաթնահամ ջրից։

Մ՛ինչ նրանք փոքր ինչ հանգստանում էին ու կերակրվում, մութը հետ զհետէ սկսեց վրայ հասնել և տեղի տալ գիշերային խաւարին։

Բայց քաջ տղամարդի համար րոպէները թանգ էին և նա օր առաջ ցանկանում էր հասնել իւր նպատակին և որքան կարելի էր մի ստոյգ տեղեկութիւն ստանալ Քեօռ-օղլու մասին, օգնել նրան։

Բայց դժբաղդաբար օրը սկսում էր տարաժամել և ինքը բոլորովին անծանօթ էր շրջապատող լեռներին, բլուրներին, ձորերին, ջրերին և մինչև անգամ ճանապարհներին։ Եւ այդ պատճառով էլ վճռեց այդ ամայի վայրում գիշերել, իսկ առաւօտ լուսամութին վաղ վեր կենալ ու շարունակել ճանապարհը։

Այս մտածողութեան մէջ մի անսովոր նինջ պաշարեց նրան ու աչքերը սկսեցին ծանրանալ, գլուխը կորցրեց իւր հաւասարակշռութիւնը, նա այնուհետև այլ

ևս չը կարողացաւ դիմանալ, ձեռքից վայր դրեց ծխամփողը, որ հնոցի նման բորբոքվում էր, իսկ ծուխը ամպի նման օդի մէջ տարածվում ու անհետանում:

Այդ միջոցին մի անգամ էլ ձիուն մտիկ տուեց և փափուկ կանաչների վերայ ընկողմնելով, ծանրացած գըլուխը հանգչեցուց մաղախի վերայ ու իւր բրդոտ տառատոկը (եափունչի) քաշելով գլխին՝ հանգիստ քուն մտաւ:

Ցերեկուան անցքերի տպաւորութեան տակ, մի տեսակ զառանցանքի մէջ ընկաւ և քնի մէջ տեսնում է, որ իբր թէ մի քաջ տղամարդ ճերմակ ձիու վերայ նըստած, կուրծքը բաց, թևերը մինչև արմունկները վեր քշտած, ամեն տեսակ զէնք վրէն քաշ արած, նիզակը ձեռին, յանկարծ հոգէառ հրեշտակի նման կանգնեց իւր գլխի վերևը:

Իսապալին այս տեսարանից սարսափահար կամենում է տեղից վեր կենալ և դիմադրել երևակայական թշնամուն, բայց ձիաւորի սպառնացող ձայնն ու ազդեցութիւն գործող հայեացքը այդ րոպէին ահարկութեան մէջ են դնում ոչնչից չը վախեցող տղամարդին, այնպէս որ այլ ևս ոչ մի շարժում չի կարողանում անել:

Այդպէս մի քանի րոպէ լուռ ու մունջ մնալուց յետոյ, սպառազէն ձիաւորը ձեռքը մեկնելով Իսապալուն, հրամայական կերպով ասում է.—«առ այս բաժակը և խմիր»:

Իսկ Իսապալին տեղի ունեցող անցքից զարհուրած, նուաղ ձայնով պատասխանում է:—«Ներեցէք, տէր, չեմ կարող ընդունել, որովհետև բնաւ խմելու սովորութիւն չունիմ»:

Անծանօթ ձիաւորը խրոխտալով, կրկին ստիպում է անպատճառ խմել: «Որովհետև, ասում է, այս գինին քո ասած գինիներից չէ, այլ որոշ նպատակի հասցնող է, որ սիրոյ մէջ պէտք է փնտռել»:

Իսապալին անճարացած վեր է առնում բաժակը, որ խմէ. բայց դեռ շրթունքներին չը մօտեցրած, անծանօթը արգելում է և հարցնում. —«այդ ում սիրոյ և կենաց համար ես խմում»:

«Զը գիտեմ, տէր, ում կենացը որ հրամայէք, նրա համար էլ կը խմեմ»:

«Եթէ այդպէս է, այդ բաժակը մաքուր խմիր նրա կենացը, որի ձեռի վերայ ձեռք չկայ»:

Մի և նոյն խօսքը կրկնելով Իսապալին, դատարկեց բաժակը ու տուեց անծանօթին:

Անծանօթը նորից լցնում է բաժակը և առաջարկում.—«այս էլ մինչև տակը խմիր սուլթանի հարազատ դստեր—Դոնա-խանումի սիրոյ և կենաց համար, որ այսուհետև նա պիտի դառնայ առարկան ու մակարդը»:

Այս խօսքերը լսելով՝ Իսապալին մի քիչ սրտապնդուեց և խոնարհ գլուխ տալով, հեշտութեամբ դատարկեց բաժակը և տուեց տիրոջը:

«Այդ վերջին խմած բաժակի մէջ ինչ տեսար, հարցնում է սարսափ ազդող ձիաւորը:

«Ոչինչ, պատասխանում է Իսապալին, ոչինչ չը տեսայ»:

«Ուրեմն, ասում է անծանօթը, գինու թանձրութիւնն ու բաժակի հաստութիւնը, միախառնուելով իրար հետ, կորցրել են այն հայելու նման թափանձիկութիւնը, որի մէջ պիտի տեսնէիր քո սիրտն ու հոգին

գրաւող այն հրաշագեղ պատկերը, որի հետ յաւիտեան կապուած ու անբաժան պիտի մնաք»։ Այս ասելով բոլէաբար ծոցից հանեց մի սպիտակ թաշկինակ և ասաց.— «ա՛ռ այս թաշկինակով մաքուր սրբէ բաժակը և ապա հայելու նման մէջը նայիր, այն ժամանակ կը տեսնես՝ թէ ինչպէս կը պատկերանայ քեզ այն հրեշտականման էակը, որը քեզ ընդ միշտ պիտի դիւթէ ու կախարդէ»։

Այս հրապուրիչ ու գրաւիչ խօսքերից յափշտակուած Իսապալին, ամենայն ճշգրութեամբ կատարում է նրա պատուէրը և անյագաբար նայում բաժակի մէջ, որ այնու-հետև այլ ևս չի ուզում հեռացնել աչքերից։

Այնու-հետև կարծես նա մտնում է մի կախարդական աշխարհ, որ դիւթել էր նրան։ Այնպէս էր թւում նըրան, որ իբր թէ մի դրախտանման սաղարթախիտ ծառաստանի մէջ, հարիւրաւոր յաւերժահարսներով շրջապատուած է, որոնց մէջ իբր թագուհի ճեմում էր Գոնա-խանումը։ Այդ կուսական բազմերանգ ծաղիկների ու դալարիների մէջ բիւրաւոր գոյն զգոյն թռչուններ ու զեռուններ թռչկոտում ու վխտում էին հազարթերթեան վարդի շուրջը և հոտոտում նրա բազմաբոյր փոշին։ Մարգարտացող մարմարեայ շատրուանի վճիտ ջրերի մէջ հանդարտիկ լողում էր ոսկէ ձկնիկը իր մի քանի ցեղակից կարմրախայտ ու արծաթագոյն մանրիկ ձկնիկների հետ. երբեմնապէս կարծես ծիծաղելով՝ ծածուկ աչքախփուկ էին խաղում իրանց նայողների հետ և սիրաբոյր ժպիտներ փոխանակում։ Իսկ մշակուած ծաղկոցներում, հազարաւոր ծաղիկներ, գոյներն իրար հետ միախառնած, դարձել էին մի սքանչելի արհեստական դըրախտ, որի նմանը երկրագնտիս վերայ ոչ մի տեղ չէր

երևում։ Բազմատեսակ պտղատու ու անպտուղ բարձրահասակ ծառներին, խօմ էլ թիւ ու համար չկար, որոնց տերևալից ու սաղարթախիտ ստուերի տակ հպարտ հըպարտ հրճուում, խնդում ու խաղում էին մի խումբ հրեշտականման մանկամարդ յաւերժահասունք, որոնց վերայից բուրած ամբրօսեան անուշահոտութիւնը ծաւալում էր թափանցիկ օդի մէջ և գրգռելով մօտներից անցնողների քիմքն ու ջղերը՝ հրապուրում դէպ իրանք։ Սակայն, ափսոս որ այդ ամենը երազ ու երևակայութիւն էր, իրական ոչինչ չկար։

Նոյնպէս տեսնում էր, թէ ինչպէս այդ պճնուած ու զարդարուած յաւերժահարսները ինչպէս հլու հպատակութեամբ սպասաւորում էին իրանց թագուհուն և նրա խայտաճամուկ նուրբ բեհեզեայ հագուստների քըղանցքները վեր բարձրացնում, որ չը կեղտոտի, ոմանք էլ ճանապարհին հոտաւէտ վարդեր, բալասաններ ու երբնէրանգ ծաղիկներ էին ցանում, որ օդը անուշահոտութիւնով լցուի, իսկ ոմանք կոթը փղոսկրեայ հովհարներով թեթև քամի էին տալիս կուրծքին ու երեսին, որ արեգակի կիզող ճառագայթների ազդեցութիւնից ապահով մնայ։

Ահա այսպիսի դիւթական երազների մէջ մրափում էր քաջ Իսապալին, երբ աշխոյժ Արապաթի խրոխտ խրխինջը զարթեցրեց նրան... բայց աւաղ, տեսաւ որ շուրջը նոյն ամայութիւնն է գործեալ տիրում և երազում տեսածները բոլորը չքացել ու աներևութացել են. այլ ևս ոչ ձիաւոր կայ մօտը, ոչ էլ ինքը նոյն պարտէզի փափկութեան մէջն է։

Զրկուած այն սրտագրաւ ու չքեղ տեսարաններից,

միւս անգամ փակեց իւր ծանրացած աչքերը, որ գուցէ կրկին անգամ տեսնի նրանց՝ բայց ի զուր, որովհետեւ տեսածը մի անցողական ու խաբուսիկ երազ էր։

Հէնց այդ գիշեր նոյնանման մի երազ էլ տեսնում է նաեւ Դօնա-խանումը, որոնց սրտերը այրվում ու տոչորվում էր սիրոյ բոցավառ ու անշէջ կրակով։

Այդ սիրոյ գերիներից երկուսն էլ իրանց երազներում տեսած պատկերների ճիշտ գծագրութիւնը անջինջ պահպանում էին իրանց վառ երեւակայութեան մէջ եւ սրտի ու հոգու խորքերում, այն յուսով, որ գուցէ մի օր կը պատահէին միմեանց եւ վերջ ի վերջոյ մուրազներին հասնէին։

Այդ ցնորքներից սթափուած, Իսապալին տեսաւ՝ որ առաւօտեան լոյսը ծեքել է ու աղօթրանը բացուել. բոլոր թռչունները զարթնել էին ու անուշ դայլայլիկներով սկսել իրանց փառաբանական քաղցր մեղեդին երգել։

Առաւօտեան թարմ օդը եւ կազդուրիչ հով ու զով անուշիկ զեփիւռը կարծես լրացնում էին բնութեան անկատար թողած բոլոր պակասութիւնները։

Համարեա ամեն ինչ կատարեալ էր, միայն անկատար էր մնում մեր ճանապարհորդի ուխտն ու նպատակը, որի համար քար ու քօլ ընկած, գլուխը քարին էր տալիս մի ժամ առաջ կատարելու։

Խոր քնի ծանրութիւնը մի կողմ թօթափելով, անմիջապէս վերկացաւ, լուացուեց, մաքրուեց, իւր առաւօտեան աղօթքը ըստ սովորութեան կատարեց եւ ճապուկ ու դիւրաթէք կատուի նման թռաւ սրարշաւ Արապաթի վերայ ու շարունակեց իւր ճանապարհը։

Մի քանի օր անընդհատ գնալուց յետոյ՝ վերջա-

պէս հասաւ իւր որոշեալ տեղը, նախկին Բիւզանդական մայրաքաղաք Պօլիսը։

Այդ լայնատարած ու բազմամբոխ քաղաքը բոլորովին անծանօթ էր նրան։ Ոչ բարեկամներ ունէր այնտեղ եւ ոչ ծանօթներ. չէր իմանում, ուր գնայ եւ ուր իջեւանի։

Անցնում էր երկար ու լայն փողոցներով, տեսնում էր հոյակապ շինութիւններ, ոսկեձեղուն պալատներ, գեղեցկաշէն ապարանքներ. բայց ոչ մէկը պանդոկի կամ իջեւանի չէր նմանում .. ամեն բան մի մի հրաշալիք էր։

√Այդ յափշտակուած ու շլացած պահուն, յանկարծ նրա առջեւ բացուեց մի այլ տեսարան, մի հրաշակերտ պալատ, որի մարմարեայ պատերը, կճեայ սիւները, ոսկէ խոյակներով ու բարձրաբերձ կամարները գոթական ճարտարապետութեամբ ու արեւելեան ճաշակով կառուցած, մանաւանդ ոսկեձոյլ պղնձէ, մարմարիօնէ եւ ձիւնափայլ ալիբաստրէ նրբաքանդակ արձանները, որոնք իրանց յարմարաւոր տեղերում զետեղած էին, որովհետեւ նա իր կեանքում առաջին անգամն էր տեսնում այսքան ու այսպիսի գեղանիշ հրաշալիքներ, որոնց ստեղծագործել էր մարդկային միտքը, հանճարը եւ սքանչելագործ գեղարուեստը։

Այդ ինքնամոռացութեան տուած միջոցին յանկարծ պալատին կից նկատեց մի պարտէզ, որի յար եւ նմանը, մի քանի օր առաջ, տեսել էր երազում։

Առանց ժամանակ կորցնելու Արապաթի գլուխը շուռ տուեց դէպի այն կողմը, որի երկփեղկեան քանդակազարդ կանաչագոյն դարբասի գլխին դրած էին մի զոյգ յախճապակեայ չինական ծաղկամաններ, որոնց կենդրոնավայ-

րում ծաղկեայ պսակի մէջ ագուցած էր արքունական զինադրոշը։

Այդտեղ ձիուց վայր իջաւ, նիզակը ցցեց գետնին, Արտապաթի սանձը բերանից հանեց, երասանակի (խույսբի) ծայրը կապեց հաստաբմատ ծառներից մէկին և փոքրիկ սաղը վեր առած, մօտեցաւ դրանը ու աչքը մօտեցնելով նրա ճեղքուածներից մէկին, սկսեց ագահութեամբ դէպի ներս նայել։ — «Ո՜հ, Աստուած իմ, այս ինչ եմ տեսնում» մրմնջաց ինքն իրան, և քիչ էր մնում ուշաթափ լինի... մի երկու քայլ յետ քաշուեց, կրկին մօտեցաւ դրանը և դարձեալ յետ գնալով, նորից մրմնջաց... «այո, իսկապէս սա այն պարտէզն է, որը ես իմ երազում տեսայ, ուրեմն պէտք է ներս մտնել» ասաց՝ ու դարբասի փոքրիկ դուռը բաց անելով, ներս մտաւ՝ ձևանալով իբրև երգիչ։

Նա ծառուղիների միջով դանդաղ գնում էր, երբ յանկարծ նրա առջև բացուեց մի լայն հրապարակ, որի մէջտեղում շինուած էր մարմարեայ գոյնզգոյն քարերից շատրուան։

Այդ րոպէին Դոնա-խանումը նաժիշտների հետ միասին այդտեղ էր, որոնք զբաղուած էին այլ և այլ զուարճախօսութիւններով ու թարմ ծաղկեփունջեր շինելով, իրանց տիրուհու գլուխը զարդարելու համար։

Այս տեսարանը տեսնելով, երիտասարդը շշմեց ու չը համարձակուեց առաջ գնալ և նրանցից մի քանի քայլ հեռու՝ արձանացած կանգնեց մնաց։

Այդ միջոցին յանկարծ Դոնա-խանումի աչքն ընկաւ իւր հանդէպ կանգնած երիտասարդի երեսին. նա իսկոյն մտաբերեց իւր տեսած երազը ու ճանաչեց նրան և մի

թեթև շառագունեց։

Նոյն դրութեան մէջ ընկաւ և երիտասարդը, այնպէս որ երկուսի մէջ մի ձգողական աներևոյթ զօրութիւն աննշմարելի կերպով տեղի ունեցաւ։

Բայց Դոնա-խանումը գաղտնիքը ծածկելու պարուակով, նաժիշտներից մէկին հրամայեց որ գնայ տեսնի՝ ո՞վ է այդ անծանօթը և ինչ է ուզում։

Նաժիշտը իսկոյն թիթեռի արագութեամբ մօտեցաւ երիտասարդին ու քաղցրահնչիւն ձայնով հարցրեց. «ո՞վ էք և ինչ էք կամենում»։

«Երգիչ եմ», կարճ պատասխանեց երիտասարդը։

«Երգի՞չ, այո, գեղեցիկ արհեստ է, տայ օրիորդը ուրախ ժպիտն երեսին ու դառնալով Դոնա-խանումի մօտ, հաղորդեց նրան անծանօթի կարճ ու կտրուկ պատասխանը։

Թէպէտ այդ միջոցին Դոնա-խանումի ոսկորների միջով մի էլէքտրական ցնցում ու սարսուռ անցկացաւ, բայց այնու ամենայնիւ, նա ամեն կերպ աշխատում էր քօղարկել իւր ներքին ուրախութիւնն ու սրտում ունեցած սիրոյ անշէջ կրակը։

Որպէս զի ոչ ոքի առիթ ու նկատողութեան տեղիք չտայ՝ մի քանի րոպէ իրան անտարբեր ձևացնելով, հրամայեց սպասուհիներից մէկին, որ գնայ անծանօթ երգչին հրաւիրէ իւր մօտ, որպէս զի տեսնի թէ, ո՞վ է դա և ինչ իրաւունքով է մտել իւր պարտէզը։

Այդ հրամանը ստանալուն պէս, նաժիշտը ուրախ ուրախ թեթև թիթեռնակի նման աճապարեց երիտասարդի մօտ և քաղաքավարի կերպով հրաւիրեց իրան հետևից։

Անծանօթը փախվխելով ու դանդաղ քայլերով սկսեց կամաց կամաց առաջ գալ։

Նա որքան մօտենում էր, այնքան բաբախում էր սիրտը և սիրոյ կրակը աւելի բորբոքվում։ Երբ մօտեցաւ նրանց՝ խոնարհ գլուխ տալով կանգնեց ու սպասում էր։

Այդ միջոցին բոլորի աչքերը յառած էին դէպի նրան, իսկ անծանօթ երգիչը ամօթից քրտնել ու կարմրել էր։

Երբ բոլորը անխօս ու լուռ էին, յանկարծ Դոնա-խանումը այդ լռութիւնը խզեց ու հարցուց. —«պարոն երգիչ, դուք բնական ո՞րտեղացի էք։»

—«Իրանցի, խանում», ցած ձայնով պատասխանեց։

—«Անունդ ի՞նչպէս է»։

—«Իսապալի»։

—«Դուք երգի՞չ էք»

—«Այո»։

—«Ես էլ երգիչ եմ», քմծիծաղ տալով, ասաց՝ ու երեսը շուռ տուեց դէպի նաժիշտները և հրամայեց որ իւր զարդարուն դամբուրէն բերեն։

Իսկոյն նրան տուին սատափով զարդարած գեղեցիկ դամբուրէն, որը ձեռքն առնելով՝ այսպէս ասաց։ «քեզ հետ այսպէս կը պայմանաւորվիմ. քեզ մի երկու խօսք կառաջարկեմ, եթէ իմ խօսքերի պատասխանը տուիք, այն է որ ձեր լիուլի բաւականութիւնը կստանաք ինձանից, իսկ եթէ ոչ՝ փոխարէնը այստեղ կը թողնէք ձեր սազը ու այնպէս դատարկաձեռն կերթաք»։

«Համաձայն եմ», կտրուկ կերպով պատասխանեց։

Դոնա-խանումը դամբուրէն վեր առաւ, դրեց կրծքին, որտեղ դուրս էին ցցուել նորահաս նռների նման

կոկոն ստինքները և վարժ մատները շարժելով գեղեցիկ գործիքի թրթռուն լարերի վերայ՝ երգեց հետևեալ սրտաշարժ երգը, որին պատասխանում էր Իսապալին։

Դոնա-խանում.

Գլխովդ պըտիտ գամ, խեղճ երիտասարդ,
Արի, Իսապալի, գնա այստեղից.
Մատաղ լինիմ ես քեզ, ո՛վ քաջ տղամարդ,
Արի, Իսապալի, գնա այստեղից։

Իսապալի.

Ջամլիբէլից քեզ յիշելով եկել եմ,
Մեռնի Իսապալին, չի գնայ այստեղից,
Աշխարհի մէջ քեզ ինձ համար ընտրել եմ,
Մեռնի Իսապալին, չի գնայ այստեղից։

Դոնա-խանում.

Ճանաչո՞ւմ ես Պօլի-բէգը մեծանուն,
Որ ձեր Ջամլիբէլը գցեց գըրգիւն,
Խումբը ցրուեց, գերի առաւ Քեօռ-օղլուն,
Արի, Իսապալի, գնա այստեղից։

Իսապալի.

Ճանաչում եմ Պօլուն, նա չէ մեծանուն,
Ոչ էլ Ջամլիբէլում գցեց գըրգիւն։
Կեղտոտ Պօլին չէր գերողը Քեօռ-օղլուն,
Մեռնի Իսապալին, չի գնայ այստեղից։

Դոնա-խանում.

Դոնա-խանումն եմ, ես լինիմ քեզ մատաղ,
Դարձեալ մէկ ծիծաղիր, ով գեղածիծաղ,
Թէպէտ ծնուած չէ ձեզ նման մի չքնաղ,
Արի, Իսապալի, գնա այստեղից։

Իսապալի.

Ես մի խեղճ սոխակ եմ, իսկ դու վարդաբան,
Սիրում եմ քեզ՝ և պիտ սիրեմ յաւիտեան,
Առանց քեզի, անուշ հոգեակ աննման,
Մեռնի Իսապալին, չի գնա այստեղից։

Երբ Իսապալին նրա բոլոր խօսքերին արժանաւորապէս պատասխանեց, նաժիշտները և նոյն իսկ Դոնա-խանումը, մնացին շուարած ու զարմացած։

Որքան էլ Դոնա-խանումը սրտով ցանկանում էր նրան յարգել ու պատուել՝ այսու ամենայնիւ քաշվում ու ամաչում էր իրա նաժիշտներից։ Բայց բանը նրանումն էր, որ հետ զհետէ երկու կողմից էլ սէրը կըրկնապատկվում էր և ոչ մէկը չէր ուզում բաժանուել միւսից։

Բարեբաղդաբար կէսօրն արդէն անցել էր և արեգակը իւր գլուխը խոնարհել դէպի արևմուտք, որ իսկապէս հեռանալու լաւ առիթ էր Դոնա-խանումի համար։

Մի փոքր լռութիւնից յետոյ՝ հարցրեց. —«յարգելի երգիչ, ո՞ր իջևանում կամ հիւրանոցում էք իջևանել. ո՞ր թաղումն է ձեր բնակարանը»։

—«Ե՞ս, ասաց Իսապալին, ո՛չ մի տեղ. Դեռ նոր եմ եկել և առաջին անգամն է այս քաղաքում ոտք դնելս... ոչ մի տեղ չիմ տեսել և ոչ ոքի չեմ ճանաչում. ինձ համար անծանօթ են բոլորը, թէ պանդոկ և թէ հիւրանոցը. քաղաք մտնելուց յետոյ իմ վերջին կայանս եղել է այստեղ, որ մինչև անգամ իմ սիրելի Արապաթը կապել եմ դուրսը պարտիզի դրան մօտի ծառներից մէկից. ուրեմն կը նշանակէ, որ դեռ մի որոշ տեղ չունիմ բնակարանի համար»։

—«Եթէ այդպէս է, այս գիշեր ինձ մօտ հիւր կը լինիք», տարտամ կերպով ասաց Դոնա-խանումը։

—«Այդ մասին մեծ շնորհ ունիմ», պատասխանեց Իսապալին և ուրախութիւնից քիչ էր մնում խելքը թռցնի։

Անմիջապէս Դոնա-խանումը հրամայեց, որ իւր նոր հիւրին առաջնորդեն իրան պատկանեալ սենեակները և ըստ կարելոյն լաւ հիւրասիրեն։

Իսկոյն և եթ հրամանը կատարուեց։

√Մի երկու ներքինիներ Իսապալուն առաջնորդեցին դէպի Ապարանք. միւն էլ գնաց ձին ու իրեղէնները տարաւ ախոռատուն, իսկ ինքը Դոնա-խանումը իւր նաժիշտներով շրջապատուած, Կալիֆսէի նման սիգաճեմ դիմեց իւր սենեակները։

Արևը թէև մայր էր մտել ու խաւարը պատել ընդհանուր աշխարհը, բայց այդ չէր նշանակում, թէ վերահաս գիշերը կարող է արգելք դնել երկու սիրահարների մտադրեալ նպատակին, որոնք գիշերուան երազում տեսածները, այժմ իրականութեան մէջ պէտք է վայելէին և երկուսն էլ հասնէին իրանց մուրազին։

Եւ բացի այդ, մանաւանդ մնացեալ ուժով պիտի պատերազմէին խարդախութեան ու դաւադրութեան դէմ, կամ պէտք է մեռնէին, կամ ազատէին 40 կանգուն խոնաւ հորի մէջ տանջուող քաջ, բայց մեռած կարծուած, մեծահռչակ Քեօռ-օղլուն.

Երկար չը տևեց նրանց անջատումը։ Երբ Դոնա-խանումը մի քանի նաժիշտների ու ներքինիների հետ, ուրախ ժպիտն երեսին, ներս մտաւ Խասպալու սենեակը, որի թաւշապատ արդն ու զարդը և կահաւորանքը մարդի աչքն էիր շլացնում։

Չը մոռնանք ասել, որ նրանց առաջին տեսակցութեան րոպէից մինչև վերջը, հարեմական տրկութիւնը իւր մռայլ դէմքով, կորել, անհետացել էր և տեղի տուել ազատութեան ու մի անսովոր ցնծութեան... Նրանք խօսում էին բոլորովին ազատ ու համարձակ։

Դոնա-խանումը նստել էր նրա հանդէպ, բոլորովին ուրախ ու զուարթ... համարեա ամեն ինչ արտասովոր ու արտակարգ դրութեան մէջ էր այդ րոպէին

Նաժիշտներից ոմանք թմբկահարում էին, ոմանք պարում ու երգում։

Բաւականին ուրախութիւնից վերջը՝ սենեակը մի այլ կերպարանք ստացաւ... ընթրիքի պատրաստութիւն տեսան։

Ամեն ինչ արդէն պատրաստ էր... բայց ինչքան որ ճոխ էր նրանց առջև բացուած սեղանը ու բազմաթիւ խորտիկների տեսակները, նոյնքան էլ ճոխ ու քաղցրր էր նրանց խօսակցութիւնն ու մտքերի փոխանակութիւնը։

Խասպալին պատմում էր իւր գալու բուն պատճա-

ռը։ Պատմում էր նաև ճանապարհին տեսած հետաքրքիր երազը, որը այդ րոպէին փոխուած էր։

Նա մերթ խօսում էր ու մերթ լռում, հառաչում։

Թէև Դոնա-խանումի խօսքերը մխիթարական էին և յուսալի։

Նա խոստանում էր, որքան կարելի էր օգնել ու ազատել Քեօռ-օղլուն։

Երկար ու բարակ տաճկական ընթրիքը վերջացաւ։ Արդէն ժամանակ էր գործելու։

Դոնա-խանումը հրամայեց, որ պատրաստուեն գնալ Քեօռ-օղլու մօտ։

Չը նայելով, որ այդ ժամանակ գիշեր էր և բազմամարդ և աղմկալից քաղաքը վաղուց թաղուած էր խոր լռութեան մէջ, բայց Դոնա-խանումը իւր խմբով դուրս եկաւ պարտիզի այն դռնից, որը տարին բոլոր ժամանակ փակ էր պահվում և հազիւ հարկաւոր դէպքում կարելի էր բանալ, այն էլ միայն Դոնա-խանումի հրամանով։

Նրանք թէև հետները վեր առած ունէին Խասպալուն, բայց գաղտնիքը ծածկելու համար, կանացի շորեր էին հագցրել, որ չը ճանաչուի։

Այդ ժամանակ լուսինը դեռ նոր էր դուրս եկել ամպի տակից և իւր աղօտ լոյսը սփռել ընդհանուր աշխարհի վերայ և տարաբաղդաբար մերթ ընդ մերթ փոքրիկ ամպիկները երբեմնապէս քօղարկում էին նրա գեղատեսիլ պատկերը, այնպէս որ, մինչև անգամ մեր գիշերային ճանապարհորդները, մի քանի անգամ բաւականին դժուարութեան հանդիպեցին, կորցնելով իրանց ուղիղ ճանապարհը։

Զը նայելով նրանց արագընթաց քայլերին, այսուամենայնիւ ուշ հասան նշանակեալ տեղը, ուր անբաղդ Քեօռ-օղլին անվերջ ու անհամբեր սպասում էր որ և է օգնութեան։

Այսպէս թէ այնպէս, սարսափատարած ահռելի վիրապը անսպասելի կերպով յանկարծ շրջապատուած եղաւ մարդկերանցով։

Դոնա-խանումի ձեռքի տուած մի նշանացի շարժումով, նաժիշտները պէտք է բաց անէին ջրաղացի քարով ծածկած հորի բերանը. բայց քաջ Իսապալին արգելեց նրանց և ինքը միայնակ մէջքը դէմ տալով, ահագին քարը մի խնձորի նման տասը քայլ շպրտեց այն կողմը։

Դրանից յետոյ Դոնա-խանումը խնդրեց Իսապալուց, որ առժամանակ լռէ և ծանօթութիւն չտայ Քեօռ-օղլուն, մինչև փորձով իմանալ նրա ինչ դրութեան մէջ լինելը։

Դոնա-խանումը կանգնեց հորի եզերքին և ձայն տուեց. «Քեօռ-օղլի՞»։

Քնաթաթախ Քեօռ-օղլին հազիւ ճանաչելով ձայնը՝ կասկածով ասաց։ —«Արդեօք դո՞ւք էք, Դոնա-խանում»

—«Այո՛, ես եմ, Քեօռ-օղլի և եկել եմ քեզ այցելութեան ու իսկապէս տեղեկանալու ձեր դրութեան մասին»։

—«Ա՜հ, պաշտելիդ իմ Դոնա-խանում, իմ դրութեան մասին հարցնելդ բոլորովին աւելորդ է, որովհետև ձեզ յայտնի է որ իմ դրութիւնը աննախանձելի ու թշուառ է. բայց ինչ արած, դարձեալ պէտք է համբերել ու հնազանդել ճակատագրի հարուածներին, մինչև որ բնութեան տէր Արարիչը խնայէ ինձ և հաշտ աչքով նայէ թշուառիս։ Այս ասելով, մի խոր հոգոց հանեց

սրտի խորքերից ու լռեց։

Սակայն Դոնա-խանումը կրկին շարունակեց իւր հարց ու փորձը և ասաց.—«Քեօռ-օղլի. ենթադրենք որ ճիշտ է ձեր ասածը և անագորոյն բաղդը հարուածում է ու երես է դարձրել քեզանից. ուրեմն Զամլիբէլում քո ունեցած քաջերից չկայ մէկը, որ գար ազատէր քեզ այս նեղ դրութիւնից. էլ ինչո՞ւ է պէտք նրանց ուռած—փքուած աշխարհահռչակ մեծ անունը, երբ անտարբեր նստած են ու բնաւ քեզ չեն մտաբերում»։

—«Ա՜հ, գեղեցիկ տիրուհիս, այդ ինչե՞ր ես յիշեցնում ինձ և ինչե՞ր ես պատկերացնում իմ աչքի առաջ. միթէ դու չը գիտես, որ իմ սրտի վշտերս ու վէրքերը անբուժելի ու անթիւ են»։

Դոնա-խանումը ընդհատելով նրա խօսքը՝ ասաց,—«Քեօռ-օղլի, ախ ու վախի ժամանակը չէ. քաջերիցդ մէկը եկել է և այժմ այստեղ է. արդեօք կարո՞ղ ես իմանալ, թէ որն է»։

Այս խօսքերը լսելուն պէս՝ քիչ մնաց խեղճի խելքը գլխից թռչէր, բայց զսպելով իրան ասաց.—«լեզուով ինչպէս պատմեմ ու նկարագրեմ, որ ձեզ հասկանալի լինի ու հաւանական թուի և իմ մէջ թաքնուած գաղտնի կրակը աւելի չը բորբոքուի ու բռնկի, որ այրելով ինձ ոտից գլուխ մոխիր դարձնէ, սիրոյ գերի թշուառ Քեարամի, կամ փիւնիկ թռչունի նման։ Ուրեմն էլ ինչ ասեմ, անողին չը մնայ, որ մինչև անգամ իմ տխուր րոպէների մխիթարանք սազն էլ խլեցին ձեռիցս»։ Այս ասելով՝ վիր առաւ հորի մէջ գտնուած փոքրիկ տախտակի կտորներից մէկը և սազի փոխարէն դնելով կրծքին, սրտառուչ կերպով բարձրաձայն երգեց։—

Կրկին միտս եկան իմ կտրիճները,
Բաբա-Քեանհանն այսօր մօտս է հարկաւոր,
Զօրս պայտը մէկ ձեռքով ծալող, կոտրող,
Դամուրչօղլին այսօր մօտս է հարկաւոր։

«Ո՛չ, չը գտար քաջիդ անունը, Քեօռ-օղլի», ասաց վերևից Դոնա-խանումը։—Քեօռ-օղլին շարունակեց։—

Քաջ Դէլի-Մէօհթարը, որ է կամակոր,
Պողպատ վահանակիր, կապոյտ ձիաւոր,
Առիւծատիպ, ուժեղ, անգութ և հզօր,
Բեխլի Իւսուֆն այսօր մօտս է հարկաւոր։

«Դարձեալ չը գտար», նորից կրկնեց Դոնա-խանումը։ «Սպասիր որ երրորդ տունն էլ ասեմ», ասաց Քեօռ-օղլին և շարունակեց։—

Քեօռ-օղլին եմ, անունս Ռուշան Ալի,
Այվազս չը տեսած խիստ եմ խիթալի,
Անշուշտ ինձի կօգնէր այն Պալթէն-Դալի,
Իսապալին այսօր մօտս է հարկաւոր։

«Ապրիս, Քեօռ-օղլի, այժմ գտար», ձայնեց Դոնա-խանումը։ Բայց երկար լուռ մնալով՝ Իսապալու համբերութիւնը հատել էր։ Երբ մաշուած Քեօռ-օղլին երգը վերջացրեց, Իսապալին այլ ևս չը համբերեց, կռացաւ հորի վրայ և իւր այլական խրոխտ ձայնով կանչեց.— «Քեօռ-օղլի, Տէր իմ։»

Քեօռ-օղլին ճանաչելով երիտասարդ կտրիճի ձայնը՝ խելացնորի նման հորի մէջ վերուվար էր ցատկում. մի

քանի անգամ հորի մէջ շուրջանակի պտոյտ գալով՝ ասաց. — «Ջան, Իսապալի ջան, քո գլխին, աչևին մատաղ, քո եկած ճանապարհին ղուրբան, ինձ մի օգնութիւն արա, որ այս վիրապից դուրս գամ, որովհետև խոնաւութիւնից մարմինս խպառ քայքայուեց, առողջութիւնս կորաւ և ոյժերս սպառուեցին... ջլապինդ թևերս, ոտքերս համարեա թուլացել են և համարեա էլ ինձ չեն հնազանդվում—ծալ են գնում»։

«Քեօռ-օղլի, անհոգ կաց, մի՛ վհատիր. նախ և առաջ Աստծու անհասանելի կամօք և ապա Դոնա-խանումի շնորհիւ, այս րոպէիս կազատուիս»։ Այս ասելով՝ երկար պարանը քարշ արաւ հորի մէջ, որ հետներն էին բերած և ձայն տուեց—«ա՛ռ այս պարանի ծայրը, պինդ կապիր մէջքիդ, որ չը կտրուի»։

Քեօռ-օղլին բռնելով պարանի ծայրը՝ փաթաթեց մէջքին և անսահման ուրախութիւնից մոռացաւ հանգոյցը պնդացնել ու ձայնեց վեր քաշել։

Նրանք միամտօրէն ձգում են պարանը, բայց մի քանի կանգուն հազիւ բարձրացած, մէջքից քանդվում է պարանը ու նորից ցած գլորվում հորի մէջ և տեղնուտեղը անշարժ մնում։

Այս անսպասելի պատահարը տխուր տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վերայ, որ շփոթուած սկսեցին վերևից ձայն տալ։ Բայց ոչ մի պատասխան չստացան, բացի հորի տուած արձագանքից։

Նրանք աւելի կասկածի մէջ ընկան և այնպէս կարծեցին թէ՝ մեռաւ, սկսեցին դառնապէս լաց լինել։

Իսապալին խօմ, վիրաւորանքից փռուեց գետնի վերայ և ալէկոծուր ձայնով աղաղակում էր ու վայ տալիս

անբաղդութեանը։

Բաւականին ողբալուց յետոյ, Իսապալլին ստիպուեց ինքը հորն իջնել, որ գոնէ մի կերպ կարողանայ դուրս հանել մեռած դիակը․

Բայց Դոնա-խանումը դիմադրեց ու թոյլ չը տուաւ այդ յանդուգն ձեռնարկութեանը։

Կրկին մօտեցան հորին ու բարձրաձայն գոչեցին և մերթ ընդ մերթ փոքրիկ քարեր գլորելով հորի մէջ։

Քեօռ-օղլին յանկարծ ուշքի գալով, տեղից վեր է բարձրանում ու վսկսում է ներքևից խօսել նրանց հետ։

—«Մի վախենաք, ասում է, ինձ ոչինչ վտանգ չը կայ, ես բոլորովին առողջ եմ… մի փոքր ուշաթափուել էի վայր ընկնելուց… կարելի է այս էլ ճակատիս գրուած էր, որ տեսնէի»։

Այս խօսքերի վերայ, պարանը նորից քաշ արին հորի մէջ և այս անգամ յատուկ պատուիրեցին պինդ կապել․

Քեօռ-օղլին այս անգամ ամենայն զգուշութեամբ պարանը փաթաթեց մէջքին, օղակներին լաւ նայեց ու վստահաբար ձայն տուեց—«այժմ քաշեցէք»։

Նոյն րոպէին ուժեղ ձեռքերով պարանն սկսեցին ձգել և մի քանի վայրկենից անվտանգ դուրս բերին հօրից հսկայ Քեօռ-օղլուն. միմեայն բոլորովին այլակերպուած, որովհետև գիճութիւնն ու անսովոր կեանքը, մազն ու մօրուքը, և հորի մէջ եղած անմաքրութիւնները, խայտառ խլել էին նրանից մարդկային կերպարանքի գեղեցիկ տիպը։ Միմիայն Դոնա-խանումի տարած խնամքով ու լաւ կերակրելով, սաստիկ գիրացել էր․․ բայց միայն նրա թաւ ու երկար բեխերը ապացուցանում էին, որ դա ինքը իսկապէս Քեօռ-օղլին է։

Քեօռ-օղլու հոգին նոյն րոպէին փառաւորուեց, երբ իրան ազատ օդի մէջ գտաւ՝ բարեկամներով շրջապատուած։ Դեռ պարանը մէջքից չարձակած գրկնախառնեց Իսապալլուն ու այնպէս պինդ փաթաթուեց նրան, որ կարծես մի մարմին ու հոգի լինէին։ Այդպէս երկար մնացին անբաժան։ Սիրոյ համբոյրներ էին տալիս միմեանց և ուրախութեան արտասունքները անընդհատ գլորվում էին նրանց աչքերից։

Դոնա-խանումը, տեսնելով՝ որ նրանց այդ անսահման սէրը կարող է վնասաբեր ու վատ հետևանք ունենալ, միջամտելով ասաց. —«Բաւական է, քաջեր, առանց այն էլ շատ ժամանակ կորցրինք. արդէն ուշ է և րոպէն թանկ է մեզ համար, եթէ չշտապենք՝ կարող ենք մատնուիլ անիրաւների ձեռքը»։

Դոնա-խանումի հեռատես նկատողութիւնը զգուշացրեց նրանց, որ բաժանուեցին։

Ապա Քեօռ-օղլին դառնալով դէպի Դոնա-խանումը, հետևեալ խօսքերով յայտնեց իւր շնորհակալիքը.—«Ես, ասաց, յաւիտեան երախտապարտ կը մնամ ձեզ, արքայազն տիրուհիս։ Ձեր արածների փոխարէնը այժմ ոչինչ չունիմ վճարելու. միայն յոյս ունիմ, կգայ ժամանակ, որ երախտահատոյց լինիմ, և ըստիս հեռու չէ այդ ցանկալի վայրկեանը»։ Այսքանն ասելով անվստահ մօտեցաւ նրան և քնքոյշ ձեռքը բռնելով՝ ախորժանօք պինդ համբուրեց ու դրաւ ճակատին։

Այս երախտագիտական պարզ ցոյցը նրան զգածեցրեց, և մտաբերելով իւր նախկին ազդարարութիւնը՝ կրկին յիշեցրեց, որ շտապին հեռանալ այդ վտանգաւոր տեղից, որովհետև խիստ մեծ կասկած ունէր։

Բայց որպէս զի խարդախների արբանեակներից ու դարանամուտ աւազակների հետապնդութիւններից ազատ մնան, փորձի համար առաջարկեց Քեօռ-օղլուն, որ կանացի սպիտակ քօղով գոնէ ծածկէ գլուխն ու այնպէս գնան, որ չը ճանաչուի։

Բայց Քեօռ-օղլին բացէ ի բաց մերժեց այդ առաջարկը և ասաց.—«Ես ինձ աւելի՛ բաղդաւոր կը համարեմ կրկին մտնել իմ նախկին վիհը և մնալ այնտեղ յաւիտեան, քան ընդունել ձեր առաջարկութիւնը, տիրուհիս, որ մահու չափ ծանր ու անտանելի է ինձ համար»։

Դոնա-խանումը տեսնելով, որ անաջող անցաւ իւր փորձը և չընդունուեց իւր առաջարկը, այլ հաստատ մընաց իւր խօսքին, մի ինչ որ բան մրմնջաց մտքումը ու անմիջապէս հրամայեց իւր մարդկերանց, որ շրջապատեն Քեօռ-օղլուն. իսկ ինքը Իսապալու հետ միասին ձեռք ձեռքի տուած առաջ ընկան և խումբը հետևեց նրանց։

Արդէն աղօթրանը բացուելու մօտ էր. թռչունները զարթնել էին, օդը թնդում էր թռչնոց անուշ դայլայլով։ Գիշերը թեթև ճախրակի նման կամաց կամաց պըտըրտուելով յետ էր քաշվում, տեղի տալով առաւօտեան պայծառ արշալոյսին, որ մեր խումբը հասաւ իւր բնակարանը։

Դոնա-խանումի ուրախութեանը չափ չկար։ Նա ուրախանում էր իւր արած քաջութիւնով, որ կարողացել էր Քեօռ-օղլուն ազատել խարդախների լարած որոգայթից ու դարանից։

Այդ ժամին Դոնա-խանումը կանչեց իւր ներքինապետին, պատուիրեց, որ Քեօռ-օղլուն գաղտնի կերպով

բաղնիս տանի, մաքրել տայ, մազն ու մօրուքը խուզէ—կանոնաւորէ և անուշահոտ իւղերով օծէ գլուխն ու մարմինը և այնպէս ներկայացնէ իրան։

Ներքինապետը գլուխ խոնարհեցնելով հեռացաւ, որ ճշտիւ կատարէ իւր տիրուհու պատուէրը։

Մի քանի ժամից յետոյ՝ Քեօռ-օղլուն զուգած ու զարդարած ներկայացրին Դոնա-խանումին, որ Իսապալու հետ նստած, պատմել էր տալիս Քեօռ-օղլու անցքերից ու արկածներից։ Մանաւանդ խիստ հետաքրքիր էր նրան լսել Քեօռ-օղլու Պօլի-բէգի ձեռքը մատնուելը, որի խնկութիւնը շատ էր ցանկանում գիտենալ։

Դոնա-խանումը այս անգամ Քեօռ-օղլուն կերպարանափոխուած տեսնելով, հրաւիրեց նստել և նորից յարգական ցոյցեր անելով ուզում էր պատուասիրել։ Եւ որովհետև արդէն ճաշելու ժամանակն էր, հրամայեց որ ճաշի սեղան բաց անեն։

Ասիական բազմատեսակ կերակուրներն ու գոյնզգոյն քաղցր օշարակները մէկը միւսի ետևից շարուելով սեղանի վերայ՝ սկսեցին ուրախ զուարթ ճաշակել ախորժանօք։

Բայց ցաւալին այն էր, որ խեղճ Քեօռ-օղլին կարծես ախորժակը կորցրել էր, հօրի մէջ անցկացրած վատառողջ պայմանների մէջ։ Մինչև սեղանի վերջանալը նա հազիւ կարողացաւ ուտել մի 7—8 հաց, մի քանի մեծ և խորունկ պնակ կերակուր, և մեծ ափսէ էլ մեղրով և այլ և այլ տապակած մրգերով իւղալի փլաւ։ Այդ բոլորը մարսելու համար, մէջ ընդ մէջ չը խնայեց խմել նաև մի քանի բաժակ նուան գինի ու զանազան հոտաւէտ համեմներից պատրաստած անուշահամ օշարակ։

Այդ ճոխ ու բարելի սեղանի վերայ, խեղճը հազիւ կարողացաւ այդքան ուտել, որովհետեւ առողջութիւնը կորցրել էր։

Սեղանի վերջը հիւրերին մատուցին արքայավայել ընտիր մրգեղէն ու արաբական ճաշակով պատրաստած հոտաւէտ սուրճ, որի անուշահոտութիւնից խմողի քիմքը գրգռվում էր։

Սուրճը խմելիս համարեա բոլորը լուռ էին. միայն Դոնա-խանումն ու Իսապալին փսփսալով կչկչում էին գուցէ մի առանձին փորացաւի համար։ Իսկ Քեօռ-օղլին խորասուզուել էր մտքի մէջ, թէ ինչ հնարով իւր ոսոխներից վրէժ լուծէ. նրա սիրտն ու հոգին բորբոքվում էր վրէժխնդրութեան անմարելի կայծով։

Նա շատ էր մտածում, բայց հնար չէր գտնում վրէժ լուծելու,

Վերջ ի վերջոյ այն եզրակացութեանն եկաւ, որ մի կերպ փախցնէ Դոնա-խանումին, ու այնպէս պատժէ իւր անարժան հակառակորդներին։

Այդ ժամանակ արդէն գիշերը վրայ էր հասել և սենեակը սկսել էր աստիճանաբար մթնել։

Լուսարար աղախինը, որ շատ սիրելի էր Դոնա-խանումին, իւր ծիծաղաշարժ կատակներով ու ձևերով սկսեց վառել կանթեղներն ու մոմերը։ Մոմակալները դիտմամբ միմեանց խփելով այնպիսի ձայներ էր հանում, որ շատ նման էին ծնծղաների և այլ երաժշտական գործիքների ձայներին, և այդպիսով բոլորի ուշադրութիւնը հրաւիրեց դէպ իրան։

Դոնա-խանումը երեսը շուռ տալով, հարցրեց զաւեշտասէր աղախնին.—«այդ ինչ ձայներ են»։

—«Մի՞թէ չը գիտէք, տիրուհի, որ մեր հարեւան Նազիմ էֆէնտին, որ մի պառաւ ջորի ունէր և անտառից փայտ էր կրում...- նա մի գեղեցիկ աղջիկ ունի, որի վերայ երկար ժամանակից ի վեր սիրահարուել էր մեր ներքինապետներից մէկը. ու մունջ Օսմանին քանիցս անգամ խնամախօս ուղարկեց, բայց նրանք մերժեցին, իսկ հիմա իրանք են միջնորդ ուղարկել որ տան։ Այս երեկոյ այդ մանկահասակների նշանտուէքն է և մեր երաժշտական խումբը այդ ջահիլներն ուրախացնելու համար պարտիզում նստած նուագում են»։

Այս խօսքերի վերայ բոլորը ծափ տուին, ծիծաղեցին, իսկ Դոնա-խանումը խոմ ծիծաղելով՝ թուլացաւ։ Մինչև անգամ Քեօռ-օղլին, որ անվերջ մտատանջութեան անձնատուր էր եղել, նրա էլ շրթունքներին մի թեթև ժպիտ խաղաց։

Այս փոքրիկ զաւեշտական գործողութիւնից յետոյ սենեակը դարձեալ մի այլ կերպարանք ստացաւ. երաժիշտները սկսեցին իրանց սովորական երգն ու նուագը։

Թէպէտ Քեօռ-օղլին լուռ ու մունջ նստած ականջ էր դնում նրանց երաժշտութեանը, բայց դարձեալ տըխուր ու տրտում էր։ Ոչ նրա սիրտն էր հրճւում և ոչ հոգին մխիթարվում։

Երբ երաժշտութիւնը դադարեց, Քեօռ-օղլին վեր կացաւ տեղից, շնորհակալութիւն յայտնեց Դոնա-խանումին և ասաց.—«մեծայարգ տիրուհիս, ձեզ յայտնի է, որ իմ բացակայութիւնից ի վեր Չալիբէլը ծածկուած է մառախլապատ ամպերով և միայն տրտմութիւն է թագաւորում այժմ այնտեղ. բոլորը անհամբեր սպասում են իմ վերադարձին։ Լիայոյս եմ, որ այս բաները առանց իմ

բացատրելուն էլ ձեզ յայտնի են և դուք այնքան ազնիւ կը լինէք, որ մտնելով իմ դրութեան մէջ, ազատ կարձակէք ինձ, որ գնամ իմ բնակավայրը, ըստորում այսուհետև իմ այստեղ մնալը բոլորովին աւելորդ ու անտեղի է։ Ուրեմն կրկին խնդրում եմ, որ ինձ ու իմ ընկերին արձակէք, գնանք ուրախացնենք մեր ճանապարհը սպասող տրտում սրտերին»։

—«Դուք բոլորովին ազատ էք, քաջդ Քեօռ-օղլի, ուրախ ժպիտը երեսին, ասաց Դոնա-խանումը, երբ կամենաք կարող էք գնալ»։

Նոյն ժամին Քեօռ-օղլին հրամայեց ախոռապանին, որ Ղռաթն ու Արապաթը թամքած դուրս քաշէ. իսկ Դոնա-խանումը հրամայեց արքունի զինարանի վերակացուին, որ նրանց իսկական զէնքերը բերէ, յանձնէ իրանց։

Երբ ամեն բան պատրաստուեց, երկուսն էլ մօտացան Դոնա-խանումին ու ձեռքերը համբուրելով, մնաս բարեաւ ասացին և սենեկից դուրս գալով հրապարակը, ուր կանգնած էին ձիաները, արագութեամբ թռան նրանց քամակին և մի քանի անգամ չափ գցեցին, որ խամից դուրս գան ու տաքանան։

Իսպալին միամտօրէն մեքենաբար հետևում էր Քեօռ-օղլուն, որովհետև խելքն ու միտքը Դոնա-խանումի—իւր տարփածուի մօտն էր. բայց Քեօռ-օղլու միտքը այդ չէր։

Նա անվերջ մտածում էր Պօլի-բէգին և Ղաճար-Ալուն վրէժխնդիր լինել—սպանել և ապա դուրս գալ քաղաքից։ Այդ պատճառով էլ ձին չափ գցեց, տաքացրուց իւր կրծկլթած մարմինը զանազան շարժումներով ընդլայնեց, կազդուրեց և ապա ուղղակի դիմելով սուլ-

թանի պալատի առաջ, այնպէս ուժգին գոռաց, որ նրա ձայնից ապարանքի ձեղունն ու կամարները թնդացին։

Այդ միջոցին սուլթանը դուրս գալով պատշգամբի վերայ և Քեօռ-օղլուն յանկարծ տեսնելով, զարմացած հարցուց, որովհետև գիտէր որ նա պատժուած է,—«այդպէս սպառազինուած որտեղից ես գալիս, Քեօռ-օղլի»։

—Պարսկաստանից, առանց երկար մտածելու պատասխանեց Քեօռ-օղլին. եկել եմ, որ ուխտադրուժ Պօլի-բէգից ու խորամանկ Ղաճար-Ալուց վրէժս լուծեմ ու այնպէս վերադառնամ։ Այս ասելով՝ վեր առաւ սազը ու հպարտութեամբ երգեց։

Պարսկաստանից յաղթանակով եկել եմ,
Երբ դուրս գամ ասպարէզ, յաղթանակն իմն է։
Նժոյգ ձիս աննման ու ինքս եմ անյաղթ,
Դէմ գնող թշնամու բանակն իմն է։

Մանկութիւնից ես այսպէս մտադիր եմ,
Իրան, Թուրան, Հինդ ու Եմէն պիտ տիրեմ,
Երբ բազդը ժպտում է, էլ ինչու նիրհեմ,
Իսկ աշխարհակալութեան վիճակն իմն է։

Քեօռ-օղլին եմ, սուրս արիւնով լողացրի,
Մինչ Շամ, Հալէպ, Պօլիս իմ կողմը սողացրի,
Արևելքից մինչ արևմուտք դողացրի,
Այդ անեզր, անսահման շրջանակն իմն է։

Այս անակնկալ պատասխանն ու երգերը լսելով սուլթանը՝ սոսկաց և մարդ ուղարկեց ու հրամայեց, որ երկուսն էլ անմիջապէս գան։

Երբ Քեօռ-օղլու յայտնուելը յանկարծ լսեցին Պօլի-բէգն ու Ղաճարալին, երկուսն էլ սուտ հիւանդ ձեւացան երկիւղներից և չուզեցին գալ։

Գնացող հրաւիրողը վերադարձաւ սուլթանի մօտ և յայտնեց, որ հիւանդ են, չեն կարող գալ։

Սուլթանը բարկացած բացականչեց.— «Ես հիւանդ —միւանդ չիտեմ, գնացէք, ասացէք՝ որ այս բոպէիս կամ գան և ինձ ազատեն այս հրէշի (Քեօռ-օղլու) ձեռքից, կամ եթէ ոչ կաշիները տիկ հանել ու յարդ լցնել տալով կը դնեմ Աթ-մէյդանի հրապարակի վերայ ի նախատինս իրանց անուան։

Մինչև հրաւիրակը նորից գնաց կանչելու, քաջ Քեօռ-օղլին սուլթանին զբաղեցնելու համար, ձին պալատի հրապարակի վրայ չափ գցելով ու խաղացնելով, մի քանի գլուխ գնաց եկաւ ու հետևեալ գիւցազնական երգը երգեց։—

Առոյգ ոչխարիցը լաւ գառ կը ծնի,
Քաջիցը քաջ սերունդ կլնի, սուլթանս,
Պատերազմին քաջը անվախ կը մնայ,
Իսկ վախկոտը հիւանդ կլնի, սուլթանս։

Անարգ մարդին լինի թուք ու նախատինք,
Նրա կեղտոտ փոշին պիտ հանել երկինք,
Այսօր դեռ չը հասած մինչև ի յետինք,
Տուտով հողին աւանդ կլնի սուլթանս։

Քանի որ ինձ տեսնէք ձիուս քամակը,
Ասպարեզում իմն է մեծ յաղթանակը,

Թէկուզ գլխիս վառուի անշէջ կրակը,
Թշնամին ինձ հնազանդ կլնի, սուլթանս։

Քեօռ-օղլի, երկչոտի բաժինն է վախը,
Կուռի ասպարէզում մեռնելն իր հախը,
Սրտից քաշած հառաչանքներն ու ախը,
Իրան անմեռ պատանդ կլնի, սուլթանս։

Երգը որ վերջացրեց՝ դադար առաւ. հրաւիրակն էլ նոյն միջոցին եկաւ և լուր բերեց, որ գալիս են, միայն խնդրում են սուլթանից, որ ասպարէզի մէջ Քեօռ-օղլու Ղռաթի հետ մրցող երկու ձի պատրաստել տայ իրանց համար։

Այս որ լսեց Քեօռ-օղլին, ժպտաց ու ասաց,—«ուրեմըն այդ մարդիկը գալիս են, ոչ թէ իմ դէմ մրցելու, այլ ասպարէզից, իմ առջևից փախչել ազատուելու»։

Դեռ խօսքը նոր էր վերջացրել, որ երկուսն էլ զինավառուած ու ձի նստած յայտնուեցին հրապարակում, և Քեօռ-օղլուն տեսնելով՝ գոյները գցեցին, սփրթնեցան։

Քեօռ-օղլին մի սարսափ ազդող հայացք ձգելով նրանց երեսին և մի քանի արհամարհական ակնարկներ անելով, յանդիմանական ու կծու խօսքերով երգեց։—

Երկու կեղտոտ երբ դուրս գան մի ասպարէզ,
Ուրախ ասպարէզը՝ տխուր կը դառնայ,
Իսկ եթէ մի կտրիճ գտնուի այնտեղ,
Հրճուանքն ու ցնծումը հանուր կը դառնայ։

Կտրիճի խոր վէրքից արիւնն հոսում է,
Բայց նա դարձեալ վերջին շունչը կռւում է,

Վախկոտը թշնամուն տեսաւ փախչում է,
Հեռուն առանձնացած բլուր կը դառնայ։

Քեօռ-օղլին եմ, չեմ հեռանայ այստեղից,
Մուկն առիւծին կարէ՞ վանել իր որջից,
Իսկ երբ մի այծ փախչի—ազատուի գայլից,
Պօզին նայած, ըղընգեղջիւր կը դառնայ,

Երգն աւարտելուց յետոյ՝ ձին աշտանակեց ու մի պտոյտ անելով, նախ եկաւ կանգնեց Պօլի-բէգի առաջ ու արհամարհական կերպով ձայն տուեց.—«Պօլի-բէգ, եթէ շնորհք ունիս՝ այս հրապարակի վերայ տղամարդի պէս բանացրու, որ մարդիք տեսնեն քաջութիւնդ, եթէ ոչ՝ խաբէութիւնով գործ տեսնելը տղամարդութիւն չէ»։ Այս ասելով, հրաւիրեց որ ինքն անշարժ պատրաստ կը կանգնի, իսկ Պօլի—բէգը ինչ որ անելու է՝ թող անէ։

Սուլթանի ներկայութեամբ արհամարուած ու վիրաւորուած Պօլի-բէգը ձին քշեց հրապարակի գլուխը և այնտեղից արիւնը աչքերը լցուած վերադարձաւ ու ձեռքի լախտով այնպիսի մի ուժգին հարուած տուեց Քեօռ-օղլու գլխին, որ ինչպէս ասում են՝ «մօրից ծըծած կաթը քթից եկաւ» և տեսնողները կարծեցին թէ՝ գլուխը հազար կտոր եղաւ։

Բայց ճարպիկ Քեօռ-օղլին ձեռի վահանով այնպէս վարպետութեամբ պաշտպանուեց ու յետ մղեց հարուածը, որ ոչ մի վնաս չեղաւ իրան։

Այս որ նկատեց Պօլի-բէգը, հասկացաւ՝ որ անշարժ կանգնելու հերթը իրանն է, ասպարեզից փախս առաւ դէպի տուն, բայց Քեօռ-օղլին յետևից հասնելով, իւր

Ջիլֆիխար թրով մի այնպիսի հարուած տուեց վզին, որ անմիջապէս գլուխը մարմնից բաժանուեց, իսկոյն գլուխը անցկացնելով իւր նիզակի ծայրին, բերեց և ընծայեց հանդիսատես Սուլթանին ու ասաց.—«ձա՛ռ, Տէր արքայ. այն գլուխը՝ որին միամտաբար խաբուելով դու պատուեցիր, ահաւասիկ ես պատժելով՝ քեզ եմ ընծայում»։

Ղաճար-Ալին թէև Քեօռ-օղլու քաջութիւնը վաղուց գիտէր, որովհետև նրա մօտ ծառայել էր, բայց ինքնասիրութիւնը սկզբից նրան թոյլ չը տուեց, որ ասպարէզից փախչի ազատուի, առանց մենամարտելու, այլ ապուշ կլթած սպասում էր թէ իրան հետ արդեօք ինչ կը պատահի։

Քեօռ-օղլին Պօլի-բէգի հետ իւր հաշիւը մաքրելուց յետոյ, դարձաւ դէպի Ղաճար-Ալին և նրան վիրաւորելու ու գրգռելու համար հետևեալ պարծենկոտ ու սրտածակող երգը երգեց.—

Երբ քաջը կռուի քաջաբար,
Հրապարակը դղրդում է,
Կոտորելով մարդիք հազար,
Հրապարակը դղրդում է։

Երկչոտի զէնքն է լաց ու թաց,
Կամ փախուստ տալը գլխաբաց.
Երբ լախտեր դիպչին վահանաց,
Հրապարակը դղրդում է։

Ինչպէս կայծակըն շանթուող օդից,
Գոռգոռալով իջնի բարձրից,

Քեօռ-օղլուս էլ ահեղ ձայնից
Հրապարակը դղրդում է։

Ղաճար-Ալին այս վիրաւորական երգը լսելով, ներսը չը տարաւ, վիրաւորուած առիւծի պէս գոչեց.—«Ինչ որ մեծաբերնեցիր, բաւական է. պատրաստուիր, Քեօռ-օղլի, որ գալիս եմ. չը կարծես թէ ամեն օր բաղդը երեսիդ պէտք է ժպտայ» ասաց ու յարձակուեց նրա վերայ, բայց չը կամեցաւ հարուածը գլխին տալ, այլ մէջքին։

Բայց Քեօռ-օղլին, որ թշնամու ամենափոքր շարժումներից հասկացաւ, որ նա աշխատում է հարուածը կռնակի կողմից տալ, ուստի մի ակնթարթում իւր քեմխոտապատ լայն վահանը ձգեց կռնակի կողմը և պաշտպանուեց։ Լախտը դիպչելով վահանին՝ երկու տակ ծռուեց ու գետին ընկաւ, իսկ Քեօռ-օղլին մնաց անվնաս։

Հարուածը տալուց յետոյ, Ղաճար-Ալին տեսաւ որ անաջող անցաւ, անմիջապէս սկսեց ասպարեզից փախչել։ Բայց Քեօռ-օղլին ընկնելով նրա յետևից ձայն տուեց.—«Սպասիր, Ղաճար-Ալի, ո՞ւր ես փախչում, քեզ հետ էլ մի թէթև հաշիւ ունիմ, այն էլ վերջացնեմ, այնուհետև ուր ուզում ես՝ գնայ։ Այս ասելով՝ յետևից հասաւ և մի այնպիսի հարուած տուեց, որ հրապարակի կիսում ընկաւ ու հոգին փչեց, շանսատակ եղաւ։

Այս բոլոր գործողութիւնը կատարուեց մի քանի բոպէում սուլթանի, պալատականների ու խուռն բազմութեան ներկայութեամբ, որոնք ապշած ու զարմացած նայում էին։

Անման չէր այս հանդիսատեսութիւնից նաև ջը-

բատար Դոնա-խանումը, որը կանգնած իւր ննջարանի լուսամուտի առաջ, մի կողմից դիտում էր կատարուած արիւնռուշտ անցքերին, և միւս կողմից իւր սիրած Իսապալուն, որը ասպարեզի մի անկիւնում կանգնած, անտարբեր դիտում էր դէպ իրան, ամենևին ուշադրութիւն չը դարձնելով իւր շուրջը կատարուած արիւնահեղ անցքերին։

Քեօռ-օղլին իւր հաշիւը Ղաճար-Ալու հետ վերջացնելուց յետոյ, նորից դարձաւ հրապարակը և աչքով ունքով ու մի քանի կարճ խօսքով հասկացուց Իսապալուն, որ շտապի քաղաքից դուրս գալ և սպասել իրան։

Այդ միջոցին Իսապալին աչքը Դոնա-խանումի լուսամուտին գցելով, մի խոր ախ քաշեց ու իսկոյն անյայտացաւ։

Այդ խուլ հառաչանքը Քեօռ-օղլու վրայ մի ուրիշ տպաւորութիւն գործեց, որովհետև լաւ գիտէր թէ ինչու համար էր, բայց ձայն չը հանեց։

Իսապալու անյայտանալը տեսնելով Քեօռ-օղլին՝ մտրակեց ձին և մի ակնթարթում արձանացաւ սուլթանի առաջ, որ դեռ կատարուած իրողութիւնների տպաւորութեան տակ շուարած պատշգամբում անշարժ մնացել էր, ասաց՝—«Վեհափառ սուլթան, ես իմ հաշիւները վերջացրի, ում հետ որ ունէի. այժմ ոչ ոքի հետ հաշիւ չունիմ, այսուհետև դուք ձեզ համար խաղաղ ապրեցէք, ինձ էլ թողէք, որ իմ լեռներում հանգիստ ապրեմ... Աստուած ձեզ էլ օրհնէ՝ մեզ էլ». ասաց ու Ղռաթի գլուխը շուռ տալով՝ անյայտացաւ։

Սուլթանը և իւր շրջապատողները ուշքի գալով աղաղակեցին—«բռնեցէք, Քեօռ-օղլուն բռնեցէք, փախաւ»։

Ամբոխը լսելով այս աղաղակի ձայնը, ամենքը մի կողմ դիմեցին բռնելու, բայց ո՞րտեղ· ո՞վ կարող էր Ղըռաթի հետքը գտնել, կամ նրա տիրոջը բռնել։

Քեօռ-օղլին այդտեղից հեռանալով, մի սակաւամարդ թաղում փոքր ինչ հանգստացաւ ու կազդուրվեց, մինչև ամբոխն էլ ամենը մի կողմ ցրուեցաւ։

Այդ միջոցին միտքն ընկաւ Իսապալու խոր հոգոց քաշելն ու Դոնա-խանումի վիզը ծուռ նայելը և ինքն իրան ասաց.—«ամօթ կլնի ինձ համար, որ երկու սիրով սիրած սրտեր իրարուց բաժան թողնեմ. էլ ո՞ւր եմ գըտակ ծածկում, կամ ի՞նչու է անունս Քեօռ-օղլի, երբ այդ սիրուն տատրակները միմեանցից հեռու, զօր-գիշեր վիզները ծուռ, օրերն ու ժամերը լալով և ողբով պէտք է անցկացնեն։ Ո՛չ, այդպէս չի լինի. ես նորից կերթամ պալատ և Դոնա-խանումին մի կերպ փախցնելով՝ իրայ մուրազին կը հասցնեմ»։

Այս վճիռը իւր մէջ կայացնելով, թռաւ Ղռաթի կռնակը և անծանօթ ու ոլոր—մոլոր փողոցներով անցնելով եկաւ կանգնեց Դոնա-խանումի լուսամուտի հանդէպ, ուր նա աչքը ուղղած այն ճանապարհին, որտեղից Իսապալին էր գնացել, խորը մտածում էր, ձայն տուեց.—«Դոնա-խանում, երախտապարտ եմ քեզ· թէ իմ ազատութիւնով և թէ մայրաբար տարած խնամքովդ, խնդրում եմ վայր իջնես, աղ ու հացդ հալալ անես, մի անգամ էլ ձեռքդ համբուրեմ, շնորհակալութիւնս յայտնեմ և վերջին մնաս բարեաւ ասեմ ու հեռանամ. որովհետև, ով գիտէ, մէկէլ այս կողմերը կգամ թէ ոչ»։

Սկզբում Դոնա-խանումը մի քիչ կասկածեց ու տատանուեց անվճռականութեան մէջ. բայց յետոյ ինքն իրան մտածեց.—«այս բազմամբոխ մայրաքաղաքի մէջ ի՞նչ կարող է անել», ասաց ու սկսեց սանդուխներից կամաց կամաց վեր գալ՝ մօտեցաւ Քեօռ-օղլուն, ձեռքը մեկնեց որ համբուրէ։

Բայց քաջ Քեօռ-օղլին ձեռքը բռնելուն պէս, թեթև փետուրի նման քաշեց ձիու գաւակը, սպառնաց որ ձայն չը հանէ, և գօտին արձակելով՝ Դոնա-խանումին պինդ կապեց իւր մէջքին, որ ճանապարհին ձին արշաւելիս վայր չընկնի. ու այդպէս բռնաւորած նորից գընաց սուլթանի պալատի առաջ և ձայն տուեց.—«մնաս բարեաւ սուլթանըս, մի շաբաթ յետոյ ձեր բոլոր պալատականներով խնդրում եմ շնորհ անէք գալ Դոնա-խանումի հարսանիքի ուրախութեան հանդիսին մասնակցելու»։ Խօսքը վերջացնելուն պէս, ստուերի նման անհետացաւ նրանց աչքերից։

Սուլթանը տեսնելով, որ Քեօռ-օղլին Դոնա-խանումին էլ փախցրեց, խելագարի նման այս ու այն կողմ ընկած բղաւում էր.—«հասէք, 'ի սէր Աստուծոյ, օգնութեան հասէք, ով որ իմ գլուխը սիրում է, հասէք այդ արիւնարբու աւազակին բռնեցէք, կտոր կտոր արէք... ով որ նրան կենդանի կամ մեռած ինձ ներկայացնէ՝ իմ յատուկ որդեգիրը կը լինի և իմ թագաւորութիւնը կը ժառանգէ»։

Ահա այսպիսի խոստումներով ու յորդորներով խրախուսուած ամբոխը, որը զէնք, որը մահակ որը բահ... միով բանիւ ում ձեռը ինչ որ ընկել էր, ահագին բազմութեամբ հետապնդում էին Քեօռ-օղլուն, որ բռնեն, Դոնա-խանումին ազատեն ու խոստացած պարգևներն ստանան։

Այդ խառնամբոխ բազմութեանը միացաւ և մի քանի փաշտ պետական կանոնաւոր զօրք, որոնք մի մեծ բանակ կազմեցին, առանձին հրամանատարի իշխանութեան ներքոյ։

Քեօռ-օղլին վաղուց արդէն հասել էր Խսապալուն, որ քաղաքից բաւականին հեռու սպասում ու հանգստանում էր։

Խսապալին երբ յանկարծ տեսաւ Դոնա-խանումին Քեօռ-օղլու գաւակին, ուրախութիւնից քիչ էր մնում որ գժուի. բայց դարձեալ իրան մի կերպ զսպեց և ժըպտալով ու կատակներ անելով՝ զուարճանում էր։

Բայց խոհուն Քեօռ-օղլին դեռ վրդովուած ու անհանգիստ էր, որովհետև լաւ գիտէր, որ իւր արածները սուլթանը չը պիտի մարսէ և անշուշտ մեծ բանակով հետամուտ կլինի իրան ձերբակալելու կամ սպանելու։ Այդ պատճառով էլ զգոյշ էր մնում և աչքը միշտ ուղղած քաղաքի ճանապարհին, սպասում էր բանակի յայտնուելուն։

Նա սխալ չէր իւր կարծիքի մէջ։ Մի քանի ժամ չանցած, ահա փոշին պատեց այն բլրակի առջև գտընուած դաշտավայրը, ուր մեր քաջերը հանգստանում էին։

«Մեր տղայ, ջղերը կոտրատելով, ասաց Քեօռ-օղլին Խսապալուն, ժամանակն է որ այս ամայի վայրում էլ մի տղամարդութիւն ցոյց տանք սուլթանին իր բնիկ հողի վերայ ու այնպէս հեռանանք այս արիւնաշաղախ երկրից, ուր միայն արիւն թարախի հոտ է բուրում։ Ուրեմըն դուք երկուսդ այստեղ մի փոքր հանգստացէք, մինչև որ ես գնամ այդ եկողների հետ մի քիչ խաղամ, հանաքներ անեմ ու վերադառնամ։»

—«Ես էլ կգամ, վրայ բերեց Խսապալին, որովհետև դու մենակ ես՝ իսկ բազմութիւնը մեծ... մանաւանդ որ ես էլ ձանձրացայ երկար ժամանակ անգործ մընալով»։

—«Ո՛չ, պատասխանեց Քեօռ-օղլին, այս քնքոյշ մեծացած տատրակին անապատի մէջ միայնակ թողնել չի կարելի. գոնէ, մի խօսող ընկեր պէտքէ ունենայ, որ մխիթարուի»։

Այս վերջին ասածը թէ և Խսապալու սրտովն էր, բայց առերեսս դարձեալ պնդեց, որ ինքն էլ է ցանկանում անմասն չը մնալ այդ խաղից։

Խորագէտ Քեօռ-օղլին թէպէտ մի խուլ ակնարկով նրան արգելեց իրան հետևելու, բայց մի և նոյն ժամանակ մտածում էր, որ «կրակը բամբակի մօտ թողնել» և «գառը գայլին պահ տալ» չի կարելի։
Ուստի առանց ժամանակ կորցնելու, Խսապալուն ջոկ և Դոնա-խանումին էլ առանձին կապեց ու միմեանցից փոքր ինչ հեռացնելով, ինքը արշաւեց պատերազմի դաշտը։

Երբ մօտեցաւ բանակին, ինքն իրան ուղղելով խորը մըռմռաց ու թուրը քաշելով ընկաւ բանակի մէջ։ Ժիր հնձուորի նման մի գլխից մտաւ՝ միւսից դուրս եկաւ. հազիւ թէ նրանք միայն ազատուեցան, որոնց թեփը, ինչպէս ասում են, դեռ չէր պարպել։ Մի խօսքով, այնպիսի կոտորած տուեց, որի նմանը մայրաքաղաքում դեռ չէին լսած։

Զօրագլուխը հազիւ հազ գլուխը պրծացրեց ու յաղթուած զօրքի մնացած փշրանքներով կորագլուխ վերադարձաւ Պօլիս, իրանց պարտութեան լուրը հաղորդելու սուլթանին։ Իսկ Քեօռ-օղլին յաղթանակով Խսապալու և

Դոնա-խանումի հետ ճանապարհ ընկաւ դէպի Զամլիբէլ։

Այդ միջոցին ուրախ էր բնութիւնը. ուրախ էին նաև մեր ճանապարհորդները, երբ յանկարծ բարձրում երևացին մի խումբ կռունկներ, որոնք եռանկիւնի կազմած կռկռալով գալիս էին Զամլիբէլի կողմից։

Այդ րոպէին Քեօռ-օղլու միտքն ընկաւ Նիկեար խանումը, որին երկար ժամանակ չէր տեսել և սիրտը լցուելով արտասուեց։ Անմիջապէս Ղռաթի սանձը քաշելով կանգնացրեց ու ասաց.—մի փոքր սպասէք, Իսապալի, այս կռունկներից մի տեղեկութիւն առնեմ Նիկեար խանումի մասին ու այնպէս ճանապարհ ընկնենք։ Եւ հէնց ճանապարհի միջին շապկահան արաւ սազն ու սկսեց երգել։—

Քաղցրանուագ սիրուն կռունկք,
Իմ Նիկեարից ի՞նչ լուր ունիք,
Խորհում եմ օրն ի բուն, կռունկք,
Իմ Նիկեարից ի՞նչ լուր ունիք։

Նա իմ լոյս արևն է չքնաղ,
Կեանքս լինի նրան մատաղ,
Քաղցրախօս ու գերածիծաղ,
Իմ Նիկեարից ի՞նչ լուր ունիք։

Քեօռ-օղլին եմ միշտ անդադար,
Ամեն երկրից առնող աւար,
Գիշեր ցերեկ անմխիթար,
Իմ Նիկեարից ի՞նչ լուր ունիք։

Օդաչու անմեղ թռչունները ոչինչ չը պատասխանեցին մելամաղձոտ Քեօռ-օղլուն, այլ իրանց սովորական կռկռոցը շարունակելով, շղթայ կազմած, անցան գնացին։

Մեր ճանապարհորդներն էլ հանդարտ շարունակեցին իրանց ճանապարհը այն շաւղով, որ ուղղակի տանում էր Զամլիբէլ։ Նրանք համարեայ մօտացել էին իրանց բնակարանին։ Հեռուից սև կէտի նման երևում էր գոռոզ ամրոցը։

Այդ օրը Այվազը, ըստ սովորութեան, դիտակը ձեռին բարձրացել էր բուրգի գլխին և նայում էր դէպի Պօլսի ճանապարհին, յանկարծ տեսաւ որ Քեօռ-օղլին, Իսապալին և Դոնա-խանումը գալիս են։ Բարձրաձայն աղաղակներով նոյն րոպէին վայր իջաւ բուրգից և լուր տուեց Նիկեար խանումին ու միւսներին, թէ Քեօռ-օղլին Իսապալու և Դոնա-խանումի հետ գալիս են։

Կայծակի արագութեամբ քաջերը ձի նստած, Այվազի առաջնորդութեամբ ընդառաջ գնացին դիմաւորելու։

Սրտի ուրախութիւնից ճանապարհին քաջերը մականախաղ էին խաղում, ձիաները չափ էին գցում և հազար ու մի օյիններ հանում։

Հեռուից այս բանը դիտելով Դոնա-խանումը, Քեօռ-օղլուն ասաց.— «այդ ի՞նչ ձիաւորներ են, մի գուցէ աւազակներ լինին»։

—«Անհոգ կաց, պատասխանեց Քեօռ-օղլին, եկողները իմ սիրելի Այվազն է և մեր միւս քաջերը։ Մեր գալուստը լսելով մեզ դիմաւորում են և ձիարշաւ անում։ Աւազակներից ո՞ր մահկանացուն կը յանդգնի իմ քաջերի երկիւղից մեր սահմանում ոտ դնել, եթէ չի բէզարել իր կեանքից։

—«Ես ի՞նչ իմանամ, եկողներից ո՞րն է քո սիրելի

Այվազը», ժպտալով ասաց Դոնա-խանումը, որի կարմրալար շրթունքների վրայ մեղրածուծի նման խաղում էր անմեղութիւնը։

—«Այս րոպէին քեզ կը հասկացնեմ, թէ որն է Այվազը,» ասաց Քեօռ-օղլին ու սազը վերցնելով՝ սկսեց երգել։—

Մեզ ընդառաջ եկողն այսօր
Այվազն է, իմ քաջ Այվազն է,
Մեր խմբի մէջ բազմաշնորհ,
Այվազն է, իմ քաջ Այվազն է։

Գեղեցկութեան արքայ է նա,
Որ նմանը երբէք չըկայ,
Աշխարհի մէջ մի անթիքայ,
Այվազն է, իմ քաջ Այվազն է։

Երկար ու լօդիկը հագած,
Ծկուն նիզակը ձեռքն առած,
Աշխէտ ձիու վերայ նստած,
Այվազն է, իմ քաջ Այվազն է։

Մահից երբէք չը վախեցող,
Թշնամու բանակը ցրող,
Վատին սրից անցկացնող,
Այվազն է, իմ քաջ Այվազն է։

Քեօռ-օղլու խմբին հսկողը,
Ամեն տեղ առաջնորդողը,
Գլխին զարդմանակ կրողը,

Այվազն է, իմ քաջ Այվազն է։

Մինչ երգի աւարտելը՝ Այվազն իւր խմբով այնքան էր մօտացել նրանց, որ մինչև անգամ երգի վերջին տողերը բառ առ բառ լսեց։

Հազիւ մի քայլ էր մնացել միմեանց հասնելու, որ Այվազը ձիուց իսկոյն վայր թռաւ, գրկախառնեց ու փաթաթուեց Քեօռ-օղլուն և անվերջ համբուրում էր ձեռքն ու երեսը, և ճակատը տրորում կուրծքին, այնպէս որ նրա աչքերից թափուող յորդ արտասուքը՝ թրջեց Քեօռ-օղլու լանջապանակը։

Բոլոր ընդառաջողները մի առ մի հետևեցին Այվազի օրինակին։

Դոնա-խանումը ապշած նայում էր եռացող խմբի ցոյցերին և ուրախութեանը, որոց աղաղակները օդը թնդացնում էր։

Այս յուզիչ տեսարանը այնպէս ազդեց Քեօռ-օղլու վերայ, որ սազը ձեռքն առնելով՝ նորից երգեց։—

Իմ սիրելի Ջամլիբէլը երբ տեսայ,
Մոռացայ տանջանքս, փափագ չը մնաց,
Շատ քաղաքներ, գիւղեր, աւաններ անցայ,
Նորոգուեց իմ կեանքս, փափագ չը մնաց։

Կարտասուէի, երբ տեսնէի թշուառներ,
Եւ կօգնէի որքան միջոցս ներէր,
Միշտ թալանել հարուստ վաճառականներ,
Այդ էր ուխտս, ջանքս, փափագ չը մնաց։

Շատ երկիրներ ման եկայ ծայրէ ի ծայր։

Ջամլիբէլը ինձ ընտրեցի բնակավայր,
Շինել տուի բերդ ու ամրոց մեծ քարայր,
Անդ լցի ապրանքս, փափագ չը մնաց։

Քեօռ-օղլին եմ, Ջամլիբէլիս միշտ գերի,
Բոլոր ուխտս կատարեցի անթերի,
Ուր մի սիրուն տեսայ՝ փախցրի-բերի,
Լրացաւ բաղձանքս, փափագ չը մնաց։

Երգը աւարտելուց յետոյ, երբ բոլորը տեսակցեցին, հիւրերին մէջ տեղ առած՝ դիմեցին դէպի Ջամլիբէլ· ըստ առաջնումն ձիարշաւ անելով, և հանդիսաւոր կերպով, յաղթական դռնից ներս մտան ամրոցը, ուր սրտատրոփ ու պատրաստ կանգնել սպասում էր Նիկեար-խանումը, որի գեղեցկութիւնից պիտի ամաչէր Կալիփսէի հետ միասին Եւքարիս յաւիրժահ։

Կորովի Քեօռ-օղլին մի կողմից այս յուզիչ ցոյցերը տեսնելով և միւս կողմից Նիկեար-խանումի վարդագոյն երեսն ու կախարդիչ աչքերը՝ ինքն ևս յուզուեցաւ։ Ամբողջ բանակների ու հրոսակների յաղթող առիւծը, գեղեցկութեան ու ուրախութեան ցոյցերի առաջ ընկճուեց, ու ձիուց իջնելով փարուեց Նիկեար-խանումի կարապի պարանոցով, համբուրեց նրա վարդանման այտերը, նշաձև աչքերն ու բարակ շրթունքները, մի քանի խրատական ու քաջալերական խօսքեր էլ ուղղելով իւր զինակից քաջերին, հէնց դրան առաջ սազն առաւ ձեռքն ու բոլորի ներկայութեամբ դիւցազնօրէն երգեց.

Անթիւ զօրաց դէմ պատերազմ մղելիս,
Թիկնապահքդ քաջ ախոյեան ունեցէք,

Արհամարհէք մահը միշտ յարձակուելիս,
Վեցշերտեան լախտ, սուր ու վահան ունեցէք։

Յոյս մի՛ դնէք դուք միայն բազուկներիդ,
Որ չլնի թէ հանգնի լոյս լապտերներիդ,
Երբ հաւատ ընծայէք կեղծ ընկերներիդ,
Աչքի առաջ միշտ կաղախան ունեցէք։

Հետևէք Քեօռ-օղլուս, մի լինիք տկար,
Դէմ դրէք թշնամուն անթիւ անհամար,
Պատերազմի դաշտում մեռէք քաջաբար,
Անուն անմահ մինչ յաւիտեան ունեցէք։

Երգը վերջացնելուց յետոյ, Նիկեար-խանումը ու Փերուզատ-խանումը, Դոնա-խանումի ձեռքից բռնած ներս առաջնորդեցին մի կահաւորեալ սենեակ՝ ուր վայելչութեան, պերճանքի ու փափկութեան ամեն կերպ շռայլութիւն կար, որի նմանը համարեա Դոնա-խանումը իւր հօր արքունական ապարանքներում էլ հազիւ էր տեսած։ Թաւշեայ բարձեր, մետաքսեայ պաստառներ, ոսկեթել անկուածներով ու ծոպերով գոյն զգոյն վարագոյններ, ծաղկենկար գորգեր և այլ ամենայն ըստ պատշաճի, ոսկեձեղուն սենեկի զարդն ու զարդարանքն էին կազմում.. որոնց վերայ ցողած վարդի, յասմիկի ու բուրդէնի իւղի անուշահոտութիւնից մարդի ջղերն ու քիմքը գրգռուելով՝ մի տեսակ անուշ նինջ էր գալիս վերան... Այս բոլորի ստեղծագործողը՝ քնքոյշ սեռի աննման գեղեցկութիւնն էր։

Ահա այս փառահեղութեան մէջ, Դոնա-խանումը մի

երկու բաժակ զովացուցիչ օշարակ ընդունեց ու գլուխը թեքելով բարձի վրայ՝ անուշ մրափեց։

Երբ քնից կազդուրուած զարթնեց Դոնա-խանումը, տեսաւ որ ամեն ինչ պատրաստ է իւր համար։

Ծանապարհի հանդերձները մի կողմ դնելով՝ հագաւ իւր համար սպիտակ բեհեզից ու զարնաւուխտից պատրաստած պերճ ու շքեղ հագուստները, նրանից յարմար ու վայելուչ ոսկեղէն և գոհարեղէն զարդեր քաշ արաւ գլխից ու պարանոցից, աչքերն ու յօնքերը ծարուրեց և իբրև գեղեցկութեան թագուհի, Նիկեար ու Փերուզատ խանումների հետ դուրս եկաւ այգին զբօսնելու, որոնք մի առանձին խնամքով ու մայրական գգուանքով էին վե-րաբերվում նրան, Քեօռ-օղլու ծածուկ տուած հրահանգի համաձայն. այնպէս որ, բնաւ չէր թվում նրան, թէ ինքը օտար կլիմայի ու շրջանի մէջ է ապրում։

Այգու հրապարակներում մի քանի շրջան անելուց յետոյ՝ ոսկեզօծ մատուցարանի վերայ, մարմարեայ շատրը-ւանի մօտ, նրանց մատուցին բիւրեղեայ գրգլակներ Շիրազի անուշահոտ թամբաքուով լցրած, որի անուշա-հոտութիւնը օդը ծաւալում էր, և ճենապակու բաժակ-ներով արաբիայի մշկահոտ սուրճ։

Հէնց այդ մի և նոյն միջոցին, Նիկեար-խանումի մի ակնարկով սկսուեց ներդաշնակ ու հոգեզմայլ նուա-գածութիւնը։ Հնդիկ աղախինը իւր վարժ մատները այնպէս էր խաղացնում տամբուրի լարերի վերայ, որ կարծես դիւթում ու կախարդում էր լսողի սիրտն ու հոգին, ինչպէս որ պատահեց Դոնա-խանումի հետ...։

Իսկ Քեօռ-օղլին շրջապատուած իւր քաջերով, նըս-տել էր մեծ դահլիճում, որ առաւել նման էր զինարանի,

քան դահլիճի, որովհետև ամբողջ պատերը շուրջանակի զարդարուած էին զանազան ձևերի ու տեսակի շինուած ոսկեհուռ ու արծաթապատ զէնքերով ու զրահներով, որոնք ծառայում էին պատկերների փոխանակ։

Նա ախորժակով պատմում էր իւր գլխի անցքերը, պատմում էր նոյնպէս և Դոնա-խանումի իրան արած մեծահոգութիւնն ու բարիքը։

Պատմութեան աւարտն առնելուց յետոյ, Քեօռ-օղլին հրամայեց ճաշի նստել և բոլորին հրաւիրեց սեղանի վերայ ու աւելացրեց.-«այսօր թէպէտ իմ ուրախութեան օրն է, բայց մի այլ ուրախութիւն ևս պիտի կատարուի նրա հետ, որը մի քիչ յետոյ կիմանաք, իմ քաջե՛ր»։

Սեղանը բացուեց. ամենքը բոլորեշուրջ նստած ճաշա-կում էին ախորժակով և հետոն էլ մէջ ընդ մէջ վայելում նռան գինին ու քաղցր օշարակներ։ Շնորհալիներից ոմանք էլ երգում ու նուագում էին իրանց արած քա-ջութեան դիւցազնական կտորներից, առաւելապէս Քեօռ-օղլու հերոսական քաջագործութիւններից։ Մի խօսքով ամբողջ դահլիճը կենդանութիւն էր ստացել։

Ծաշը բաւականին երկարեց, և գինին կամաց կամաց իւր ներգործութիւնը ցոյց էր տալիս. բայց խիստ ուրախ տրամադրութեան տակ, աւելի ազդել էր Քեօռ-օղլու վերայ, որի ուրախութեանը չափ չկար։

Այդ ուրախ ժամանակին, բոլորի ներկայութեամբ հրապարակապէս և հանդիսաւոր կերպով ասաց.-«Սիրելի Այվազ, ամենքին յայտնի է, որ երբ մի մարդ գնում է օտար աշխարհ, վաճառականական ու այլ գործերով, վերադարձին իւր մերձաւորների համար, ըստ արժանա-ւորութեան, մի մի ընծայ է բերում։ Ես էլ հետևելով

այդ օրինակին, ըստ իմովսանն, մի արժանավայել ընծայ իմ բերել քեզ համար. այն է՝ չքնաղագեղ Դոնա-խանումին, սուլթանի հարազատ աղջկանը, որի նման ինչպէս տեսնում ես, հազիւ թէ ճարուի աշխարհումս»։

Այս խօսքերը լսելով Այվազը, ոտքի կանգնեց ու գլուխ խոնարհելով՝ ասաց.-«Ներեցէք, տէր իմ, ես ամենայն հպատակութեամբ պատրաստ եմ անթերի կատարել ձեր արձակած բոլոր հրամանները, բայց գալով Դոնա-խանումի ինձ հարսնացու ընտրելուն, բնաւ համաձայն չեմ և մերժելով կը մերժեմ. որովհետև այդու պատուը նա պիտի վայելէ, ով որ իւր ձեռքով այգի է տնկել։ Արդարապէս ասելով, ձեր առաջարկութիւնը աւելի քան Իսապալուն է արժան, քան թէ ինձ. քանի որ անձնուիրաբար նա միայն ամեն վտանգ յանձն առաւ գալ ձեզ որոնելու. ուրեմն և ձեր բերած թանկագին ընծան նրան է արժանի... Եթէ մինչև անգամ յատկապէս ինձ համար էլ բերած լինիք, ես նրան ճանաչում եմ իբր իմ հարազատ քոյրը և կամովին արժան տեսնում, իմ սրտակից և մտերիմ ընկեր Իսապալուն»։

Իսկոյն վեր թռչելով տեղից Քեօռ-օղլին, համբուրեց ճակատն ու ասաց.-«աֆէրիմ Այվազ, աֆէրիմ. ես այդ առաջարկութիւնը քեզ փորձելու նպատակով արի, ուրեմն քեզ էլ մատաղ քոյ Իսապալին էլ»։ Այս ասելով հրամայեց որ հարսանիքի պատրաստութիւն տեսնեն, բայց այնպիսի պատրաստութիւն,-որ թէ իմ հերոսները կշտանան և թէ շրջակայ գիւղերի մեծ ու փոքր բնակիչները»։

Հէնց հետևեալ օրը, առաւօտից վաղ սկսեցին հարսանիքի պատրաստութիւն տեսնել։ Մորթեցին մի քանի

հազար գառն ու ոչխար, մի քանի հարիւր եզն ու կով. Իսկ որսացած թռչուններին ու մանրիկ կենդանիներին խոմ թիւ ու համար չկար։ Դրանց չափով էլ եղ, բրինձ, չիր, քիշմիշ, զանազան չոր ու թարմ մրգեղէններ, այլ և այլ ըմպելիքներ և ուրիշ պատրաստութիւններ էին տեսնուած։

Հանդիսին աւելի մեծ շքեղութիւն տալու համար, հրաւիրել էին բազմաթիւ մոլլաներ-կարդացողներ, մատռուակներ, ձեռնածուներ, լարախաղացներ, ըմբիշներ, թմբկահարներ, նուագածուներ և այլն։

Երբ հարսանիքի լուրը տարածուեց շրջակայքում, բացի յատկապէս հրաւիրեալներից, մի քանի հազար հոգի էլ առանց որ և է հրաւէրի հաւաքուեցին այդտեղ։ Մէկ խօսքով, մի օրում այնքան բազմութիւն հաւաքուեց, որ ամրոցը կատարելապէս նմանում էր մի բազմամարդ քաղաքի, քան թէ որ և է գիւղի։

Բացի այր մարդկանցից, ոչ սակաւ թուով հրաւիրուած էին նաև կանայք, որոնք շրջապատած Դոնա-խանումին, երգով, նուագով, ու գովեստներով հարսանեաց ոսկեհուռ հանդերձներն էին հագցնում։

Երբ ամեն բան իւր տեղին պատրաստուեց ու կարգի մտաւ, դաս դաս սեղան նստեցին և Քեօռ-օղլին առաջին բաժակը վեր առնելով երկար ու ձիգ օրհնեց ու նուիրեց նորատի զոյգերի կենացը. միանգամայն բարեմաղթելով, որ երջանիկ, երկարակեաց ու բաղդաւոր լինին։

Քեօռ-օղլու օրինակին հետևեցին բոլոր սեղանակից փեսաւէրները, որոնց ուրախութեան աղաղակները, սար ու ձոր էր թնդացնում։

Մատաղահաս զոյգերը իրանց առանձին շնորհակալիքը յայտնելով մասնաւորապէս նախ Քեօռ-օղլուն—իրանց հայրախնամ բարերարին և ապա ընդհանրապէս հրաւիրեալ և ինքնակոչ մարդկանց բազմութեանը, գլուխ խոնարհացնելով, քաշուեցին իրանց համար պատրաստուած առաձնասենեակը, միանգամայն յանձնելով իրանց քնոյ աստուածուհու առանձին խնամքին...։Իսկ հարսանեաց ուրախութիւնը, ժամանակի սովորութեան համեմատ, տևեց քառասուն օր և քառասուն գիշեր... Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին։

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
14	— 14	տէքը	տէգը
»	— 23	Թէհրան	Ռեհան
16	— 4	Մուսսաֆայ	Մուստաֆայ
23	— 8	րոլորովին	բոլորովին
24	— 21	Քեօռ-օղլիններում է	Քեօռ-օղլին ներում է
25	— 15	Մուսսաֆայ	Մուստաֆայ
29	— 23	բարձրագոյն	բարձրաձայն
30	— 7	բաձրագոյն	բարձրագոյն
36	— 24	այդին չէր	այդ ինչէր
»	— 26	գլեցդ	գլխեցդ
44	— 26	րո	որ
47	— 26	խորքերու	խորքերում
48	— 24	յանգնութիւն	յանդգնութիւն
50	— 22	մի մի	մի
51	— 22	պատուհարեց	պատահարից
52	— 28	քողքողում էր	փողփողում էր
»	— »	շալգօտին	շալ գօտին
53	— 18	մարգիք	մարդիք
57	— 9	անէլ	անել
60	— 20	րանալ	բանալ
61	— 27	վիշտ	վիշտը
73	— 26	Դոնա-խասումը	Դոնա-խանումը
76	— 14	շուտափոթ	շուտափոյթ
81	— 18	»	ձեր սիրոյ

87 — 5	պարուակով	պատրուակով
91 — 22	Կալիֆսէի	Կալիփսէի
92 — 10	էիր	էին
» — 18	մէր	մէջ
94 — 15	դրուԹրան	դրուԹեան
» — 29	Այո	Այս
95 — 27	վիր	վեր
97 — 21	անշտրժ	անշարժ
98 — 2	ողջալուց	ողջալուց
» — 21	գուրս	գուրս
99 — 5	կրկար	երկար
100 — 19	դայլայլնով	դայլայլներով
103 — 26	Զալիբէլը	Չամլիբէլը
104 — 26	գուրս	գուրս

[illegible] 33 [illegible]

ԹԱՐԳՄԱՆՉԻ ՄԻԽԱ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1, ԱՆՁԱՅՆ ԿԻԹԱՌ *(սպառուած է)*

ԲՈԼՈՐՈՎԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐ. ՀԱՄԱՐ

2, ՀԱՍԱՆ ՓԱՇԱՅ *եւ* } *Քեօռ-օղլու հեքեաթներից.*
3, ԴԱՄՈՒՐՋՕՂԼԻ }

4, ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ.



Գումարով գնողներին 20% զիջում կլինի

Ցանկացողները պէտք է դիմեն Ալէքսանդրապոլ, թարգմանչին,
կամ Պ. Աղէք. Մխիթարեանցի գրավաճառանոցը։

ԳԱԹ
№ 10812